

Anmahner. Daniel Varowzan : Keank'ë ew Gorçë

Source gallica.bnf.fr / Bibliothèque nationale de France

Esadjanian, Levon (1890-1935). Anmahner. Daniel Varowzan : Keank'ë ew Gorçë. 1919.

1/ Les contenus accessibles sur le site Gallica sont pour la plupart des reproductions numériques d'oeuvres tombées dans le domaine public provenant des collections de la BnF. Leur réutilisation s'inscrit dans le cadre de la loi n°78-753 du 17 juillet 1978 :

*La réutilisation non commerciale de ces contenus est libre et gratuite dans le respect de la législation en vigueur et notamment du maintien de la mention de source.

*La réutilisation commerciale de ces contenus est payante et fait l'objet d'une licence. Est entendue par réutilisation commerciale la revente de contenus sous forme de produits élaborés ou de fourniture de service.

Cliquer [ici pour accéder aux tarifs et à la licence](#)

2/ Les contenus de Gallica sont la propriété de la BnF au sens de l'article L.2112-1 du code général de la propriété des personnes publiques.

3/ Quelques contenus sont soumis à un régime de réutilisation particulier. Il s'agit :

*des reproductions de documents protégés par un droit d'auteur appartenant à un tiers. Ces documents ne peuvent être réutilisés, sauf dans le cadre de la copie privée, sans l'autorisation préalable du titulaire des droits.

*des reproductions de documents conservés dans les bibliothèques ou autres institutions partenaires. Ceux-ci sont signalés par la mention Source gallica.BnF.fr / Bibliothèque municipale de ... (ou autre partenaire). L'utilisateur est invité à s'informer auprès de ces bibliothèques de leurs conditions de réutilisation.

4/ Gallica constitue une base de données, dont la BnF est le producteur, protégée au sens des articles L341-1 et suivants du code de la propriété intellectuelle.

5/ Les présentes conditions d'utilisation des contenus de Gallica sont régies par la loi française. En cas de réutilisation prévue dans un autre pays, il appartient à chaque utilisateur de vérifier la conformité de son projet avec le droit de ce pays.

6/ L'utilisateur s'engage à respecter les présentes conditions d'utilisation ainsi que la législation en vigueur, notamment en matière de propriété intellectuelle. En cas de non respect de ces dispositions, il est notamment passible d'une amende prévue par la loi du 17 juillet 1978.

7/ Pour obtenir un document de Gallica en haute définition, contacter reutilisation@bnf.fr.

Կրթութեան նախարարութեան օրինակով հրատարակուած
Բրոք. Տրոստենց. Տէր Զարգարեան

Տրոստենց

ԱՆՄԱՅՆԵՐ



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(ԿԵԱՆՔԸ ԵՒ ԳՈՐԾԸ)

Գ Ր Ե Ց

ԼԵԻՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ

1919

*Հրատարակողը պատրաստված է լինելու յոթանասուներեք
հոգի, ընդհանուր ԱՄՆ շահագրգռված*

ԳՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Արտատպագրված է 20-57

1920 Սեպտեմբեր

Կ. Կոնստանդնուպոլիս



Կոնստանդնուպոլիս

ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

(ԿԵԱՆՔՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾԸ)

62833

Գ Ր Ե Ց

ԼԵՒՈՆ ԷՍԱՃԱՆԵԱՆ



1919

2008-129965

109



ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Ն Ա Ն Ա Տ Ա Կ Ը

Ա.

Հայ մայրերը ծնա՛ն ծնա՛ն, ծնելէն իրենց արգանդը մաշեցաւ բայց մայրական գիրկերը դարձեալ դասուարկ մնացին, — Կը գրէ, կ'ողբայ և կ'արտասուէ Ահարոնեան, մեր գրականութեան թուիս Արամազդը: Կ'իշխան բանաստեղծները դիւցազներու ճամբուն վրայ, անոնց ոսկորներուն մէջ աստուածային ի՛նչ շունչ մը կայ որ կը դատէ մահկանացուներէն: Կը փչէ համաշխարհային պատերազմին խորշակը: Հայ ծաղկեալ գաւառներու գլխատումէն առաջ հարկ էր գլխատել հայ գրականութիւնը: Հայութիւնը երկաթէ հսկայ ցանցի մը մէջ՝ տակաւ կը յանձնէ իր մտքի ծաղիկները տիպերական խորշակին: Անողոք է հողը, կ'աւլէ մայր Հայրենիքը որ մէկ օրէն միւսը Եզեկելեան անհուն դաշտի մը կը վերածէ:

Աքսորը, բանտը և շղթան կը մարին մեր մտքի Ջահերը: Մութ է հայ աշխարհը, մթութեան մէջ հօտերն աւելի շուտ սպանդարան կը դիմեն:

Աքսորի աւազները — արաբական անապատները — կը խմեն մուսուրդ հայութեան վերջին արեան կաթիլը:

Տուամներուն տաւաք աքսորուած հայ մտքին նահատակութիւնն է տաճկական դաւառին մէջ: Նախ թանկադին պատանդներ էին Թալաղեան դահլիճ դահլիճին կողմէ, հիմա արդէն ողջակէզներ: Թուրք մտաւորականութիւնը որ այնքան հիացումներ յայտնած էր ատենին իր մամուլին մէջ հայ գրական դէմքերուն՝ լուռ կը մնար:

Կը մարէին անոնք մէկիկ մէկիկ եղերական Ջահերու

նման : Իր անքտորավայրին մէջ մեծ բանաստեղծին նահատակութիւնը դառնօրէն և անմխիթար կը խոցէ , կը բզբտէ ամէն հայու սիրտը , Հայութիւնը ի՞նչպէս տոկայ այս վշտին : Ի՞նչպէս չափել ցաւին մեծութիւնը , ցաւը հսկայական և անմոռանալի : Աշխարհաստան հայ մեծ կոտորածին առաջին զոհերէն է Վարուժան մեր թանկագին մտքի զոհերուն հետ : Մտքին համար մահ չկայ , Բանաստեղծներն անխոցելի են Դիւցազներուն նման . — « Բերթողները Դիւցազներուն թարգմաններն են » Հոմերոսի քաջ յայտնութեամբ : Միտքը չունի հայրենիք , հայրենիքներն անոր հայրենիք և ազգերն անոր ազգերն են : Արուեստի ծիրանին ոչ մէկ ատեն կրնայ չքացուիլ : Սեւ ձեռքեր , ի՞նչպէս յանդգնեցան մօտենալ նուիրական ծիրանիին , անմահ Արուեստին :

Որբացաւ հայ գրականութիւնը , սուգ հազաւ հանճարեղ և արուեստով անկախ Քնարը Դանիէլ Վարուժանի , յայտնուած՝ հայ գրական հորիզոնին վրայ տեախի մը պէս :

Հելլէն և Թուրք պատերազմին՝ անճիկ մտաւորականը կ'երգէր . — « մեր Մահիկը ձեր Լուսրնիթագը կը յաղթահարէ » : Նոր ընդհ. պատերազմին՝ հին երգը դասական ոճրի մը գոյափոխուած՝ հնչեց աշխարհի վրայ խաչին և մահիկին կռիւր : Զորերէն մինչեւ անապատները վազեց արիւնը , այնքան յորդահոս որ իր մէջ պիտի խղղէր հայութեան գոյութիւնը : Ոճրագործը դանակին տեղ ընտրեց կացինը , որովհետեւ ծառերը անով միայն կ'անճիտուէին :

Հայ գաւառները մահուան դատապարտուած՝ տուին իրենց թանկագին զոհերը որ ինկան կտրուած մայրիներուն նման , ինչպէս պիտի երգեր պատմագիր ոսկի Եղիշէն :

Խաչեալը կուտայ իր արիւնը որ Խաչը բարձրանայ , բանաստեղծէն գեր ի վեր կը մնայ իր նահատակութիւնը : Ազգին մնացորդ ծաղիկ երիտասարդութիւնը իր արուեստէն վեր կը պահէ իր սուգն ու վիշտը :

Վարուժան աքտորավայրին մէջ անգամ անբաժան մնաց թուղթէն , գրիչէն : Կ'ըսեն թէ Հոմերոս կը կարդար , հոմե-

րական մահերուն մեծ արուեստագիրքը: Աքսորին մէջ իր Բնարը չորս ծաղիկներ բացաւ, — չորս քերթուածներ, զոր պահեց սրտին վրայ: Իր աքսորակից ընկերները որ վերջին կարգադրութեամբ փրկուած էին՝ թախանձեցին իրեն, փրկելու համար գոնէ իր չորս ծաղիկները: Վսեմ մշակը չի տուաւ զանոնք, անծաղիկ անբառունակ պիտի մեռնէր՝ զէթ իր նահատակի անծանօթ հողակոյտին վրայ բացուէին անոնք չորս վարդերու պէս: Հասաւ վայրկեանը ողջակիղման, առին տարին Երազողը իր աքսորավայրէն, ի զուրկ՝ ըսէին աքսորակիցները:

— Ապահով եղիր որ անվտանգ որոշած տեղդ պիտի հասնիս:

— Դուք ալ ապահով եղէք որ ազգիս ճակատագիրը երազելով պիտի մեռնիմ:

Բանաստեղծին վերջին խօսքը իր վսեմ նահատակութեան հետ նոյնացաւ: Դրօշահամբո՛յր իր վկայարանին . . . :

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ը

Բ.

Երբ յիսուն օրեր հետիտան և շղթայակապ Պոլսէն մինչև աքսորավայրս՝ Եօղկատ ժամանեցի, դժոխային կարճատեւ բանտարկութիւնէ մը յետոյ այլևս թոյլատրուած էր ինծի շրջագայիլ քաղաքը, պայմանադրական անձուկ շրջանակի մէջ, հայ թաղերու յարաբերութիւնէն խիստ արգելքով պրկուած, արգոսեան հսկողութեան մը տակ: Յուսահատ և ընկճուած կը տատանէի քան կը շրջէի, կառափնատը դեռ կը մնար կառավարական պողոտային վրայ, և բանտերուն

բանտը՝ Եօզկատի օձերու կաղաղը՝ քիչ մը անդին կ'ահաբեկէր զիս: Մայթին վրայ առաջին օրը ոտնակոխ մարդրիտ մը տեսայ որ կը փալփէր իր մէջ խտացնելու համար հայ հեթանոսներու իմացական և խորապէս դեղեցիկ Արեւին կայծերը: Գրքէ մը բրցուած էջ մ'էր ան, Վարուժանի մէկ աննման քերթուածը: Տեսլտհար վեր առի զայն, ինչպէս զիտուածը վեր պիտի հանէր ովկէանին խորը պահուած մարդարիտը: Որքան յանկուցիչ նոյնքան յուզիչ էր պարագան, գլխատուած հայ գաւառներուն մէջ հայ մատեաններն ալ հուրիներու պէս յափշտակուած էին անճիտող ձեռքերէ: Անոր սիրտը ազգին կրակովը տոչորուն՝ կ'այրէր մագաղաթին վրայ, հոն վարը, աքսորավայրիս մէկ անկիւնը տարածական: Երբեք այսքան եղերական հայրենաբաղձութիւն մը:

Հայ ողբերգութեան վերջին Երգիչը դասուեցաւ ստեղծագործ Բանաստեղծներու շարքին: Մօղայիզներու անձրեւին մէջ թրթռացող տաղանդ որ եկաւ մեր աղկաղկ գրականութիւնը օժտել կոյս և անկոխ դետիններով: Գրական հոյակապ գիւտերու հոծ ի հոծ և ապշեցուցիչ սողանցքին տակ քանքարաւոր Բանաստեղծին թանկագին սիրտը կը պոռթկայ, կը փլչի: Վարպետ քերթող որ գիտէ բարձրանալ ճամնախոնարհ եղիճէն մինչեւ կաղնիներու կատարը՝ մեր յնարային բացատրութեամբ: Իտալիա իր գերութեան օրերուն ծնաւ իր բանաստեղծ գաւաղը՝ Լէօբարտին, և հայր ծնաւ իր Վարուժանը: Մին պիտի ըսէր իր ազգակիցներուն պէս. — «Գեղեցիկ է Իտալիան, զմայլելի իր օդն ու կլիման, բայց գերութիւնը կ'ապականէ անոր մթնոլորտը»: — Միւսը պիտի ըսէր՝ «Գեղեցիկ է Հայաստան, զմայլելի իր կոյս կատարները, բայց գերութիւնը կ'ապականէ անոր մթնոլորտը, կ'ամպոտէ կոյս կապոյտը»:

Իր ոճը հելլէն արձաններու ձիւնաթոյր մաքրութեամբ այնքան տիրական փայլեցաւ իր կոյս էջերուն մէջ, սովորական հայերէնը չէր իրենը, խորունկ և նայն խորունկութեան չափ յստակ: Ալեկօծ ծովը քիչ անգամ ցոյց կուտայ

իր յատակը, Բանաստեղծին հոգին հակառակ իր փրփրակո-
հակ փոթորկին՝ ցոյց կուտար իր գրական յատակը աննման
յատակութեամբ: Չեն ու խորքը թեւ թեւի պարեցին հայ
վիրաւոր կեանքին շուրջ, հետեւապէս պիտի ապրին իր գոր-
ծերը մշտակայ թարմութեամբ: Արուեստագէտը հոն կիրար-
կեց այնպիսի թէքնիք մը որ յատկանիչն է արդիականնե-
րուն, արդի բանաստեղծը նախ ատով կը զանազանուի հինե-
րէն: Դանակի պէս կտրուած բանավարական բառեր, բառեր,
բառեր, ոչ աւելի ոչ պակաս, իրար լրացնող, հայաստանի
որդան կարմրով ներկուած: Իր տաղաչափութիւնը ձեւա-
պաշտութիւն մը չէ, յանգերը իր սրտէն կը փրթին, կը թա-
ւալին այնքան բնական ինչպէս հայ դաշնակին վերջին ար-
ձագանգները որ ծնունդ են առաջին ձայներուն:

Արդի հայ աշխարհիկ գրականութիւնը հայ Ոսկեդարէն
աւելի ծաղկեալ եղաւ, Դուրեան Սրբադան չէր սխալած իր
այս յայտնութեան մէջ, գրաբարագէտ Գուրգէնի յորելեանին
առթիւ: Վարուժանի երկերը անկիւնաքարե՛րն են մեր աշ-
խարհիկ կոյս գրականութեան: Մերթ արուեստով հեթանոս,
մերթ քրիստոնեայ է, բայց միշտ մարդկային: Իր պակասը
մեր մէջ կը բանայ խոշոր բաց մը: Ամայի է տաճարը հայ
գրականութեան, մեռաւ Քրմապետը Վարուժան, անմահ
է Քրմապետը, կեցցէ Քրմապետը: Ամէն ժամանակի համար
իր գրական դործերուն ընդերքէն մեր անձկարօտ էութեան
պիտի հեղու իր ներշնչման դինին որ պիտի եռայ անմեղ-
ներու արեան պէս:

ԻՐ ԱՐՈՒԵՍԸ

Գ.

Իր բանաստեղծութիւնը Կրօնք մըն է որ ճշմարտութիւններ կը ծնի, տաղերը իր Կրօնքին դաւանանքներն են: Իր գրականութեան մէջ մէկ մեռ կայ՝ արուեստը, հեթանոտութէ քրիստոնեայ՝ կը բղխի անկախօրէն: Կրօնքները տեւողին դարերով, արուեստը պիտի տեւէ դարերով, երկուքին յաւերժութեան գիծը նո՛յնն է: Կրօնները չի կործանեցան անոր համար որ արուեստագիտական ձևերով արտայայտուեցան ժողովուրդին մօտ, առանց այդ դրոշմին՝ ծէսեր միայն պիտի ըլլային, ժողովուրդին հաւատքն ու մոլեռանդութիւնը չէր որ պահեց կրօնին գոյութիւնը, արուեստը իր ծիրանիին մէջ առնելով դայն կրցաւ ամէն ժանգէ զերծ պահել: Գրականութիւնը — իր կարգին կրօն մը — մեռեալ տառ պիտի դառնար առանց արուեստի, ընթերցասէրներու խիտ շարքերը չէին որ պիտի վրկէին դայն:

Պատերազմները, հսկայ յաղթանակներն ու պարտութիւնները Կրօնքներուն նման կը յաւերժանան լոկ արուեստով: Երբեմնի մարզերուն ձայները այնքան յստակ չեն հնչեր մեզի որքան ձայները անոր յայտնաբերած արուեստին: Փամանակի հոլովումներէն մեզի կ'ուզայ տաղ մը, ուրկէ միայն կը լսենք մարզերուն արձագանգը: Իր Եփրեմ քերթուածը դուրանն է այս մտածումներուն: Արուեստը յղացումն է լոկ կարգ մը եղանակներով, յաջող մեղեդին համարժէք է յաջող սազմերգին:

Իր գրականութիւնն և արուեստը հայկական դրոշմով

առհաւութիւններ են: Սեռերը մէկէ աւելի ծաղիկներ կը բա-
 նան իր Գնարին վրայ: Բայց իր արուեստը առհաւորէն ցե-
 դային, ժառանգական իմացականութեամբ օժուած է: Ամէն
 ազգի գրական նկարագիրը այն ատեն աւելի իսկական և
 շղնուական է երբ հարազատութեան ոգին ունի, այսպէս
 Ռուս գրիչներու մէջ հարկ է փնտռել Սլաւի ոգին, Ֆրանս-
 սացիին մէջ՝ Կոլուական և Լատին ոգին, որ մատենագրա-
 կան գրոշմը կը ցոլացնեն, այս նկարագիրը հազուագիւտ է
 սակայն ամէն երկրի գրականութեան մէջ: Ռուսը միթէ կը
 յարգէ՞ Սլաւական ոգին և Ֆրանսացին՝ Լատինականն ու
 Կոլուականը, Հայը՝ ցեղականը, նոյն իսկ աշխարհի սիրեր-
 գութիւններուն մէջ: Նոպէլի գրական արդանակին արժանա-
 ցող Հնդիկ բանաստեղծ Բայինտրանաթ Թակորի էջերուն մէջ
 աւելի Հայնէական քան Հնդկական շունչ կայ: Հիւսիսի
 գրականութեան մէջ ձուլուած հոգի մը: Վարուժանի ար-
 ուեստը ազգային տարազը կը հազնի: Բանաստեղծը ար-
 ուեստի ամէն աղբիւրներէն լիայագ կ'ըմպէ, ի ձեռին իր
 սեփական բաժակը ունի: Իր արուեստը մասնաւորա-
 պէս անտիպ էջեր կը բանի: Կտան ու ներկը չեն բաւեր
 միայն, անոնց իտէալին յաւերժութիւնը պէտք է: Գիւտերու
 գերի ըլլալ՝ ինքնասպանութիւն մըն է, գիւտերը իրեն գե-
 րի ընել՝ ճշմարիտ բանաստեղծութիւն մը: Վարուժան կտա-
 ւին ու ներկին մէջ կը փրկէ իր երանգապնակը իտէալով
 միայն: Իր գիւտերը Հեփեստոսի ձուլարանէն լեցուն, խիտ
 առ խիտ կըլզան որպէս զի իտէալին հպատակին:

Բանաստեղծը կ'ընտրէ արտայայտելու երկու ձև, — տա-
 դաչափուած և ազատտողեան քերթողութիւնը: Տադաչափու-
 թիւնը ըստ իր արուեստին կը նմանի այն մանկան որ կա-
 տարեալ անդամներով աշխարհ կուգայ, բանաստեղծին զա-
 ւակն է: Հոմերոս թուղթին վրայ բանեցաւ իր երկը այնպէս՝
 ինչպէս Փիդիաս պիտի բանէր մարմարին վրայ: Աղատտող-
 եան տադաչափութիւնը ապրելու իրաւունք չունի, բացա-
 սութիւններ կան. ահա Վէոհառնի ազատտողեանը որ տա-

ղաչափուածէն չի տարրերիր, Վարուժան այդ ուղղութեամբ կուտայ իր ազատատողեանը: Նոր գրողներու համար անպայման տաղաչափութիւնը պարտադրելն է, տեսակ մը քօնթրօլ անոնց աւելորդաբանութիւններուն, պերլեթումներուն: Դեռ շատ բառ կայ կերտելիք, դեռ շատ բան կայ գրելիք կը ձայնէր Եղիա: Ո՞վ պիտի կերտէ այս բառերը և ո՞վ պիտի գրէ այս նոր բաները, անտիպ գրականութիւնը: Այն օրէն ի վեր հայ նոր արուեստը այդ ուղղութեամբ գործեր տուաւ արդէն: Վարուժան, կերպով մը կ'արդարացնէ Եղիայի պահանջքը մեր նոր գրականութեան փայլուն աստղերուն հետ: Ընտրողական ոգին, — շատ մը ծաղիկներու մէջէն մէկ հատ ընտրելու պարագան կը շեշտուի ինքնատպօրէն: Գրականութիւնը դառուած իմացականութիւնն է իր արուեստով:

Արուեստի յանդգնութիւններով կը մրրկի, կը հատնի, կը պշնու, կը հմայէ բայց կը մնայ միշտ բնական (նօրմալ): Իր կատարեալը՝ արուեստով և միտքով լծորդուած՝ կը սլաակերանայ Գեղեցկութեան արձանը սօնէին մէջ որուն քերթողը աւելի արժէք կուտայ բացատրողական նամակով: Համբաւաւոր Անտալուզեան երգերուն մէկ կատարելագործուած վերջին նմուշն է կարծես Ալհամպրայի կամարներուն տակ հընչուած:

Գ Ե Ղ Ե Յ Կ Ո Ւ Յ Ե Ա Ն Ա Ր Ջ Ա Ն Ը

Կ'ուզեմ ըլլայ քու մարմարիտներդ պեղուած
Ոլիմպոսի ամէնէն խոր արգանդէն.
Եւ իմ մուրճիս տակ ըզգենու հրրեղէն
Միս մը կընոջ, լոյսով, տենդով սըրարբած:

Աչքերդ ըլլան վիհեր՝ ուր մարդ երբ սուզի
Յաւէրժին մէջ անմահացած ըզգայ զինք,
Գիծերդ անեղծ ըլլան, ըլլան քու ըստինք
Իաշնակութիւն մ'ուր կենսահիւթը յուզի:

Մերկ ըլլաս դու բանաստեղծի մ'հոգւոյն պէս.

Եւ հեթանոս այդ մերկութեանը ներքեւ
Տառապի մարդն, ու չը կըրնայ դըպչիլ քեզ:

Թէ հարկ ըլլայ զոհ մը ընել քեզ պարզեւ
Բազինիդ ես պիտի ուզեմ մորթըւիլ՝
Որպէս զի կուճդ ըմպէ արեանս հուսկ կաթիլ:

Կը կարդաս զայն որպէս եւրոպական լաւագոյն հեղի-
նակ: Արուեստն այսպէս նոր ծաղիկներ կը բանայ իր
Քնարին վրայ, տակաւին երիտասարդ բայց դարագլուխ մը
մեր մէջ: Իր պատկերները կը թափին արեւադարձային առատ
ծաղիկներուն պէս: Քնարը որքան կը խորհի նոյնքան
կ'երգէ: Տրամաբանութիւններու արուեստակեալ ցրտու-
թիւններ չեն իրենք: Կը վազէ, կը թռի քերթուածը երա-
ժշտական թեւերով: Իր խորհրդապաշտութիւնը չի շղթայեր
քեզ ցանցերուն մէջ, զայն կը կարդաս դասական լաւագոյն
էջերու բիւրեղ տպաւորութեամբ: Իր քերթուածները հայ-
րենի լեռնաժայռերու և պախերու խորշին մէջ Հայաստանի
ժիր մեղուներէն պատրաստուած անմատոյց մեղրին կը նմա-
նի: Մօզայիգներու անձրեւ մըն է իր Վեներիկ քերթուածը,
իւր արուեստին յստակ և ծաղկեալ մէկ նմուշը: Եւրոպական
բանաստեղծներ ևս ոտանաւորով նկարագրած են ինքնատիպ
Վենետիկը, որուն սիլուէզը իրեն կը մագնիսէ Երազողները:
Վարուժանի Վեներիկը լաւագոյնն է անոնց մէջ, նկարագրա-
կան էջ մը: Կը կարդաս իր Հայրենի Լեռները առհաւական
յափշտակութեամբ, մանաւանդ իր Հովիւը, լեզուի և մտքի
անեկրորդ քերթուածը իր սեռին մէջ: Իր իսկական արուեստն
է, իր մտքին դիւցազնավէպը: Հոն լեզուն պարզին վսեմը,
հայերէնին կոչումն է:

Ազգը ժառանգեց իր եղերական մահէն ետք իր քեր-
թուածները իբրեւ Պանթէոնի վարդեր: Իր արուեստը մեր
լճացած դրականութեան մէջ համեստ յաղթանակներ տարաւ:



Ի Ր Լ Ե Զ Ո Ւ Ն



Գ.

Իր լեզուն արուեստագիտական (թէքնիք) լեզուն է, գրաբարի ակունքներէն նուիրագործուող գրական աշխարհաբարը յետսամուտ տուեալներով: Հայերէնը բանաստեղծին համար զմուտս մը, հայկաբանին համար աւանդ մը: Աւանդն անձեռնմխելի է, մինչդեռ զմուտը զանազան վիճակներ կը ստանայ: Գրողը հայկաբաններ չի հետապնդեր բայց հայկաբանը ստիպուած է հետապնդել զինքը իր շարժումներուն մէջ: Արսէն Բագրատունիի և Ալիշանի շունչին տակ սնած՝ Վարուժան կուտայ ճոխ բառարան մը իր գրականութեան մէջ: Բառամուլ չէ, բառերը կեանքեր և աղաղակներ ունին, ինչպէս ձայները տուամ: Հեթանոսական դրուագներու համար լեզուն զրահ կը հագնի: Այսօր իրենց սխալը կը դարձանեն անոնք որ հին ասեն գրաբարի և աշխարհաբարի բանավէճ մը յարուցին:

Անկարելի էր յուսալ որ մինչեւ այսօր այս միակողմանի ըմբռնումը տեւեր տակաւին: Գեղարուեստն ու գրականութիւնը արտայայտելու համար երկու մայր լեզուներուն փոխն ի փոխ տուիքները որչափ բարեբար են:

Հնուիւններու յատուկ բառեր մեր գրաբարէն կուզան վեհ դասականութեամբ, Բանաստեղծը դիմեր է անոնց: Իրաւամբ կան ցանցաօրէն մեռեալ բառեր որ կը ձուլուին իր այնքան վեհ բառարանին մէջ: Ոճը մարգուն մէջ և փոխաբերաբար՝ անձը կը յատկանչէ Պիւ.Փօնի հրաշալի վարդապետութեամբ: Մեր Գողթան գաւառին հաղներգութիւն-

ները պարզապէս, առանձնապատուկ լեզուի մը բացարձակ դրոշմով միայն ժառանգած են իրենց նուիրական անունը: Լեզուի դերը կը մկրտէ սեռերը: Մեր բանաստեղծը ազնուապետական գրականութեան և ոճին հետ սերտօրէն աղերսունի, հազուադիպօրէն միայն գուսաներգական առումներու կը մտերմանայ: Ռուսահայերն անգամ չպիտի պարտադրէին իրեն ժողովրդական լեզուն: Մեր մէջ արդարև ժողովրդական ինքնուրոյն լեզու գոյութիւն չունի, այլ կան զանազան ժողովրդական լեզուներ, որ կ'անջատուին իրարմէ հեռաւոր գիծերով: Բանաստեղծին դաւանանքն էր այս գոր կը յեղյեզէր գրական հաւաքոյթներու առթիւ: Գրական լեզուն Փոքր Հայքի ազդեցութեամբ և գրաբարի աստղծներով լեզուն է, հոլովումներէն մաքրագոր ծուած, ըսա իր դաւանանքին:

Ժողովրդագեղ գրականութեան մէջ կիրարկուած լեզուն շատ անգամ ցեղային անբացատրելի տաք ասութիւններէ կը բաղկանայ, թէպէտ իրաւ է որ կան ժողովրդական լեզուներ բայց անոնք հիմնապէս հիւրնկալուած չեն մայր գրականութեան մէջ, համաշխարհային արուեստին զգալի պահանջներուն անբաւարար գալով: Ստոյգ է որ այս ամէնուն մօտ միջին ճամբայ մը ընտրել բանաւոր պիտի թուի, սակայն Վարուժան անկախօրէն կը շարժի, արուեստն անկախ է: Քանի որ իր գրականութեան դրոշմը գլխաւորաբար ազնուապետական է, հետևապէս անոր բարդ նրբութիւններուն Քաթիպայի բրօքականտիսդ հասարակ լեզուն պիտի չկրնար պատշաճեցնել: Արուեստ բաւը սոսկական յանկերգ մը չէ, յղացումն իսկ է: Սիրային նիւթերուն՝ սիրային, գիւցազնականներուն՝ գիւցազնական ոճեր տալու պարագան է լեզուական արուեստը ինչ որ յղացումն է ինքնին: Հետևապէս արուեստը յղացումէն առաջ եկած վայելչութիւնն է: Իր լեզուն զարդացման շրջաններ կը բոլորէ, իր հեթանոսականը իր փարթամ ծաղկեալ ոճին տիրապետումն է, նմուշ մը գոր կ'առնեմ իր քերթողագրքին սրտէն:

Նոր օրերու հեթանոս գրականութեան նախակարապետը

բնականաբար նախակարապետն է նաև համաժողովն լեզուին : Արդարեւ մեր ժամանակէն անկախ իմացումները հեթանոսական լեզուով ցոլացուած են : Քնարասէրները կրնան շարունակել զայն , անպատճառ Վարուժանի մենաշնորհը չէ : Բանաստեղծը իր դաւանանքը բարձրադասակ պարզած է նաև գրաբարի մասին , յորելեանի մը առթիւ : Նախահայրերու լեզուն գրաբար էր , անոնց նոր երգիչը անտարբեր մը չէր գրաբարին : Հայ լեզուին մէջ նորակերտ բառերու զմայլելի մթերք կայ արդէն ամէն սեռերու համար : Համաշխարհային դասական հին երկերուն հայերէն թարգմանութիւնները նմանորինակ փայլուն համագործիւններ են , Հատին լեզուին դիւրաւարժ , բացառիկ մասնայատկութեան նման , բանասիրութեանց ջախջախիչ փաստերուն համաձայն : Վարուժան այս կալուածին բառերը սլատկերներով կը վառէ : Ինչպէս շատ անգամ Հիւկօի համար բառերը աչքի հարուածներ են , նոյնպէս նաև հայ տաղանդաւոր բանաստեղծին համար որ բարեբաղդաբար իտէալ նկարներու տակ տեղի կուտան :

Ահա ՋԱՐԴԻՆ՝ աղատաստողեան իր քերթուածը աչքի հարուածներով որ սակայն իր սրտի խարոյկներուն վրայ լոյսերու կը փոխարկուի , չի հասկցուած աղգին տեսլագիր կարմիր Կարապի Երգը յօրինելու համար : Իր նահատակութիւնը՝ ջարդերուն ջարդը՝ արիւնլուայ Քերթուածի մը նման կ'արձագանգէ մահուան քունէն նորագարթ հայութեան ամէն խաւերուն մէջ :— Վարուժան . . . , աղգային Քնարի նահատակ որ պիտի հնչեցնէր Արսորին նոր բարբառը : Տակաւին թարմօրէն կը հնչեն իր մասին եղած երբևմի գրական ասուլիաները .— «Կ'արժէ հայերէնը ուսանիլ՝ Վարուժանը կարդալու համար : »

Խ Ո Ր Հ Ո Ղ Ը

Վ Վ Վ Վ Վ Վ

Ե.

Հին Յունաստանի և Հռոմի հանձարները կը վսեմանան սարսափ ազդող պարզութեամբ: Պարզութեան դարազլուխն է ուր մարդ նստած իր ոստանին մէջ կը խորհի անոր մեծութիւնը հոյատեսիլ պարզութեամբ, հոն նոյնն է միտքը թուղթին ու սրբատաշ մարմարին վրայ: Ի՞նչպէս մոռնալ Յսքիլէսի պարզութիւնը ստեղծագործ արուեստին ի խնդիր, — ահա իր թատերախաղը, Պարսիկները, դարերու սրբութեամբ, հոն չկայ սնապարծ հելլէնը, այլ վսեմ պարտեալը որ իտէալներուն դերադոյնը կը համարէ խոստովանելու ազգին պարտութիւնը, — իր գրականութեան իսկական ինքնատուութիւնը: Գրուածք մը որ կարծեցնել պիտի տար սնապարծ քաջութիւններ, կը բերէ պարտութիւններ: Հին Հեթանոս դարերուն խորհողն է, անդամ Աթէնքի Դպրոցին զոր Ռաֆայէլ անմահ պաստառին վրայ կը վրձնէ: Հեթանոսութիւնը վերածնութեան մէջ կը շարունակուի աւելի բարդ, խորհրդաւոր և անխմանալի: Անհատը կը ծառանայ, կ'առիւծանայ, կ'ատողայնանայ: Եւրոպայի մեծ մայրաքաղաքներու քառասյին կեանքն է, ուր խորհողները կը հազնին իմաստասիրութեան բազմածալ ծիրանին: Նոր Եւրոպայի Դպրոցն է Աթէնքի և Հռոմի Դպրոցներէն ետք: Միջին դարու վերադիրներու գրականութիւնը գիւտերու գրականութեան կը փոխարկուի: Արուեստը երբ երեւակայական ըլլալէ կը դադրի՝ կը մեռնի (Օսքար Ուայլտ): Այնքան բարդ է կեանքը, այնքան հոգեկան որ քերթողը կը սափալուի իր կիրքէն, մկանունքէն,

իր էութիւնէն բան մը դնել: Քերթուածներս արիւնովս կը գրեմ պիտի ըսէր հայ քերթողը Նիչէին հետ: Իր ո՛ր Տաշիրան, աշխարհիկ քերթուածը, եւրոպական մայրաքաղաքներու կիրքն է, վերածնութեան հեթանոսականը: Իր Լալագին աւելի խմացական, հռովմէական փիլիսոփայ և հեթանոս կեանքը: Յղի կիներ այդի կը դիմեն ծնելու համար հայրենիքի տշտան զաւակներ: Երկու բնութիւն մէկ միութիւն: Կը խորհի ընտրողապաշտ քերթողը... կը բարձրացնէ կիներ իր Քնարին վրայ, բնութեան գաղտնիքը հողին արգասաւորութեամբ կը նմանցնէ ծոցուր կնոջ, անոր մօտ եթովպուհին, ծառին վրայ, կը թօթուէ խնձորենին: Լալագի՝ արգասաւորած՝ իր դիմաց կը գտնէ նոյնքան արգասաւոր մայր հողը իր բուսականութեամբ, մայր հայրենիքն է, հեթանոս այդին: Մինչև հօս կիներն է որ կը բարձրանայ, և որպէս զի հայ արուեստագէտ քերթողը Արուեստը ստեղծէ՝ կը համբուրէ եթովպուհին, անոր համբոյրին մէջ սպաննելու համար Լալագէն որ կ'արտասուէ հիմա իր աշուններուն վրայ: Հսոմի կեանքն ու հեթանոսական փիլիսոփայ հայեցակէսն է: Խորհողը իր մուտքին հետ ելք մը ունի: Վէպերուն պէս քերթուածներն ալ երկու թելեր ունին — առաջին և վերջին բառը —, խորհողը առաջին բառը ծնած ատեն գիտէ թէ վերջինը ուր պիտի յանգի: Առհաւօրէն խորհող բանաստեղծն է Մեռած Աստուածներուն նուիրուած, կը պանծայ իր սուգին մտածումը: Մայր Հայրենիքի ամայութիւնները քնարական մորմոքներ կը ծնին: Մեռան երբեմնի աստուածները որ բնակեցան հողիներու մէջ. — կեանքի և Գեղեցկութեան խորաններ: Ողիմպական շնորհով կը համախմբէ զանոնք մէկ ոտանաւորի բազնին վրայ, պանթէոնի անկիւնաքար մը կերտելով իր հատորին: Միսթիք ու մանաւանդ խորհող մըն է զարձեւալ դեպի աղբիւրը շոյսիկ քերթողական գոհարին տակ: Անխմանայի զգացումներ կը մեկնարանէ ճարտար անտիպ ու ցոլացիկ, խորհողը նախ մարմնացումն է անկեղծութեան: Սկեպտիկ մը չէր անշուշտ

երբ այնքան կը տարակուսէր գրողներու անկեծուծեան մասին: Դիտէր թէ ժողովուրդը մանուկ մըն էր ֆրանսական ըմբռնումով, և կրնար ազդուիլ կիրքով ու նախանձով բացուած քննադատական բովերէն, մանաւանդ պանդոյրներու համար շէնքեր փլցնելը աւելի հետաքրքրական էր բընազդօրէն քան կառուցանելու պարադան: Եւ դարձանալի էր երբ կը պարտադրէին իրեն ժողովրդական լեզուն: Կը խորհի քերթողը էական կէտը միայն թէ բանաստեղծները ինչ որ ալ ըլլան լեզուներու հարստութեան և վերանորոգման գործին սատարն ու մեծ ազդակն են:

ԻՐ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

Զ.

Իր փիլիսոփայութիւնը կենսապաշտութիւնն է, բնապաշտ և լաւատես, տեսլագործ հաւատքով դօտեպնդուած դէպի ապագայ Արչալոյսը: Բոլոր անբացատրելի դիմայեղումները կեանքին մէջ կը բոլորին: Կը բարձրանայ իր աղաղակը. —

Ես կ'երգեմ գինին. — Բազիններուն ծիծաղը

Եւ խորաններուն արիւնը:

Դարերու կ'եանքը կ'երգեմ յանուն հանոյքի եւ

Տառապանքի գեղեցկութեան:

Խորհրդասպաշտօրէն չեղաւած իր փիլիսոփայութիւնն է, կենսապարծ ուժին և անոր անմահութեան Երգը: Կեան-

քերը անմահ են, կ'ապրին հնութիւնները: Կենսապաշտութեան աւիւնն է իրենը մօզաքիզներով պսակուած: Պայրընի խորհելակերպով կեանքը հասունցած մահեր ունի, որ իր մէջ կեանքի անմահութիւնն է, ապագայ մեծ կենսապաշտութիւնը: Մեր Քնարը զոհ տալէ առաջ հարկ է որ նախ ինքզինքնիս՝ զոհ տանք կը պատգամէ հայ քերթողը, հասունցած մահերուն ակնարկութեամբ, որովհետեւ հաւատք ունի ապագայ ստեղծագործ կենսապաշտութեան: Վարուժանի մեծապէս տառապող հոգին ազգային խտէալներու գերագրգռումն է, կը տառապի տառապեալներու համար: Իր արւե՞ստը՝ տառապանքի գեղեցկութեան փիլիսոփայոնթիւնը: Տառապիլ արուեստին և գեղեցկութեան համար՝ մարդկութեան տառապիլ է: Ուրիշի՞նն է կեանքը արդէն երբ ան տրուած է մարդուն: Հայ բանաստեղծին ըմբռնումով կեանքը պատարագ մըն է: Սուրբ է խտէալին չարչարանքը, սուրբ է իր մեծութիւնը, վայ անոր որ չի գիտակցիր: Տխեղծներն անարժան են խտէալին վսեմ նահատակութեան: Արեւմուտքի քրիստոնեայ Փաքիր բանաստեղծը Վէուլէն կ'իմաստասիրէ. «ահա մարմինս տանջանքի անարժան»: Կայծակը չիյնար դաճած թուփերու վրայ, ամպը չի թաւալիր տխեղծ մտքերու վրայ: Յիսուաները միայն արժանի են խաչելութեան:

Այսպէս կը գերըմբռնէ հայ քերթողը Մարդը մարդուն մէջ, Մարդը կեանքին հանդէպ: Իր Գերմարդն ունի ինչպէս ունին Նիչէ և ուրիշներ:

Իր Գերմարդը կը տեսնենք Պեզաս քերթուածին մէջ, թեւաւոր երիվարը որ բարձունքէ բարձունք, դահաւանդէ դահաւանդ խտէալներուն խտէալը կը ճարակի: Իր Հեթանոս Երգերուն դասաւորումը որքան խորհրդաւոր նոյնքան իմաստասիրական է: Կը փառաբանէ չի մեռնող սէրը, գեղարուեստական սուեալներով կը նկարագրէ կիներ պատմութեան մէջ: Գողգոթայի ծաղիկները հատորին իմաստասիրական նոր գլուխ մը կը բանան. կը ծնի իր լուսաւոր իմացական Ճանապարհ Խաչի քերթուածը, ուր մարդ Աստուծոյ չափ կը տառապի:

նոր խաչեալը հին խաչեալին կը դիմէ, իր վերքերը կը մրցին անոր վերքերուն հետ: Կը դգուէ տակաւ Մարիամներու բարեպաշտ հոգին, կը ճախրէ հորիզոնէ հորիզոն, մինչև որ արծուային թեւերը կ'ամփոփէ դարավերջիկ բանուորներու Աշխատանոցին ծխաններուն վրայ, երգելու համար կեանքի պայքարը: Իր ճակատը տառապեալներու պրտին վրայ կը հակի, կը ճմլէ նոր ներշնչման ողկոյզներ: Տառապանքի և պայքարի Երրեակով կը յօրինէ իր Միակը՝ կենսապաշտութիւնը: Անզգալարար Վարուժան կ'իյնայ Վէռհառնի Դպրոցին մէջ: Հայ բանաստեղծը կենսապաշտի փիլիսոփայութիւնը կուտայ մէկ հատորով, Վէռհառն՝ մէ'կ քերթուածով: Ո՞վ չէ կարդացեր Եւրոպացի բանաստեղծին Աստղիկը (Վէնիս) համբաւաւոր քերթուածը, ուր սէրը նախապէս կը տիրէր աշխարհի վրայ Աստղիկի անձով, նէ մարդկութեան կուտար իր գարուններն ու իր գերեզմանները, ներս վարսերը արևի մացառուտ մըն էին: Աստղիկ հիմա Մագթաղինէի (Մատլէն) գիւթափոխուեր է ժամանակի սրբազրոււմով: Սիրող աղջիկը աղօթող մըն է: Մագթաղինէ կը մօտենայ բազմաչարչար Յիսուսին: Ժամանակին հետ կ'անցնին Սիրողն ու Աղօթողը, բայց անոնց երկուքին հոգեձոյլ վսեմ միացումով կը ծնի Մարտկուհին, դարուն Յեղափոխուհին: Սիրոյ, տառապանքի և պայքարի Երրեակով կը յօրինէ Վէռհառն իր Միակը՝ կենսապաշտութիւնը, իր փիլիսոփայութեան խարխիւր: Երկուքին կրօնքը նոյնն է, նոյն ճշմարտութեան եզրերով, Արուեստն է որ կ'անջատէ ասոնց հոգիին տռամը: Երկու վեհ ճակատներ մէկ սրտի վրայ կը հակին:

Երիտասարդութեան կենսապաշտ Երգիչը յուսահատութեան և տխրութեան վայրկեաններ ալ կը կրէ որ ախտաւոր հոգիի ճաճանչումներ չեն, տեսակէտով մը կ'ամբողջացնեն իր կենսապաշտ ոգին: Կեանքի անբաժան սէրը նոյն իսկ իր սուգին մէջ կը ծաղկի: Կեանքի կարօտէն խելայեղ անէադումը կը նախընտրէ: Եւ տխրութիւնը մեր բանաստեղծին համար կենսապաշտութեան հետուումն ու ժխտումը չէ:

ընդհակառակն անոր մէկ նրբօրէն շրջուած կարօտախտը, հե-
ռաւոր իմացումով.—

Ո՛չ ոք, ո՛չ ոք զիտէ վիշտն՝
Որ թոքերուս մէջ, զերդ խաշխաշ թունաբեր
Արագօրէն կ'ուռնանայ,
Ո՛չ ոք զիտէ թէ ի՛նչ կերպ
Յուսահատութիւնն օրէ օր զիս մահուան հետ
Կ'ընտելացնէ, թէ կ'երթամ ի՛նչ ճամբայով
Կեանքիս մոխիրն ես իմ ափին մէջ կշռել:

Այսպէս խաղաղ իրիկուն մ'երբ տնակին մէջ
Մայրըս կ'երգէ, ըզբաղած:
Մահուան սաստիկ ծարաւէն՝
Չը դընելով ուշ եզերքիդ բաղեղին՝
Որ զըթութեամբ պիտի կառչի քղանցքիս,
Պիտի նետեմ մարմինս այս խոնջ, կարեւիք
Խորհուրդիդ մէջ: (Լիւռմ)

Աստուածաշունչ գրքին մէջ իր վերքերը խեցիով քե-
րող Յորին «կորիցէ օրն յորում ես ծնայ» ափսոսանքը իր
հոգիի տառամներուն կայծն ու խայծն է: Երկու Յորերն ալ
կեանքէ դառնացած՝ իրենց ահաւոր բաժանումին մէջ արդ-
եօք անոր հանդէպ վերջին պաշտումը չե՞ն դգար: Նոր ար-
ուեստին քննական ողիով՝ միթէ երբայեցի եղերերդուն
մահաբաղձիկ տողերը կեանքին կարօտովը չե՞ն մխար:

Լիւռմի Երդիչը պիտի նմանցնէի այն անձնասպանին որ
ջրհոր նետուելէ առաջ մէյ մը կտին կը դառնայ կեանքին
նայելու համար: Եւ վարուժան մեծապէս կենսասպաշտ մըն է:

Մ Ա Ր Դ Ը

~~~~~

Է.

Իր ինքնատիպ գրականութեան և արուեստին սահմանուած հատորին մէջ անջափօրէն կը բանամ այս էջը, — բանաստեղծին մէկ անձանօթ նկարագիրը որ հեռաւոր գիծերով կը ձուլուի իր մաքրափայլ հոգիին հետ: Հայ բանաստեղծներուն մէջ ամէնէն խոնարհը և ընկերականը պակուցիչ պարզութեամբ: Ամբարտաւան ժէսթերու բոլորովին ներհակ կը ցայտէր ներքին մարդը: Անկեղծ ամէն բանէ աւելի, և ամենաբարին հայ գրողներու մէջ: Ազնուապետական իր տաղանդը տեղի կ'ուտար տոհմիկին առջև, որ կը տիրէր իր մէջ ամէն կերպով: Քնարասէր Հայ օրիորդ մը կը յուզէր ինձի սա հարցը թէ ինչու համար Վարուժան բաղդատարար ամէնքէն քիչ մը աւելի շատ կը սիրուի, աւելի կը յեղեղուի իր անունը, արդեօք տաղանդին համար: — Ոչ ըսի, իր տաղանդը չէր էական պատճառը, այլ իր պակուցիչ խոնարհութիւնը: Նրբեք չէր վշտացուցած մէկը, մանաւանդ մեծին հետ մեծ, պղտիկին հետ պղտիկ ըլլալու իր կենցաղադիտութիւնը կերպով մը օգտակար կը հանդիսանար ամէնուն: Կը բանար անխտիր իր հոգիին դուռները, էօվին խոնարհներուն գանձարանը, մարդը կը նոյնանար այսպէս անմահ քերթողին հետ: Խոնարհութեան, մանաւանդ իր լայն ներողամտութեան մասին առասպելներ կը շրջին, նախանձը չէ՛ր կրծեր իր սիրտը: Հաճոյք էր ստէպ հաղորդուիլ իր ինքնատիպ խօսակցութեան նշխարներէն և բաժնուիլ վաղաժամ գրկեալներու պէս: Ընկերական պատուակալ սե-

դաններու շուրջ տեսնել կ'ուզէր մեզ փոխն ի փոխ : Տ . Չէօկիւրեանի , Ռ . Սևակի կնքահայրութեամբ առաջին սեզանը «կապոյտ թռչունը» կ'անուանուէր , անպարագրելի կարգադրութեամբ՝ Աստուած իմ՝ սա տողերը գրողին ի պատիւ սարքելի : Վարուժան , Սևակ և Չէօկիւրեան՝ խոնարհութեան ծաղիկ անմահները՝ բոլորուեցան հիմա հայրենիքի սուրբ սեղանին շուրջ , միևնոյն զոհով : Իրենց լուսաւոր վկայարանին վրայ կապոյտ թռչունը կ'ողբայ անոնց մէջ մարդը :

## ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆԸ

XXXXXXXXXX

Ը.

Ծնած եմ 1884 ին Սեբաստիոյ մօտ Բրգնիք գիւղը՝ ուր աճած է մանկութիւնս , ուռնիններու տխուր հովանիներուն տակ երազկոտ , կամ գետեզերքներուն վրայ բազերուն քարեր նետելով անառակօրէն : Դեռ հազիւ ես թիթեռնիկներ որսալու հասակին մէջ՝ հայրս պանդխտած է Պոլիս , և մայրս ձմեռնային երկար երեկոները՝ թոնրատունը նստած՝ երևակայութիւնս օրօրած է Ենիշէրիներու և գայլերու պատմութիւններով , երբ Մէյրէզումի հովը կուգար բուխերիկին մէջ մերթ ոռնալ և մերթ դէի ձագի մը նման լալ : — Գիւղին դպրոցը հազիւ սկսած եմ ժամագիրքը կարդալ սորվիլ՝ զիս տարած են Պոլիս 1896 ի կոտորածին օրերուն , ուր հայրս արեան սարսափին մէջ վնասուելէ յուսահատ՝ գտած կմ բանտին մէջ այն տխուր օրերուն ստօրէն ամբաստանուած : — Եր-

կու տարի յաճախած եմ Սազըզ Աղաճիի Մխիթարեան դրպարո-  
ցը՝ յետոյ Քաղկեդոնի վարժարանը՝ ուր երկար ատեն պա-  
տանեկութիւնս եղած է ընդ մէջ Մօտայի ծովակին և Դուր-  
եանի ոսկորներուն յիւսկիւտար: Արձակուրդներս ընդհան-  
րապէս անցած են հօրս քով, Խավեար խանը, Հայ պան-  
դուխտներու հառաչանքներուն և վէրքերուն տրոփիւնին  
ունկընդիր: Հայր Արիստակէս Քասքանտիլեան որ նոյն ա-  
տեն տեսուչ եղած է Քաղկեդոնի վարժարանին, առաջնոր-  
դած է մանկական նախափորձերս՝ սրբագրելով սիրահարական  
ստանաւորներս և յետոյ (1912ին) ուղարկած է զիս վենետիկ,  
Մուրատ Ռափայէլեան, բարեւելու համար իր տեղը Ալիշա-  
ն նուիրական աճիւնը: Մուրատ Ռափայէլեանի մէջ է որ  
ճանչցած եմ յեղափոխութեան ոգին կարդալով ժան ժագ  
Ռուսօն, Թոլստօն և Դրօշակը՝ հազարումէկ դժուարութիւ-  
նով: —Եւ հիմա ահաւասիկ երեք տարի է Պելճիգա կանտի  
համալսարանն եմ (\*) և կ'ուսանիմ քաղաքական և ընկերա-  
կան գիտութիւնները:—

Սարսուռները գրուած են վենետիկ. իսկ հայրենասիրա-  
կան քերթուածներս՝ ուսանողութեանս մէջ: Անոնց մեծա-  
մասնութիւնը կարելի է գտնել Բազմավիպի, Անահիտի, Շի-  
րակի. Ռազմիկի և Հայրենիքի (\*\*), մէջ ցիրուցան: Վենետիկը  
իր Թիցիանօով, և Ֆլանտրը իր վան-Տիգներով: Առաջինին  
գոյները և վերջնոյն բարբարոս իրապաշտութիւնը յօրինած  
են վրձինս՝ զոր սնափառութիւն ունիմ թաթխած ըլլալու  
միմիայն հայրենի հողին որդան կարմիրին մէջ և իր ծո-  
վածուի արեանը: Իսկ բաղձանքս եթէ կ'ուզեն, —բաղձանքս  
է ապագային մարդերուն նուիրել այնպիսի հզօր երգ մը՝ որ  
Հայրենիքը ինծի պէս արարած մը ծնած ըլլալուն գոնէ չի  
զղջայ:

(\*) Յետոյ արդէն ընթացաւարտ եղած:

(\*\*) Ամերիկայի մէջ հրատարակուող Հայրենիք սարբերաթերթը:



## ԱՌՋԻՆԵԿ ՔԵՐԹՈՂԱԳԻՐՔԸ



Թ.

### «ՍԱՐՍՈՒՌՆԵՐ»

Վարուժանի առջինեկ քերթողագիրքն է Սարսուռները, ուր քերթողը կ'սկսի մխալ: Սկսնակի քայլերուն մէջ ունեցած սարսուռներ: Մուրատ Ռափայէլեանի աշակերտութեան օրերուն գրի արած այս տաղիկները դարձանալի կերպով դուրսի կեանքը կը պատկերայնեն, պատկերոտ և իրասրաշտիկ դմայլմամբ: Ուսանողական ընթացքին՝ լաւագոյն երկերու մտերմացած՝ կը բերէ ինքնուրոյն հասունութիւն մը, այս իսկ պատճառաւ նախաչրջանին գրի առած իր տաղիկները երբեք դպրոցականի դրոշմը չեն կրեր, ընդհակառակն անոնք ժառանգական երիզով մը կապուած են իր ապագայ լաւագոյն էջերուն, անոնց հետ շփոթուելու աստիճան: Ահա նմուշներ իր սարսուռներէն.—

Հ Ա Յ Ր , Օ Ր Հ Ն Է

Հայր, ևս կ'երթամ այն ճամբայէն որ հերմակ  
Մազերուդ զիս կը տանի,  
Վաստակարեկ ոսկորներուդ, ծեր սրբախդ  
Եւ սէրերուդ կենդանի...

Բաւական է... աշխատեցար, կրրեցիր.  
Ամէն նետի, հարուածի  
Վահան եղար ինձի համար. հոգիդ է՝  
Որ հոգւոյս մէջ կը յաժի:

Իմ արիւնս է գոյացած քու քրտինքէդ,  
 Յոգնութեանդ ծիլն եմ տրխուր:  
 Հոգիդ, կաղնի՛, երբ կուրծք կուտար մրբիկին՝  
 Ես շուքին տակ, հանգիտ, լուռ

Կը մեծնայի:— Հարկ է հիմա ա՛յ հանգչիս  
 Եւ ես քեզի յաջորդեմ...

Խոնջէ՛նք, խոնջէ՛նք:— Կ՛ուզեմ կըռուիլ,  
 Ելլել կեանքի՛ն, կեանքին դէմ:

Հա՛յր իմ, օրհնէ՛, դողդոջ ձեռքերդ գլխուս գիր  
 Թող մատերէդ կաթի վար

Աղօթքդ՝ եկած հոգւոյդ պայծառ խորանէն:  
 Վերջին ժամն է, օրհնէ՛, հա՛յր:

Իր հետ կ'սկսի աճիլ իր ինքնատպութիւնը, ժառանգական ինքնատպութիւնը, այլեւս իրեն հետ միս և արիւն դարձած: Չէ սխալած իր մայրը երբ իր հարազատին համար կ'ըսէ. «Գլխուն ճաթէն լոյս կը ծաթի»: Լոյսը պիտի տանէր դինք կատարէ կատար, պիտի սուղէր անտես խորշերուն մէջ երբևի՜նի մեր պանդուխտ եղբայրներուն կեանքին քով վառելու համար:—

Ն Ի Ի Ա Ն Դ Է

Ըստուերին մէջ խանի մ'անկիւնը՝ լքուած  
 Թըշուա՛ռ պանդուխտ, հիւանդ է,  
 Խոնաւութիւնն անոր մարմինը շիթ շիթ  
 Գերեզմանին կը նետէ:

Բըժիշկ չունի, եղած դրամն ալ հատաւ.  
 Ցաւը ծանր է. գթութի՛ւն:

Հոն չըկայ սիրտ մ'որ բարութիւնը քամէ  
 Անոր ծարաւ շըրթներուն:

Եւ ինքն իրեն մրտերիմներ կը ստեղծէ  
 Ցընորքներուն մէջ ջերմին.

Իր վիճակին կարեկցող մէկը չունի  
Բացի մամուկը որմին:

Մըթընշաղին մէջ կը մարմրի, կը հիւծի  
Մըթընշաղի մը նման.

Լռութիւնն հոն կարծես դազող մը կ'երկնէ.—  
Օրոցք՝ տունէն գերեզման:

Երիտասարդ է տակաւին, եւ փեսայ,  
Պոլսէն մինչեւ Վան հեռու,  
Հոն՝ հաց կ'ուզեն հարսն ու ծնողք, զինք կ'ուզեն,  
Գեռ շատ շուտ է մեռնելու:

Ան ի՞նչ արիւնն իր քրտինքով կը շահէր...  
Տէ՛ր, ի՞նչ սրտով կը կոտորես  
Թեւն՝ որուն վրայ կը կրթնին մանուկներ  
Եւ ծընողքներ ծիւնագէս:

Դուրսն արեւին, գեփիւռին տակ կ'ուռճանան  
Բախտաւորներն աննիազ  
Սրտին մէջ աստղն աւշի ելքի կը ժպտի.  
Տէ՛ր, զինքն ինչո՞ւ կը մոռնաս:

Այդ բազուկներն աշխատանքի համար են՝  
Ո՛չ մահուան դէմ կռուելու:—  
Բախտը խուցին մէկ անկիւնէն կը խնդայ  
Օծի ժրպտով մ'ահարկու:

Պիտի մեռնի,— խիստ մահացու հիւանդացաւ.  
Եւ պատանքին մէջ երբեք  
Պիտ՝ չըտանի սիրելիի մ'արցունքներն  
Ու սեւ ուխտերն յուսաբեկ:

Պիտի մեռնի.— եւ իր բընիկ լուսնին տակ,  
Հարսը սիրոյ ծարաւով՝  
Պիտի զուր տեղ անոր գալուն ըսպասէ...  
Խեղճ Վանուհի, ապահով



Յոյսի ամէն խոստումներու վայելքին՝  
 Կը ծիծաղիս աստղին հետ.  
 Մինչդեռ կեանքի երկինքին վրայ կը գըծուի  
 Շանթը շողին զուգահետ:

Ո՞րուն համար շուշանն ու վարդ փոխ կուտան  
 Իրենց միացումն այտերուդ.  
 Ի՞նչու Վանայ լիճն աստղերով կը վառի  
 Նախանձելով աչքերուդ:

Ո՞րուն համար հաջադիդ տակ կը պահես  
 Հմրոստանքներն համբոյրին...  
 Վաղն հէգ ծաղիկ, պիտի ճամբորդ մը գուժէ.  
 — «Մէկ աչքը բաց թաղեցին»:

Մէկ աչքը բաց թաղեցին. — Arménisme մըն է, կարճ պատկեր բայց փիլիսոփայութիւն մը ամբողջ: Մեր գրականութիւնը որքան հարուստ է այս կարգի հարազատ ասացուածքներով, Arménismeի նմուշներ, հարազատ զարդերը մայր գրականութեան: Պատկերները որքան ալ նոր որքան ալ ճոխ իսկ ըլլան՝ երբ իտէալի մը հետ կապուած չեն՝ չոր են: Գրական գիւտերը հարկ է որ հեռաւոր կապերով միանան իտէալի մը որոշ յայտնութեան: Մէկ աչքը բաց թաղեցին՝ յուզիչ և կտրուկ պատկեր, Հայաստանի փիլիսոփայութիւնը վաղամեռիկ ծաղիկ երիտասարդութեան հասցէին: Առաջին քայլերուն մէջ արդէն Բանաստեղծը բախտաւոր է իր ինքնատպութեամբ:

## ԻՐ ԵՐԿՐՈՐԴ ՔԵՐԹՈՂԱԳԻՐՔԸ



Ժ.

### ”ՑԵՂԻՆ ՍԻՐՏԸ”

Հայ գրականութեան սրտին վրայ տարիներէ ի վեր ճընշող բռնակալութեան սե թաթը՝ յուլիսեան պատմական որոտումով ջախջախուած՝ Թրքահայերս կը ծանօթանայինք հարազատ տաղանդի մը, ուր կը ծածկուէր Սեբաստացի քնարաւոր մը՝ Գանիէլ Վարուժան։ Դեռ երիտասարդ, այլ կանխահաս յայտնութիւնով հրապարակ կուղայ, աւելի լայնօրէն ծանօթանալով մեղի այն պահուն, երբ իր տաղանդին հասունութիւնը կը նշմարուի։ Արչակ Զօպանեանի քաջահան որակումով՝ սքանչելի տաղանդ մըն է Վարուժան, որուն քերթողի հողին լայնօրէն կը ճախրէ Յեղին Սիրտը ին մէջ։ Մեր Թրքահայ նոր քերթողական գրականութեան վերածնունդի շրջանին սիւներէն մին կը հանդիսանայ ան։

Յղացումներու կնիքը, պատկերներու անլուր դմայլանքը, կշռաւորութեան նոր արուեստը՝ իր անհատականութեան հետ շեշտուած՝ իր ցեղը կը պատկերացնեն։ Այս նորօրինակ քերթողը՝ շայն ինքնասպառփուն մը ունի, ուրկէ իր բնդլայնումները, տաղանդի և թոխքի հետ ներդաշնակութիւնը կը ժառնեն առաջին պատկերութեամբ։ Բանաստեղծութիւնը երկու կարողութիւններ երեւան կը հանէ, Տաղանդ և թոխք։ Վարուժանի տաղերը երկու յատկութիւններուն խառնուրդը ունին։

Անկարելի է իր հատորէն չի վերջիչել «Նեմեսիս»ը, տեսակ մը տիեզերանուագ: Նեմեսիս՝ վրէժի և արդարութեան արձանն է, զոր Վարուժան՝ Միքէլ Անճէլոյի մը հոյաստեղծ քանդակաշինութեամբ կերտեր է, կազմախօսական ճշտապահութեամբ անոր տալով կնոջական գլուխ մը, իրան մը, զօրեղ թևեր ու ծիծեր, ուր «կաթն անոնց մէջ պէտք էր ըլլալ, կամ լոյս՝ սառած, և կամ արծաթ հալըած», «Յոյսի ձէթով լի սուրբի դանկ մը կախուած կ'ըլլար ջանն իր լուսատու»: իր ընտիր մուրճին մէն մի հարուածը քարակոփի մը իսկական մուրճին թնդիւնը կը յիշեցնէ. «Եւ քանդակեց քանդակեց, և քանդակեց քանդակեց»: Կրկներգը, իրաւամբ, ճշմարիտ քանդակագործ մը կը հանէ դէմդ, քանդակագործ մը քովդ նստած իր արձանը կը կերտէ, անոր ոտքերուն տակ քնանալով յոգնաբեկ: Տիեզերանուագը, որով քերթողը կրնայ պարծիլ, թրքահայ վերածնունդի քերթողութեան ազամանդակուռ մանեակ մը կ'աւելցընէ: Եւ որպէս զի մեր գրասէր նոր սերունդը շեղում մըն է իր նախապէս պաշտած միօրինակներու փաղանդէն, կ'արժէ այս օրինակ երկարաշունչ, աշխատուած նուագները արտասանել լուրջ թատերաբեմերէն, միահամուռ ունկնդրութեան մը ի լուր: Իր «Ջարդ»ը այս բաղդին արժանանալով գտաւ արժանի համակրութիւնը հասարակութեան մէջ: Սա փոքր եղերերդն ալ Դիակի Սայր կ'անցընէ, շատ բնական է ան իր խուժուած պատկերին հաղորդականութեան տեսակէտով. —

Իրիկուան դէմ փողոցներէն ամայի  
 Սայլ մը կ'անցնի ճրուրնչելով:  
 Ձի մը աշխէտ զայն կը քաշէ ետեւէն  
 Կ'երթայ գինուոր մը գինով:

Ջարդուածներուն դագաղն է ան՝ որ կ'ուղղուի  
 Գերեզմնատունը հայոց,  
 Արեւն յետին իր շողերով կը սրիռէ  
 Վրբան պատանք մ'ոսկեզօծ:

Ձին նիհար է. հուենձն այդ իր ժա'նտ տէրերուն  
Ան հազիւ հազ կը տանի:  
Ականջներն իր կախած, կարծես խորասոյզ  
Կը մըտմըտայ թէ քանի

Դարեր պէտք են ժամանելու համար հուսկ  
Մարագն հնձուած սուրբերուն...  
Եւ շրջակայ պատերուն պոչն իր տատան  
Կը սըրսկէ մի'շտ, մի'շտ արիւն:

Եւ արիւն է որ կը կաթէ յարաբուխ  
Անիւներուն հեցերէն,  
Սայլն իբրեւ վարդ կըրէր, իբրեւ թէ ըլլար  
Արշալոյսին կառքն հրեղէն:

Հոն են դիերն, իրարու վրայ, որդին մօր  
Դանգուրներով պատանքուած,  
Մին խորած է իր ամբողջ բուննցքը միւսին  
Տար վէրքին մէջ լայնաբաց:

Դեռ ծերունի մը ծընօտով ջարդուփշուր  
Կ'յառէ աչքերն երկընքին,  
Որոնց մէջ սեւ անէծք մ'աղօթք մ'իրարու  
Նոյն վըրէժով կը խառնեն:

Մէկուն կուշտէն աղիք մը վար սահմըռտկած՝  
Սայլին հեղքին կ'առկախի.  
Շո'ւն մ'ետեւէն կուգայ եւ գայն քաշած դուրս  
Լափիլիզելու կը գրադի:

Ոչ ձեւ ունին, կամ ոչ գրչուխ. կը կըրեն  
Հազար տեսակ գէնքի խոց,  
Արդէն իրենց մարմինն եղբայր է հողին.  
Կ'երթան ահա գերեզմրնոց:

Ասոնց վրայ ո'չ որ կուգայ արտասուել,  
Կամ տալ ողջոյնը վերջի. —

Քաղքին լուծեան մէջ արեան հոտը միայն  
Զեփիւռին հետ կը շրջի:

Բայց մութին մէջ պատուհանէ պատուհան  
Ահա մոմեր կը վառին.—

Մամերն են որ զաղտագողի կ'աղօթեն  
Վըրան կարմիր դագաղին:

Եւ այն ատեն պատշգամի մը վըրայ

Կոյս մը կ'ելլէ գեղանի,

Ու կը նետէ արտասուածոր բուռ մը վարդ

Սայլին վըրայ՝ որ կ'անցնի:

Այս տիեզերական վարդերը կ'երթան բացուիլ մեծ Ար-  
շալոյսներու առջեւ:

Ճշգրիտ ցեղաբանութիւններ պարունակող հատոր մը—  
որպիսին է Յեղին Սիրջը — գրասէրներու և քնարասէրներու  
համար նուիրական մատեան մը կը հանդիսանայ լայն առու-  
մով: Մագաղաթեայ նկարագիր մը, մեծապայծառ ու մե-  
ծամռայլ հայրենիքը կայ հոն: Վարուժան Սեւ Հոդերու զա-  
գաւակն է, Լէնկթիմուրեան նոր սարսափներէն իր աչքը բա՛ց  
մնացած, որով ինք կը չափէ ցեղին հողին՝ թէ՛ սրբազան  
լեռներու բռնկած կատարին և թէ՛ փլատակներու բեկո-  
րին հետ, մէկուն եղերերգը միւսին դիցերգին մէջ անհե-  
տացնելով:

Պզտիկ հրաշալիք մըն են յետագայ տողերը, զոր պէտք  
է մեր քնարասէր եղբայրները բերնուց սորվին, կարմիր  
հայր մերի նման.—

Եղեգնեայ գրչով երգեցի փառքեր.

—Քեզի ընծա՛յ, իմ հայրենիք —

Սօսեաց անտառէն էի զայն կըտրեր...

Քեզի ընծա՛յ, հին հայրենիք —

Եղեգնեայ գրչով երգեցի քուրմեր.

Ընդ եղեգան փող լոյս ելանէր:

Եղեգնեայ գրրչով երգեցի կարօտ .  
 — Ձեզի ընծայ, հայ պանդուխտներ —  
 Ան տարաշխարհիկ բոյսի մ'էր ծրղօտ . . .  
 — Ձեզի ընծայ հէք պանդուխտներ —  
 Եղեգնեայ գրրչով երգեցի հարսեր .  
 Ընդ եղեգան փող ո'ղբ ելանէր :

Եղեգնեայ գրրչով երգեցի արիւն ,  
 — Ձեզի ընծայ, սուրի զոհեր —  
 Ան ծլած էր մոխրի մէջ իբրեւ կրնիւն . . .  
 — Ձեզի ընծայ, կրակի զոհեր —  
 Եղեգնեայ գրրչով երգեցի վէրքեր .  
 Ընդ եղեգան փող սի'րտս ելանէր :

Եղեգնեայ գրրչով որք տունս երգեցի .  
 — Քեզի ընծայ, հայր ալեհեր —  
 Ցամքած աղբիւրէն մեր զայն յօտեցի . . .  
 — Քեզի ընծայ, մայր կարեւէր —  
 Եղեգնեայ գրրչով օնախս երգեցի .  
 Ընդ եղեգան փող ծն'ւխ ելանէր :

Ու պայքա՛ր, պայքա՛ր, պայքա՛ր երգեցի .  
 — Ձեզի ընծայ, հայ մարտիկներ —  
 Գրիչս եղաւ անթրոց սրրտերու հնոցի . . .  
 — Ձեզի ընծայ, քաջ մարտիկներ —  
 Եղեգնեայ գրրչով վրէժ երգեցի .  
 Ընդ եղեգան փող բո'ց ելանէր :

Ինչպէս կը ատնուի քնարաւորին այս հագներդէն, դրա-  
 գիտական վսեմ ազուցուածքն է տիրապետողը : Կշռայանգ  
 գրուածքի մէջ անգամ կրնան որոշուիլ սղիշն ու սղիշխաղը ,  
 ինչպէս հազուադիպօրէն կ'որոշուին անոնք մեր դանցառա-  
 թիւ արձակագիրներուն մէջ : Դանիէլ Վարուժան՝ իր կշռա-  
 յանգ կամ կշռաւոր քերթուածներուն մէջ սղիշխաղ մըն է : Իր  
 հատորը ճոխադուցած է թանկագին, բառադանկով մը, զոր  
 ուսած է թարգմանուած դասական մեծ միտքերու մաքուր

և յղկուած լեզուներէն, կիրարկելու համար իր զգալի առարկայականութիւնը: Քերթողութեան մէջ գրագիտական սղիշի կիրարկումը ուշագրաւ է այսպէս մէկէ աւելի պատճառներով, որ հատորին հետ անբաժան՝ կրնայ յաւերժանալ: Քերթողը որչափ այժմէական տաղերգու, նոյնքան յաւերժացող սիրտ որ կ'ամփոփէ իր կարգին պզտիկ անմահութիւն մը, զայն հետզհետէ ցոլացնելով իր մտքին վրայ եւս: Սիրտէն դէպի միտք՝ ճամբան կարճ է:

Այսպէսով, քիչ ատենէն դինքը «վարպետ» պատուանունին արժանի պիտի տեսնենք: Իր յաւերժացումը որչափ որ սրտին վրայ կը կեդրոնանայ, սուղ ատենէն պիտի կեդրոնացնէ զայն մտքին վրայ ալ: Հիւսիս հոգիները տեսնել և շօշափել կը կարծէր, կ'ընդունէր միայն գլխին աննահութիւնը: Զարհուրելի՛ յայտնութիւն մըն է այս, մեր ցեղէն ուրեմն տաղանդի տեղ հանձար պահանջելու է: Եւ արդէն հանձարն ի՛նչ է, այն գերաճումը որ ուղղակի արդիւնքն է կարգ մը կարողութիւններու եւ արդիւնաւէտ շատ մը ձիրքերու ներդաշնակօրէն իրարու մերձեցման: Ուրիշներ, հանձարը կ'ընդունին իբր ինքնաբեր գարգացումի մը կանխահաս յայտնութիւնը: Իր Հովիւը, Կարօտի նախակը և Հայրենի շնունդը ցեղական նոյն լոյսերով կը թրթռան:

Բանաստեղծը այս հատորով իրեն Սէնպօլիամի դպրոց մը չունենալէն դատ, ուրոյն վարպետ մըն ալ չի ճանչնար: Իր անհատական կնիքը իր ձեռքին մէջ է, ի՛նքն է անոր տէրը: Գաւառէն դրած իր մէկ նամակով կը յայտնէր ինձի իր դաւանանքը զմայլելիօրէն. — «Գեղեցիկը դպրոց չունի, գեղեցկութիւնը բազմանկիւն հատուածակողմ մըն է, մեծ արուեստագէտին հոգին վերէն ուղղահայեաց նայող արևուն պէս այդ բլրակէ հատուածակողմին ամէն անկիւններէն շողեր կ'արձակէ: Եթէ գեղեցիկը արտայայտելու տարբեր ձևերուն մէջ կը կայանան գեղարուեստական դպրոցները, ես կը կարծեմ թէ բնութեան եւ հոգւոյն գեղեցկութիւնները

մէկ կերպով ճշգրտօրէն կ'արտայայտուին, — զանոնք նկարել ինչպէս որ են: Իրապաշտ գուցէ կարծեն զիս. կ'ընդունիմ. բայց իրապաշտութիւնը դպրոց մը դաւանողները կը սխալին, իրապաշտութիւնը գեղեցկութեան հասնելու ամէնէն ուղիղ դիժն է: Իրապաշտութեան մէջ պէտք է փնտռել բոլոր միւս դպրոցները, որոնք իր ստորաբաժանումներն են լոկ. բնութիւնը իր խորհրդաւորութիւններն ունի, իր աստանձ մրրիկներն ունի, կամ իր միջօրէի արևուն միակտուր խաղաղութիւնը, ասոնք փոխն ի փոխ նկարելով ի'նչպէս որ են, ի'նչպէս որ մեր հոգիին վրայ կը ցոլան, մենք փոխն ի փոխ կ'ըլլանք խորհրդապաշտ, ռունանդիֆ, դասական, հետևարար գեղեցկութիւնը անթերի արտադրելու համար ես պիտի սիրէի տալ այս բոլորը միանգամայն, բնութիւնը ինչ որ է և ինչպէս որ է, մէկ քերթուածի, մէկ տունի, նոյն իսկ մէկ տողի մէջ մերթ ըլլալով, միևնոյն անգամ դասական և խորհրդապաշտ, ըստանդիկ և գաղափարապաշտ: Ահա ինչո՛ւ համար իրապաշտութիւնն յատուկ դպրոց մը ընդունիլը ծիծաղելի կը թուի ինձի»:

Յետոյ կայ ուրիշ պարագայ մը, — վերագրուած նմանութեամբ քերթողութեան դպրոցը կը նկատուի տիեզերք մը, որուն գլխովին վերաբերիլ պէտք է, անոր մասնակի ըմբռման հետևելով՝ ամբողջութենէն զրկուած կարելի է համարուիլ: Քերթուածները անպայման զանազան մասնակի վարդապետութիւններու հպատակեցնելը ամբողջականութենէ մը հեռանալ պիտի նշանակէր: Վարուժան ամէն նկատումէ առաջ, ուղած է նախ բանաստեղծ ըլլալ խմորին բացարձակ աղնութեամբ, ուշադրաւ պարադայ: Հայկական գրոշմով շեշտուած իր լայնաճախը տաղերը, արևմտեան հանճարներու մշտակայ մտերմութեամբը՝ գերագոյն արուեստը իւրացուցած են, ասոր համար երբեմն իր վայրենադեղ տաղերուն մէջ Հիւկօի խիտ գեղեցկութիւնը, յորդահոս գեղոյթը կը թաւալի բայց միշտ հայկական: Իր քերթողական համագումները կը մօտենան Կէոնսէյի մեծ աքսորականին համո-



զումներուն, եթէ Ռընանի կողմէ այս վերջնոյն մասին ըս-  
տած կէտերը տրոհենք. — «Տեսածը, զգացածը կ'ուզէ ար-  
տայայտել. նիւթապէս՝ չի կրնար: Իր բանականութեան  
նշմարել չի կրցածը՝ իր սքանչելի երևակայութիւնը կ'ամ-  
բողջացնէ: Կիկլոպի մը պէս՝ նիւթէն դեռ նոր բաժնուած,  
կորսուած ախոյեանքի մը գաղտնիքներն ունի»:

Մեր ցեղին ցանցառօրէն համրուող քերթողներուն  
մէջ գերազանցօրէն ինքնատիպ դիմադժութիւն մըն է  
ինք: Այդ ցանցառաթիւ քերթողներէն մէկ քանին ցեղին  
անմահութիւնը երգերու և արի արանց տաղերու մէջ կը  
գտնեն անհատական իմաստասիրութեամբ: Վենետիկցի մը,  
Ս. Ղազարու վանքին օսկան Բագնավեպ հանդէսին մէջ,  
արդարօրէն յայտարարած է վարուժանի համար թէ Մկրտիչ  
Պէշիկթաշլեանի մը տաղերը պիտի չուզէր ստորագրել:  
Մեզի համար Պէշիկթաշլեան անունը որչափ որ նուիրական  
է իր գանազան փուլերով, սակայն հիացումը նոր և անսո-  
վոր յայտնութիւններու վերագրուած է բարեբաղդաբար:  
Յեղիև Սիրճը՝ կը գետեղուի նախ «Բագինին վրայ» յետոյ  
«Կրկէսին մէջ», «Դիւցաղնավէպեր»ը անոր վերջ կուտան:  
Քերթողը որչափ քնարաւոր, նոյնչափ զինուոր է, կրնայ  
ընել «զրիչը գաշոյն, եւ կաղամարը՝ կարմիր սիրտը գազան  
ոսոխին»: Կրնայ ըսել՝

Ինձմէ հեռո՛ւ թուղթ եւ գիրք.

Տանդէն բոցին ես կը նետեմ,

Գերեզմաննոց կը նետեմ ես

Դուրեանը որ ա՛յնքան ատեն սիրեցի:

... Մտւրն Յիսուս մը կուտայ՝

Իսկ հայ օրոցքն՝ Ապրստամբ...:

Դիտելի յաճախումներ որ կան իր հատորին մէջ, ոգե-  
կոչումներու շոայլանքն է, քիչ մը պատմական անունները  
Տանդէական ցեղամոլութեան ձեւ մը ստացած են, թէեւ ոչ

ամէն տաղերու մէջ: Յետագայ ոգեկոչումը վեհական է,  
սգաւոր Անիի ուղղուած.

Արդ քար ու քանդ կը հանգչիս  
Եւ նշխարներդ ինը դարէ որ կ'ապրին.  
Ժամանակին ձեռքը չեղաւ այնքան յաղթ  
Անհիւններդ այդ մրրիկներուն յանձնելու.  
Բայց ծոցիդ մէջ ալ բընա՛ւ  
Սըմբատի սօս նըժոյգը չի՛ խըրխընջեր,  
Ան չի թօթուեր արիւնթաթախ բաշերն իր  
Քած ձիուն դէմ Ափշինի,  
Ու կոչնակներն ու շեփորներն ոսկեցով՝  
Որոնց ի լուր թուրը խաչով կը ձուլուէր,  
Հոն լուած են՝ ապրեցնելով իրենց տեղ  
Բուի հազար սերունդներ:  
Այդ լուսթեան ջղջիկի լայն թևին տակ  
Կ'անի եղինն արտասուքովն աստղերուն.  
Եւ հոն բաղեղն հայրենասէր թևերով  
Կը գրկէ հողըդ տրտում... (Ա.Ն.Ի)

Գիւտերու նկարիչն է ինք. «Ո՛վ դու Վահագն, աս-  
տուածահա՛յր դօրութեան, ո՛վ Տիգրանի սերմին մէջ դու  
մարդացած Արեգակ»: Վարուժանի Պապը սակայն անարի  
Վահագն մըն է, քնքուշ քան անուական, Հելլէն արձաննե-  
քու ձիւնաթոյր մաքրութեամբ. —

Երբոր իրեն այսպէս կու տամ թիկունքն իմ,  
Կը զգամ թէ վրաս արմատն ամբողջ կը տանիմ  
Մեր ցեղին:

Կը զգամ եղած փրթթուն խնչակ մ'ուռննի,  
Որ հազիւ հազ ա՛լ կը վերցնէ հայրենի  
Դրան կաղնին:

Յանդգնօրէն կ'հանեմ խորշս իր անհունին  
Եւ տասնելինս ութսունին հետ միասին  
Կը չափեմ... (ՊԱՊԱ)

Իր տաղաչափական ձեւը՝ դիւրավարժ և բացառիկ՝  
անթերի աշխարհաբարով մը ազուցուած։ Յղացումներուն  
վեհութիւնը լայն ինքնատպութեամբ կը շեշտուի։—

Կը խոշոշեն հովիւներն անոր անցած համբուն քով  
Քառսուն ոչխար դեռ յղի քառսուն ջուխտակ գառներով,  
Կիներ բերած սափորներ՝ գինիի մէջ կը լըւան  
Ձիուն տղմուտ սմբակներն ու լայն երբուծն հըրատապ։  
Քառսուն կոյսեր նուիրուած Անահիտի մեհեանին՝  
Գիշեր ցերեկ կը հիւսեն գոհարով քու ծիրանին.  
Քու գաւազանդ ենք կտրեր անտառներէն սուրբ սօսեաց՝  
Որոնց միջեւ սարդը պիղծ ոստայնն երբեք չէ՝ կապած։  
(ՅԱՂԹՈՂԸ)

Լայն ներշնչումը ստիպած է զինք երկարաշունչ տաղեր  
հիւսելու, ուր առաջադրուած նիւթն է երկարութեան պատ-  
ճառը։ Իւրաքանչիւր տաղ՝ իր ընդդրկած յղացքին հաւա-  
նական ընդլայնումովը գրուած է։

«Արմենուհին» յղացման վեհութեան տեսակէտով հոյա-  
կապ քնարերգութիւն մըն է, եղերական նորագոյն վախ-  
ճանով։ Շահ-Աբբասի վաւաչ բերանը կը փրփրի ներա վկա-  
յութեամբ։

Արմենուհի մ'է ան, աղջիկ Մելիքի  
Որուն բերդն հին զօրքերս ըրին գոմ մ'աւեր:  
Երբ ձորէ ձոր այդ գեղուհին քաջազգի  
Կ'որսար եղնիկ՝ որսացի զինքն ես անվէր:  
Ձը տեսաւ ան հրդեհն իրենց դղեակին.—  
Համբոյրներս իմ աչքերն աղւոր փակեցին։

Եօթը կիներ զայն կը զարդարեն վաւաչ արքային հա-  
ճելի դարձնելու, երբ արդէն այս վերջինը ցանկայարոյց՝  
կը հրամայէ անոնց։

Բամբռի զարդով, ու երգերով սիրարժարժ  
Պատրաստեցէք. լուսընկային հետ կուգամ:

Պատկերներու ի՛նչ primitif շարքեր դեռ կը հասնին հոծ ի հոծ .

Եւ կոյսն իբրեւ աստուածուհի մը մե՛րկ է . . .  
 Ո՛վ Շուշանի Թաղար, Մատեան խընկաւէտ՝  
 Ուր կը զըրէ Աստուած, մարդիկ կ'ընթեռնուն  
 Ո՛վ դու կըռուի, խաղաղութեան գոց մեհեան՝  
 Որուն Սեմէն կ'անցնի ուխտեալը միայն . . .

Առաջինն այն աղջիկներէն՝ նուրբ լաթով  
 Ուր Ղուբանէն պատուիրաններ բանուած են,  
 Կը չորցնէ կոյսին մարմինն ուսերէն  
 Մինչեւ սաթի գարշապարներն՝ երգելով .  
 — « Արմենուհի՛ , շատրուան մ'ես դու մեր մէջ,  
 Եւ շուրջըդ մենք ծրփծրփուն  
 Նունուֆարներ դալկահար .  
 Աստղերն ի վեր գեղգեղուն  
 Արմենուհի՛ , շատրուան մ'ես դու մեր մէջ » —

Երկրորդ աղջիկն ոսկի սանտրով կը սանտրէ  
 Թօնուտ մազերն ամպերու պէս սեւորակ .  
 Գրլխուն վըրայ կը բանայ խազն ըսպիտակ  
 Նրման վտակի մ'արծաթահոս , ու կ'երգէ .  
 — « Արմենուհի՛ , Ֆիրտուսիի քնարն ես դու ,  
 Երբ քամին զերդ բամբուահար  
 Կուգայ լեռնէն նըլազել  
 Մազերուդ մէջ բիւրալար .  
 Արմենուհի՛ , Ֆիրտուսիի քնարն ես դու : »

Իւրաքանչիւր զարդարանքի համեմատ գեղեցկութեան ներբողն ալ կը փոխուի .

Արմենուհի՛ , յօնքերդ են նման շին տառին՝  
 Գրծուած փետրով ազուաւի .  
 Աչքերդ կաթի մէջ ինկած  
 Մեղուներ են ծարաւի .  
 Արմենուհի՛ , յօնքերդ են նման շին տառին :

Արմենուհի՛, այտերդ են վարդ ու շուշան.  
 Ու սոխակ մ'է քու լեզուն՝  
 Ատամներուդ փրդոսկրէ  
 Վանդակին մէջ գեղգեղուն.  
 Արմենուհի՛, այտերդ են վարդ եւ շուշան:  
 Արմենուհի՛, ծիծերդ են զոյգ մ'աղաւնի,  
 Որ կուրծքիդ վրայ կը նիրհեն.  
 Թեւերդ ուսէդ վար սողուն  
 Սաթ ալուայով օձեր են,  
 Արմենուհի՛, ծիծերդ են զոյգ մ'աղաւնի:  
 Արմենուհի՛, պորտըդ ծիւնի մէջ փոս մ'է  
 Զոր այծի մ'ոտքն է թողեր.  
 Ազրումէջդ է հոր մ'ուրտեղ  
 Իպլիսն իր գանձն է ղօղեր.  
 Արմենուհի՛, պորտըդ ծիւնի մէջ փոս մ'է:  
 Արմենուհի՛, դու մեծ ջահն ես Մըզկիթին  
 Զոր կանգնեց Շահն Իսպահան.  
 Գոհարազարդ այդ ծոցդ է  
 Լին մ'ուր աստղեր կը լողան.  
 Արմենուհի՛, դու մեծ ջահն ես Մզկիթին:  
 Արմենուհի՛, — Արշալոյսն ես  
 Որ կը ծագի լեռներուն վրայ Իրանի:  
 Ինչպէս թռչնոյ մը բոյնին աչքն յառած  
 Կը մագլցի ծառէն կատու մը վայրի.  
 Կամ ինչպէս օձն՝ որ կաթին հոտն առած՝  
 Մըծկեր ուլի մը բերանին կ'երկարի,  
 Այսպէ՛ս կոյսին կը դիմէ Շահն ու արբշուուն  
 Կը փաթթուի հոլանի մերկ սրունքներուն:

Քնարերգական պատկերները այնքան նորօրինակ են և այնքան գունագեղ: Բայց այս երկարաշունչ քերթուածը գծրաղդարար անբնական վերջաւորութիւն մը ունի: Գետա-

մոյն Արմենուհիին դիակին վրայ առիւծ մը կուգայ հեռուէն, արքային հետ գետին մէջ կուելով վերջապէս կոյսին մարմինը դէպի լեռ կը տանի: Աւելի բնական պիտի ըլլար Արմենուհիի խօսնա՛յրը բերել տալ հոն, անոր թափառական սիրականը: Վերջի պարագան աւելի բնականութիւն պիտի ապահովէր քերթուածին: Բայց ի՞նչ բռնազբօս ու բռնահոս հատուած մըն է այս որ այնքան դժբաղդ ըրեր է վսեմ քերթուածը: Արմենուհիի մատանիին առիւծն է, ծիծաղելին, զոր այլարանօրէն անգամ չէ կրցած պարտիել: Բանաստեղծը մեղք որ վրձինը թաթխեր է բարձրագոյն երանգապնակին մէջ, քիչ անգամ Հայ լեզուն այսքան վսեմօրէն ու նրբօրէն կը թրթռայ և մեղք որ վերջաւորութիւնը սխալ ներշնչումով խաթարուեր է: Սխալ ներշնչումը սխալ ճիւղաւորումներ կը ծնի, տեղ մը միայն կը հանդիպիմ այսպէս քերթողին:

Վարուժան Ռաֆֆիի երկերուն ընթերցումով առաջնորդուած է Իրանեան դրուագներ վեր առնելու: Ռաֆֆի Ռուսահայ այն ժողովրդագրեղ վիպասանն է, որ առաջին անգամ բռնակալ պարսիկ Խաներու կեանքին դրուագներովը ճոխացուց Հայ գրականութիւնը: Գեղեցիկ ատաղձները կէս յաջողութիւններ են արդէն:

Վարուժան մագաղաթեայ նկարագիրով լիահաւատ՝ աւանդութիւններու լիառատ ոստանէ մը կուգայ: Իր դարտուղի տաղանդը հին դրուագներ արդիացնելուն մէջ կը կայանայ, այժմէական ոգիին անտարբեր մը չէ, հինը նորին պէտք ունի և այս վերջինը առաջինին, մէկը արդիւնք միւսին: Գաւառին մասնայատկութիւնները թաղուած են մոռացօնքի վարագոյրին տակ, դայն դուրս բերելն ալ նորութիւն մըն է իր կարգին, տեսակ մը բարեշրջութիւն: Իր տաղերը—մերթ քնարերգակ, մերթ հովուերգակ և մերթ դիւցազներգակ—եթէ ոչ ամբողջովին կշռայանգ՝ գէթ կըշռաւոր ըրած է, անոր համար որ կշռոյթը գաղափարին հսկողն է: Գանիէլ՝ իր անունին պէս քրմական և իր վարուժան մականունին պէս առնական՝ կը մնայ յաւերժացող

բանաստեղծ մը : Իր հատորը , աղամանդէ մուրճի մը հարուածն է մեր նոր բանաստեղծութեան ծոցէն բղխեցնելու նոր երգերու աղբիւրներ :

Մեր գրական նահատակներէն և Թրքահայ արդի գրականութեան ծանօթ գեղապէտ նոր քննադատներէն Արտաշէս Յարութիւնեան , այսպէս կ'ուսու՛նասիրէ Վարուժանը իր տաղերուն հետ : — «Քննադատութիւնը , իր պաշտօնին նուիրականութեան գիտակից , պարտի գինքը ողջունել անվերապահ խանդավառութեամբ , Հայկական Ամենադից Մեհեանին սրբազան կամարներուն տակ :

« Այսարհ լեցուն է մերթ ահադդեցիկ և բաղմադդորդ մեծութեամբ՝ այլ խիստ անցուկ աստուածներով : Այնքա՛ն շուտ կուգան ու կ'երթան : Քիչերուն արուած է յաւերժանալ ժողովուրդներու սրտին համարման ու պաշտամունքին մէջ : Բանաստեղծը՝ այդ երանելի ճակատագրով բախտաւորներէն է : Դանիէլ Վարուժան հին դարերէն ու հին յուանդութիւններէն կուգայ մեզի : Պիտի ըռէի թէ՛ ծովերու սրտէն դուրս ելլող հրեղէն եղէգի մը փողէն ծնունդ առած առասպելական պատանեկիկ մըն է ան , ըոցեղէն մաղերով ու արեգակէ աչքերով , որ մեզի կուգայ պատգամել՝ հեթանոս Հայութեան հինաւուրց բնադդներէն , որ տաղերգե՛լ կուգայ մեզի՝ Յեղին Սիրսը : Ողջո՛յն ուրեմն նորաստեղծեալ հեթանոսական ծիրանի հանճարին , ողջո՛յն , ցնծութենէ արտասուած որ աչքերով ողջո՛յն դափնեղսակ մաքրափայլ ճակտին՝ աստուածընտիր օծեալին , Հա՛յ բանաստեղծին : Զօնը՝ գոհար մըն է , զոր բանաստեղծը , իր սրտին աղամանդեայ դանդուածէն կը բրցնէ կը հանէ՝ նուիրելու համար իր հայրենիքին ու ցեղին : Քիչ անդամ այսքան սրտագին երգուած բանաստեղծութիւն մը կարողացած եմ : Նեմեսիսը , որ քերթուածաչարին գլուխդործոցներէն մին է , կրօնազգած յափշտակութեամբ մը կը կարդամ : Հգօր , հրաշունչ , գիւցազնադեղ ու վեհ այդ քերթուածը միայն գրած ըլլալը , բաւական էր ոսկեձոյլ պատւանդանի մը ամուր փառքը ապահովելու համար Դանիէլ

Վարուժանին: Յղացման ի՛նչ վեհաշուք մեծութիւն, և արուեստի ի՛նչ առնագեղ կորով, Ողիմպական շնորհով ու կատարելութեամբ բանաստեղծութեան մէջ: Վարուժանի բանաստեղծութեան նկարագիրը խիստ ճոխ է: Պայծառ, հզօր, շնորհալի և առատօրէն ստեղծագործ երևակայութեամբ թրթրոուն և մանկական միամտութեամբ մեծ սիրտ մը՝ իրենց ակունքներուն բոլոր արդիւնաբերումը հզօրակամ ու ջրլապիրկ արուեստի մը, որ մարդուած է եւրոպական հին ու նոր մեծագոյն հանճարներու մօտ՝ և դրայրական երկարատև յաճախումի մը մէջ: Եթէ կարելի է աւելի յատկանշօրէն բացատրել Վարուժանի բանաստեղծութեան նկարագիրը, պիտի ըսէի՝ խորապէս, աւանդականօրէն Հայ հոգի մը՝ ի սպաս եւրոպական Արուեստին:

(( Դանիէլ Վարուժանի գաւառացի է: Բուսած է այն երջանիկ երկինքին սակ որ ծնունդ կրցած է տալ Մխիթար Արքայի նման տիտանի մը:

(( Ժամանակ մը, անբացատրելի ըլլալու աստիճան յամառութեամբ մը, ըսած եմ թէ «Վաղուան գրականութիւն» մը գոյութիւն պիտի ունենայ, որ պիտի ըլլայ մեր հարազատ հայ գրականութիւնը, զոր Պոլիսը չի կրնար տալ, և որ մեզի գաւառէն պիտի գայ: Տեսակ մը անդիմադրելի ուժգնու-

եամբ յայտնատեսութիւն՝ այս բանը ինձի ըսել տուած է: Այն միջոցին՝ գրաքննութիւնը կար, և ամէն բան յայտնի բացատրութեամբ կարելի չէր ըսել: Բայց Վաղուան գրականութեան գատին պաշտպանութեան մէջ ներքնապէս ինքզինքս պարտադրուած ղգացեր էի զնելու որ՝ զրեթէ այդ առթիւ ամէն բան ըսած եմ մեղմարանութիւններով: Գաղափարը թերևս բացարձակապէս իմս չէր, բայց զայն ձևացնողն ու մէջտեղ դնողն ես էի: Ու զիս հասկցնողներ գտնուեցան: Նոյն իսկ ունեցայ կռուի թանկագին ընկերներ: Բայց Պոլսոյ մէջ չհասկցնողներ, ծաղրողներ, դատափետողները՝ աւելի շատ էին: Գաղափարը ամենալուրջ նրկարագիրն ունէր ասպահովապէս՝ մինչև այն օրը ամուր են-



Թաղրուած պատուանդաններու հիմերը քանդելու : Այդ նախատեսութեամբ էր անշուշտ, որ Պէրպէրեան էֆէնտին, խոնարհելով իր Ողիմպական բարձրութենէն, իրեն համար ինծի դէմ ծռոանալու, իր պատկառելի անձին մէջ խորհրդանալով Պոլսահայ միտքը, և իր անհերքելի հեղինակութեան ներքե ջանալով ջախջախել զմեզ ու մեր պաշտպանած գաղափարը : Յաջողեցա՞ւ իր այդ ձեռնարկին մէջ . — չեմ գիտեր : Միայն սա բացորոշ է որ բախտին մէկ անակնկալ բերմամբ, վաղուան գրականութեան գաղափարը կը սկսի ահա այնքան իսկ շուտ ոտքի վրայ կանգնիլ : Թրքահայոց մէջ, օրուան նորագոյն գրականութեան ամէնէն նշանակելի դէմքերը գաւառացիներ են, Մայր Երկրին հարազատ արդանդէն ծնունդ առած ընձիւղներ, որոնք իրենց խառնուածքին հետ կը բերեն ցեղին հինաւուրց հանճարը բնորոշող յատկութիւնները : Եթէ վաղը տեղի պիտի ունենայ այն ուղղութեամբ իսկ՝ զոր պիտի մատնանշէ մեզի գաւառացի գրագէտներու հանճարէն բղխող մաքուր ճառագայթը : Այդ ուղղութեամբ, Ռուսահայ ազդեցութիւն մըն ալ պիտի կրենք : Բայց այդ ազդեցութիւնը փոխադարձ միայն պիտի ըլլայ անշուշտ : Ռուսահայը մեզի պիտի մեղադրէ մեր այլասերումը, և պիտի յիշեցնէ ցեղին աւանդութիւնը. մենք՝ անոր պիտի մատնանիշ ընենք իր մեծ թերութիւնը, ու պիտի սորվեցնենք արուեստին հիմնական նշանակութիւնը : Ահա՛ թէ միջանկեալօրէն ի՞նչ խորհրդածութիւններ կը թելադրէ ինծի Յեղին Սիրսըին հրատարակութիւնը :

« Վերադառնալով Վարուժանին, պիտի ըսէի թէ ոսկիի ճոխ հանք մըն է : Չեմ գիտեր թէ ի՞նչ թանկագին բաներ պիտի տայ մեզի տակաւին : Բայց նոր բացուած ոսկի հանք մըն է, եւ իր արուեստը թէև ըստ քանակութեան առատ՝ բայց ըստ տեսակին անղուտ չէ տակաւին : Շատ մը այլասեռ տարրեր կը նշմարուին հոն, որոնցմէ պէտք է մաքրուի պատուական ոսկին : Ապահովարար հետզհետէ աւելի պիտի մաքրուի, նորանոր գանձերով օժտելով Հայ ազգատիկ բանաստեղծութիւնը » :

Իր սիրելի հեղինակները մնացին Հիւկօ, Շէյքսպիր, Լը-  
քոնթ Տը Լիլ, Լամարթին, Տանթէ, Լէօբարտի և նորագոյն  
յայտնի դէմքերը: Ասիական խառնուածքով և եւրոպական  
արուեստով առաջնորդուած՝ գեղեցկութեան քուրմն է որ կը  
միայ ցեղային նոր վիճակներու վրայ: Իր քերթուածին  
հետ պիտի ապրի գալարումներով, առանձնարանի կեանքէն  
դուրս բերած տաղերն իսկ պիտի չունենան առանձնարանի  
դրոշմը, որովհետև ինք կ'ուզէ խառնուիլ դուրսի կեանքին,  
յատնի ճշմարտութիւններուն և եռացող խանդավառութիւն-  
ներուն: Մեր նորագոյն բանաստեղծներուն ամէնէն ազգա-  
յինը, միակ հրաշագրողը նոյն սեռին որ արուած է իրեն: Խա-  
մաճիկի, շպարի և գրգարանի փոխարէն ազգային իմացական  
զինարուեստի վեհարաններ կը կերտէ: Հիւսիսի գրականու-  
թեան աղղեցութիւններ հայկական նշխարներով հաղորդը-  
ւած: Յաղթողը, որուն վարուժան մասնաւոր արժէք կուտար  
մտերիմ անվերապա՝ խօսակցութեանց պահուն՝ հիւսիսի  
կենսաուռոյդ ու լուսակառոյց արուեստին խունկերով կը վա-  
սի: Նշմարելի կէտ մը միայն. — երբ իր տաղերը ազատ-  
տողեան են՝ մտքի հերարձակ արշաւին՝ տեղ տեղ միայն կը  
խառնուին հռետորական ուռուցիկ մասեր, որ բարեբախ-  
տաբար կը փրկուին տաղաչափուածներուն մէջ, ուր ոճը  
աւելի հանդարտ և ծաղկեալ՝ կ'ոռոզէ մտքին ու սրտին  
բուրաստանները: Գլխաւորաբար հոն է վարուժանի արուես-  
տին ինքնատպութիւնը: Բայց մէկ հատիկ աղատող յղա-  
ցումներ ալ ունի տաղաչափուածներուն կատարելութեան  
հաւասար, մտերիմ ոճերով ողկոյնուած:



## ԻՐ ԵՐՐՈՐԴ ՔԵՐԹՈՂԱԳԻՐՔԸ



ԺԱ.

” Հ Ե Թ Ա Ն Ո Ս Ե Ր Գ Ե Ր “

Իբրև թէ՛ն՝ վենետիկի հանձարարան մարմարներուն մասին կը գրէր. « վերածնութեան հեթանոսութիւնը՝ դարդագործութեան մանրամասնութեամբ » : վերածնութիւնն այսուհի իր հեթանոսութիւնը, դարը կ'ապրի այսօր վերածնութեան շրջանը հեթանոսական իմացումով, այսպէս եղաւ ըստէպ գրական կարգ մը արուեստագէտներու համար: Թէնի էջերուն մէջ ահա վենետիկեան հանձարակերտ դամբարանի յիշատակութիւնը. « թեւաւոր առիւծ մը յուսահատ կ'ողբայ, ցոուկը իր թաթերուն վրայ գրած, և իր թաթերը գրքի մը վրայ » : վերածնութիւնը կը կանգնի կանդնագեղ հեթանոսական թեւերով :

Իրապաշտի մը Հեթանոս երգերով հարկ է մինչև հոգ տարուիլ : Իրապաշտութիւնը անհանդուրժելի է առանց միսթիքութեան : Բնապաշտութեան մէջ ծանօթ է քերթողներու միսթիքութիւնը, միջին միսթիքութիւն մըն այլ կը դնէ վարուման իրապաշտութեան մէջ, այսպէս. —

Լոյսն է Մրտքիս հարսը, աղջիկն՝ Աստուծոյ.  
Ան գինին է Տիեզերքի բերկրութեան,  
Որ իրիկուն մը, կողէն դուրս Յիսուսին,  
Հեղեղօրէն հոսեցաւ,  
Ներումի պէս հոսեցաւ, վա՛րը, Մեղքին

Սեղանին շուրջը հաւաքուած մարդերուն  
 Անյուսութեան ըսկիհներուն մէջ դատարկ,  
 Լոյսը արիւնն է բնութեան,  
 Գիշերուան թագն, ու պատմունճանն է օրուան.  
 Աստուածային Ակնին է՝  
 Որ երկունքի մէջ մեռած մօր մը նման,  
 Կը ստեղծէ իր վախճանելու ժամանակ,  
 Ակնին՝ հրեղէն բիբերով,  
 Որուն հոգին ամէն գարուն կը տրուիի  
 Հիւլէին մէջ եւ մարդկային մըտածման,  
 Որուն համար զոհերով դեռ կը մխան  
 Նուիրական ափերը յորդ Գանգէսին,  
 Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին. . .

Լոյսը մարմարն է երկնային հանքերուն,  
 Որով արուեստն, անմահական երազով,  
 Կը քանդակէ ծիւնամարմին աստուածներ:  
 Իր ծոցին մէջ կը ծընին  
 Մռայլ Տանդէներն ու Հոմերները հըսկայ,  
 Իր ծոցին մէջ իմաստութիւնը երգ մ'է՝  
 Զոր գիշերուան մէջ խորին  
 Բանաստեղծները կը խմեն աստղերէն՝  
 Որ նըլագեն ցիրեկուան մէջ՝ Մարդերուն:  
 Ան ամենո՛ւն գինքը կուտայ, ամենո՛ւն  
 Կը բաժնուի, եւ կը մընայ անբաժան  
 Նըշխարքին պէս. — ան նըշխարքն է՝ որ կ'իջնէ  
 Ամէն առտու, սեղաններուն վըրայ մեր,  
 Մարդեղութեան արիւնլըւայ խորհուրդին:  
 Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին

(1,080Ը)

Իրապաշտութեան մէջ հազուագիւտ եղած է դրեթէ միս-  
 թիքութիւնը որ ընդհանրապէս բնապաշտութեան մէկ տուրքն  
 է: Վարուժան միսթիք բանաստեղծ մը չէ, այն պահուն երբ

իրապաշտական տախտակներ կը մակագրէ՝ ստիպուած կը տարուի միջին միսթիքութեան :

Նոր իրապաշտը գրական զինարուեստով մէջտեղ կը բերէ մերկիրան Աստղիկը : Արուեստը աստուածային ծիրանի մըն է որով բանաստեղծը կը սքօղէ բացլանջ կերտուածքներ :

Գեղեցկութիւնը ուժին մէջ է , առանց անոր վերածնութիւնը հեթանոսական տարագ չի հագնիր , և ճշմարիտ բանաստեղծ մը , որպիսին է Վարուժան , է՛ն բացլանջ յղացումին մէջ կը զետեղէ նոյն ուժը , հակառակ պարագային գրողը գրող ըլլալէ աւելի մերկասրունք տղեկ մը կը ճանչցուի , մայր գրականութեան արդար կաթէն ու ստինքէն զրկուած :

Այն հատորը զոր կուտայ նախ ուշադրաւ է ձեւագանձորէն , հորիզոնները աւելի լայն են հիմա :

Իրապաշտութեան մէջ գլխաւոր առանցքներէն մին կը հանդիսանայ սէրը որ չպիտի ծերանայ և քերթողը կը հասունցնէ զայն զանազան կեանքերով : Իր իրապաշտութեան առանցքը՝ սէրը՝ մարդկային է , հակառակ անոր որ անառակները ռաքի հանէ : Մեր գրականութիւնը առեղծուած մը դարձած է սկիզբէն ի վեր , նախապէս կարելի չէր ամէն կարգի նիւթ գրականութեան մէջ հիւրընկալել , կալուածները որոշուած էին և ոչ ոք կը յանդգնէր մոռցուած հորիզոնէ մը դալ , առակի նիւթ ըլլալիք կտորը հարկ էր միշտ առակին ձգել և քնարինը քնարին , վա՛յ անոր որ Լաֆօնթէնի ազուաւը Լամարթիենեան քնարով հնչեցնէր :

Արդի նորագոյն գրականութեան սիւներէն է մեր բանաստեղծը , նորագոյն շրջանին յանդգնութիւնը բարերար ազդեցութիւններ բերած է միօրինակ գետիններու վրայ : Կեղծ վերնագիրներու տարբերութիւնը չէր որ ընթերցողը զանազան գետիններ պիտի փոխադրեր , անիկայ որոշ պարունակութիւն մը և իր գիացածէն ու կարդացածէն տարբեր բան մը կը սպասէ : Հեթանոս Նրգերու հատորը այսպէս կը խօսի էն խստապահանջ ընթերցողին : Կը կարդանք Խարուած կոյսերը . —

Դուք կոչուեցաք Գաթինա, եւ կամ Ֆանթին արտալած՝  
 Որ պաշտպանեց բողոթեամբ իր մայրութիւնը անզէն,  
 Մարգարիտա կոչուեցաք՝ Դժոխքէն իսկ պղծըւած,  
 Մարիամ՝ պղծուած երկինքէն:

Ես կ'արտասուեմ ձեր վրայ, ո՛վ տարաբախտ իմ քոյրեր,  
 Ես ձեր այգանքը կուլամ՝ աչքերս այպէն փակելով.—  
 Գինետան յոյր տակառին կատարն էք դուք պըսակեր  
 Ձեր կուսութեան պըսակով:

Գաթինա՝ Թոլսթոյի Յարութիւն վէպին հերոսուհին է,  
 ինչպէս Ֆանթին՝ Հիւկօի Թշուառներուն և Մարգարիտա՝  
 Կէօթէի Ֆառադին: Խարուած կոյսերու նուիրուած մաքուր  
 ներշնչումին հայ բանաստեղծը չուզեր խառնել դսիններու  
 հասարակ աղիճի անուաներ: Ճակատը լոկ սիրուած մատեան-  
 ներու սրտին վրայ կը հակի իր տարաբախտ քոյրերուն  
 հանդիպելու համար: Հարեանցի ակնարկով կարելի չէ կըշ-  
 ուել այն անկեղծութիւնը որ կ'աղաղակէ թղթէ մեհեաննե-  
 րուն, վէպերուն մէջ.—

Ես կ'արտասուեմ ձեր վրայ, ո՛վ տարաբախտ իմ քոյրեր:

Բառն ու իմաստը պակուցիչ են քանի որ անկեղծ են,  
 իտեայր վերկեր է ամէն ինչ:

Իրապաշտական էջ մը, հատուածին առաջինը երկիւ-  
 դակի է իրապաշտական խորքով, անոր յաջորդող հատուածը  
 արուեստն է որ կուզայ երկիւղը փարատել: Յանդուգն  
 խոսքերը սոսնոց իտեայր ուժ չեն ներկայացներ, մինչ ի-  
 տեայր լոյսը կը պարտասարէ մեզ գեղեցկին հետ գոյ գէմ  
 առ գէմ: Իսկապէս դմայելի են աշխարհիկ նիւթերը Վա-  
 րուժանի քնարի լեկերուն վրայ, որովհետեւ անոնց որքան  
 աշխարհիկ նայնքան մարդկային են, պարտոյան նորութիւն  
 մըն է: Աշխարհիկ եւ մարդկային,— երկու շատեր իրար կը  
 լրացնեն: Մարդկային ուրիշ չենք տեսներ անչուչա Ո՛ Տա-  
 վիրախ մէջ որքան Խարուած կոյսերով: Այս դիտողութեամբ

արուեստին բիծերը չեն որ կը մատնանշուին, Վարուժան երկու  
դէմք ունի Յանոսին պէս: Եթէ հրեայ բողին մէջ — որպի-  
սին է իր Տալիթան — մարդկային չէ՝ գէթ ըստ երեւոյթին  
հեթանոսական ծածուկ խնամութեամբ քնարական ծրա-  
գրին միացած է, գոր կը մակագրէ Հեքանոս Երգեր: Մեր  
կեանքէն անկախ իմացու՛մ ժըն է հեթանոսութիւնը, անպատ-  
ճառ կռատան աղաղակներ չեն: Շատ անգամ բանաստեղծը  
իր քնարին հեթանոսական նկարագիրը կուտայ նաև քաղ-  
քենի յղացումներուն, ինչ որ կը մնայ երկրորդական գիծ մը,  
չըսելու համար երկրորդական թ'րութիւն: Ամէն գրողի մէջ  
եթէ անհատականութիւնը նկարագիրի մը կապուած է, ան-  
տեղիտալի նկարագիրն է որ երեւան կուգայ նոյն ինկ այ-  
լադան ու ձեւադան էջերու մէջ, այսպէս Վարուժանի գրրա-  
կանութեան հեթանոս նկարագիրը կը շիտթուի քաղքենի  
նիւթերու մէջ: Արդարև ուղիղ է այն մտածումը թէ այժմէ-  
ական աշխարհիկ նիւթերու համար հեթանոսական դրոշմ  
հարկ չէ տալ, կարելի եղածին չափ միջին ճամբայ ընտրելով,  
ինչ փոյթ հեղինակը չի հետապնդեր քննադատը իրաւամբ,  
ան կը բարձրանայ այնքան որ չի կրնար կարճերը տեսնել,  
իր նկարագիրը կ'իշխէ ամէն կարգի նկարագիրներու վրայ:

Այս ելքով Ո՛ր Տալիթա քերթուածը ըստ երեւոյթին հե-  
թանոսական շունչով օծուած է հակառակ անոր որ նիւթը  
այժմէօրէն աշխարհիկ թուի, նոր հեթանոսութեան մատ-  
նայատուկ խորունկ դրոշմը որ իրապաշտական է, երոպա-  
կան ինկած բարքերը վրձնող:

Աշխարհիկ կեանքը կը բարախէ հող, քերթողը իրա-  
կանը կը նկարէ հեթանոսական գրչին զուգապատիւ, անս  
վեր կ'առնուի արդի քնարին իրապաշտութիւնը: Եթէ իրա-  
պաշտութիւնը ուղղութիւն մըն է՝ տաղանդաւոր բանաստեղծը  
ատոր կը մօտենայ մէկէ աւելի ուղղութիւնով, մանաւանդ  
իր նկարագրականները կ'իւսթալ Չլօպէրի առանձնայատուկ  
ոգիկոչականները կը յիշեցնեն, Ֆոանսացի ոճապաշտ գրրա-

գէտին նկարուն աիրիկեան ճաշերը իրենց գրական համեմունքով կը մօտենան վարուժանի Հարճին, ուր գիւտերու յղացումը մանաւանդ քերթուածին կուտան բանավարական արժանիք: Գիւտերու հոծոյթը, անակնկալներու ճոխութիւնը և մանաւանդ այն ոգեկոչողի դերը ուր քերթողը նորագոյն գրականութեան մէջ իր որոշ անկիւնը կը ճշդէ: Իր հարճը նկատի առնուած պահուն այնպիսի ընդմիջումներ հարկ է ընել որ ուղղակի քնարին երիկամունքէն դայ, — այսպէս մէկ երկու տողի մէջ կը հանդիպինք ոգեկոչական գրականութեան, —

Սեղանին շուրջը արդէն մեծամեծներն հայկազուն,  
Դէմ յանդիման բազմեր են, բայց ո՛չ իրենց մեծանուն  
Աստիճանին համեմատ, այլ սուրեշու մեծութեան:  
(ՀԱՐՃԸ)

Հարճին մէջ կը շարունակ հարազատ բացատրութիւններ: Ոգեկոչական գրականութիւնը կատարելու համար հարկ է ունենալ քիչ չատ պատրաստութիւն, և ընդհանրապէս համաշխարհային գրականութեան մէջ տեսնուած է որ լաւագոյն տաղանդները այս սեռին կը հետեւին: Ոգեկոչական գրականութիւնը մանաւանդ երբ հարազատօրէն ցեղային է, վերին աստիճանի վեհութիւն կը սփռէ, գիւտերուն կուտայ տպաւորիչի մտղական հանդամանք:

Հարճը հոյակապ քերթուածին ճակատը մակադրուած են «Փա՛ռք Սարբինային, Ներոն կ'արբենայ» բառերը, զոր դուցէ շատեր նկատի չառնեն: Արքան որ բոտ երեւոյթին բան մը չի խօսիր ան և սակայն իր խորքին մէջ ոգեկոչական է: Հասմէական սովորութիւնները իրենց ճշդութեամբ հիւրընկալուեցան Հայաստանի մէջ և «Ներոն կ'արբենայ» մակադրութիւնը ակնարկութիւնն է ատոնց:

Առանց խոտովելու հարճի հոգեկան ազուցուածքը, հարկ է շատանալ է՛ն չահեկան տողերով, ոգեկոչական դժուարապահանջ գրականութեան նմուշը բերած ըլլալու համար: Ակ-



Տարկութիւնը՝ Տրդատի (Բագրատունի) կ'ուղղուի հետագայ շնորհիջուած սողերուն մէջ. —

Յետոյ ծոցէն դուրս քաշեց խուրձ մը դեղձան մազերու Մութ ամպէն դուրս մացառուող ճահանջներու պէս աղու Եւ սնով իր գինիոտ բերանն աղէկ մը սրբեց. . .  
Անոնք մազերն էին իր գոռոզ կրնոջ՝ զոր քրածեծ Էրաւ ու ա՛յնպէս ահա ծաղրեց այն էզն անուղղայ,  
Եւ ապշեցուց ամենքն այդ իր անսովոր գործին վրայ:  
(ՀԱՐՃԸ)

Ոսկի քնարերգութեան մէջ — որպիսին է հարճը — կը գտնեմ յերթողին առաւելութիւնները զանազան դիժերով, քաւահանացանք հոն ոգեկոչական մասերով միայն, որոնց երիտասարդ վարպետն է բանաստեղծը: Իր նորալուր և իրերայաջորդ մանրադէմնին պատկերները երբեմնի հանձարեղ Արեւելքին մանրանկարները կը յիշեցնեն:

Վարուժան ծնած է Հայ, ստեղծադործութեամբ՝ արեւելեան: Հոգին է որ կը սերի տարբեր կայաններէ, հոնկէց՝ իր գերադոյն սնունդը:

Այսպէս իր Պասգանաւորներս իմաստնօրէն ձեւապաշտ շերթուածը՝ ուր պիտի նշմարենք Ատալիի պարսիկ բանաստեղծը, որ զանազան թոչուններ կը թռցնէ հոս հոն իրենց յարմարութեամբ, օրինակ՝ պլպուլը կ'ուղարկէ Սողոմոն Իմաստունին: Վարուժանի Պասգանաւորներս տաղարանին մէջ կան զանազան թոչուններ, դէպի Ահարոնեանի ուսական բանար թոչուած: Բայց Ատալիի պատահական դէմք մըն է, իր յերթուածը կը մնայ դուրի խորագոյն արուեստէ: Եւ սակայն Վարուժան այդպէս չէ, հողւոյն ծաղումը միայն կը պատշաճի արեւելեան ծաղումներու: Ըստ Հոմերոսի՝

Աստուածները իրարու չեն անձանութ  
Թէպէտ անոնք մէկզմէկու չապրին մօտ:

Ո՛չ մէկ տեղ տաղաչափութեամբ Ահայ տնեան փառս քսմուած է այնքան որքան իր Իրանագեղ քնարով. —

Արագի՛լ, վրայէդ փետուր մը ձգէ, բանտն իր մահառիթ՝  
 Ուր ան օրէ օր իր գերեզմանին համար կ'հաստենայ:  
 Ի՞նչ փոյթ թէ խլուած փետուրէն՝ թեւդ այդ արիւնի շիթ շիթ  
 Անով յաղթանակն ան պիտի գրրէ իր Ուխտին հըսկայ:  
 Ա՛խ, գնա՛, արագի՛լ, սիրտըս կըտուցիդ:

(ՊԱՏԳԱՄՁԻՈՐԵՆԵՐՍ)

Տաղանդաւոր բանաստեղծը կը խմէ արուեստին դանա-  
 զան աղբիւրներէն, յայտնի է որ այս անգամ անտարբեր մը  
 չէ արդի հանճարարան Սէնպօլիսմին, որուն միայն բնական  
 և խիստ անմիջական տուիքներէն կ'ուզէ օգտուիլ: Թէպէտ  
 կը խմէ դանազան արուեստի աղբիւրներէն՝ ի ձեռին ունի  
 սեփական բաժակը, անհատականութեան և ինքնատարու-  
 թեան գրոշմը, ասոր համար է որ յաճախ կը դանկնք դար-  
 մանալի ջերմութիւն մը, որպիսին է Վարուժնակիս տաղա-  
 րանը: Բանաստեղծն ու փոքրիկ հարազատը — հայր ու որ-  
 դին — դէմ առ դէմ նոյն հողիով կը հաղորդուին: Չաւկին  
 հոգեկան ջերմութիւնը կը փոխանցուի հօր խսովքին, որ-  
 պէս զի երկուքը՝ մէկ սրտի մէջ՝ յօրինեն անդին դոհարներ:

Հայրը մտքին լոյսերով կը պաճուճէ փոքրիկին ստուերը,  
 եւ ստուերը ծնունդն է իր լոյսին: Քերթողին լուսաւոր  
 պաստառին վրայ միամտութիւնը խորունկ է նոյնքան. —

Վ Ա Ր Ո Ւ Ժ Ն Ա Կ Ի Ս

Աղուճ՛ր, աղուճ՛ր, աղուճ՛ր վարդն իմ Գարունիս

Որ սրբտիս վրայ բացուեցար,  
 Եւ քեզի հետ բացիր հոգիս վշտահեղծ  
 Նոր երագի մը պայծառ:

Հին օրօրանն որ, թաղարի պէս լըքուած,  
 Կ'ըլլար խըշտեակը սարդին,  
 Կենդանացա՛ւ ճրուռողիւնով, բոյնի պէս  
 Պաճուճուեցաւ վերջստին:

Արեւ մը նոր, շողերուն հետ աչքերուդ,  
 Եեմիս վըրայ ցաթեցաւ.

Եւ վանդակին մէջ կաքաւս իմ վիրաւոր  
Կարկաջեց երգ մը անծկաւ:

Դուն սենեակէ սենեակ թրուար դեղեւուն  
Բոյնէն ինկած ծիտի պէս.

Ձայնէդ դիւթուած՝ այցելեցին տընակիս  
Սերովբէներ լուսագէս:

Աղուն՝ր, աղուն՝ր, աղուն՝ր վարդն իմ Դարունիս,  
Եկուր նստէ՛ ծունգերուս.

Թող լուսնակի պէս՝ մըռայլ ծոցս ողողեն  
Ոսկի վարսերըդ սընդուս:

Շրղթայէ վիզս այդ թեւերովըդ քընքոյշ  
Նըման ծաղկէ մանեակի.

Փըպտէ՛ ինծի, որ ցուրտ անդունդը սըրտիս  
Արշալո՛յսով բըռընկի:

Պօսէ՛ ինծի, անծանօթ խօսքը, զոր դուն  
Երկինքէն հետըդ բերիր, —

Պը բանայ շողը՝ վարդն, իսկ շուրթը մանկան  
Աստուծոյ մատը կարմիր:

Նայէ՛ ինծի լուսնակն ինչպէս կը նայի  
Դամբանին խորը խաւար. —

Սէրըս մեռած՝ պիտի առնէ յարութիւն  
Պիտի ապրի քեզ համար:

Քեզի՛ համար, որուն միսն է գոյացած  
Շուշաններու թերթերէն,

Միռոնարոյր շապիկն հիւսուած է թեւով  
Թիթեռներու նըկարէն:

Քեզի՛ համար, ո՛վ իմ քերթուածըս անմահ,  
Ձոր արիւնովս յըղացայ,

Ձոր երգեցի՛ հըպելով սըրտիս յարերուն  
Լարն ամենէն դիւրագգայ:

Քու ձե՛ռքը լոկ դեռ կը բռնէ զիս կանգուն  
 Աւազներուն վրայ փառքիս .  
 Եւ մազիդ մէկ թելը բա՛ւ է կապելու  
 Տիեզերքին հետ՝ հոգիս :

Վարուժնա՛կդ իմ, իմ փափկասո՛ւն Դիցուհիս ,  
 Ո՛վ քընարէ դու հոգեակ ,  
 Թող որ արցունքս, որ այտերուդ վրայ կ'իյնայ ,  
 Ըլլայ ծիծաղ կամ սուտակ :

Բիբերըդ թող սրբակեն աստղերն երկընքին  
 Իմ խորշումած ճակատիս՝  
 Որ իր վըշայ, թագի պէս, բա՛րձրը բռնեց  
 Խոր ըսպիները սրբտիս :

Ջի ես անդո՛ւնդն եմ՝ որ կ'ըլլայ երջանիկ  
 Փոսուռայի մը լոյսով .  
 Անապա՛տն եմ, որ երկինքին կը ժրպտի  
 Իր ծըլարձակ մէ՛կ բոյսով :

Երբեմն տաղաչափական ձեւն ալ կը պատշաճեցնէ նիւթին : Վարուժնակիսը նոյն լաւ ձեւերէն է, որքան չէ Արեւելեան Բաղանիֆ քերթուածին ծանր ձեւը, թէպէտ դանազան մասերով նկարագրական գրականութիւն մըն է, հոն չափ չքեղ բացատրութիւններու քով կան անխոստովանելի պատկերներ :

Իսահակեանի Աքու Լալա Մահարի երկարաչունջ քերթուածին տաղաչափական ձեւը յարմար է նիւթին, ձեւին մէջ կարծես ուղտերն են որ կը քալեն, ինչպէս ձին կը քալէ Վարուժանի Բեգաս նրբագոտ քերթուածին տաղաչափական ձեւով : Արեւելեան Բաղանիֆի չքեղ այլ ծանրատաղտուկ ձեւը աւելի լաւ էր որ գեղօնաձև կատարեր, արդէն կատարած է իր Կդիոպատրա դաշնաթաւալ տաղիկը, որուն *décorés* երբ իսկապէս պատմական ճշմարտութիւններ են . —

Սահէ՛ , ո՛վ նաւ , սահէ՛ շուտ ,  
 Տարսոնն հեռուն կ'երեւայ .  
 Ջահեր կ'այրին բոցանուտ  
 Նիզակներուն ծայրին վրայ :  
 Գրշխո՛յ , կողէն նաւակին  
 Ներս քաշէ ձեռքըդ քընքոյշ ,  
 Մատնիդ կ'իյնայ խորն ալքին .—  
 Կ'ընկըղմի կիւսըդ , ըզգո՛յշ :  
 Բամբի՛շ , գոհարը թագիդ  
 Եղաւ Քաղքին ա՛յ փարոս ,  
 Աչքը քեզի անքըթիթ  
 Հոն կը սպասէ Անտոնիոս :

Երգերը կ'աւարտին , իրականութիւնը իր մերկութեամբ  
 կը պարզուի .—

Գուսանն ա՛լ վինը չածեց .  
 Իսկ համբոյրով մ'այն զիշեր  
 Կին մ' Իտալեան նըւանեց ,  
 Մարդ մը՝ Բուրգերն յաղթածեռ :

(ԿԴ, ԵՈՊԱՏՐԱ)

Պատմական յստակատեսութեամբ հաճելի է վայելել իր  
 դեղօնաձեւը , որուն տաղաչափութեան վրայ կերտել կ'արժէր  
 Արեւելեան Բաղանիք :

Բանաստեղծը արուեստի ծովին մէջ կը շրջի , Աստղիկը  
 լոյսեր կը վառէ իրեն որ ինք զարդագործէ Հեքանուսկանը ,  
 ուր չէր քէղուհին կը սարէ պալատին մէջ , արքային դէմ : Հող ,  
 լեզուի բացառիկ դիւրավարժութիւնը կը վերացնեն ընթեր-  
 ցողը , քնարին բուն նկարագիրը կ'արտացոլայ : Արեւելեան  
 Բաղանիքի նկարիչը նոյնքան հոծ է Հեքանուսկանին մէջ ա-  
 ստանց խճողումի : Պարերը կը նկարագրուին ինչնատիպ եւ  
 թարմ տողերով .—

Հագիւ եղած շամբ ճկուն , կ'ըլլայ բարտի մ'աննըւան .  
 Եւ մերթ ցընցուն ոստումով կարծես իրանն հրաշագեղ

Յանկարծակի կը փշրէ փոշիաբար զերդ բիւրեղ .  
 Ու հազիւ հազ դաշնակում մ'իր մարմինէն եղծանած՝  
 Նոր թերումով կ'յօրինէ նո'ր դաշնակում մը յանկարծ :  
 Մարգարտայեռ մուճակներն , ուր ոտքերն իր ծուլուեր են ,  
 Կարծես հազիւ կը հրպին գորգին վըրայ նըկարէն .  
 Ուր իր յատուկ նախրանքէն կ'առնու հով մ'այնքան ծաւալ  
 Որ կը մարէ երբեմն հա'պ , ու կ'արծարծէ երբեմն ալ  
 իր ականջին օղերուն փայլատակները լազուարթ  
 Ու իր բոլոր քայուերուն նառագայթները զըւարթ :  
 Աւ կը պարէ , կը պարէ , կատաղօրէն կը պարէ ,  
 Միշտ հըպատա'կ ցոփ կամքիս՝ որ զինք ընդ միշտ կը վարէ :  
 Երբ կը տեսնէ իր աչքով մերկութիւնն իր բիւրեղեայ՝  
 Հրապոյրներու այդ բոլոր շուայման վըրայ կ'ամըջնայ ,  
 Այն ատեն ցունց մը կուտայ փոթորկալից մազերուն՝  
 Որոնց քամին թափընթափ կ'երթայ մարել սըրսըփուն  
 Ադամանդէ ջահերն այն մարմարակերտ պալատին ,  
 Մարմարակերտ պալատին ձեղնալոյսերը ունտին :

(ՇԵՅԱՆՈՍԱԿԱՆ)

Որքան խորունկ նոյնքան յստակ է բանաստեղծը , կրկու առաւելութիւններ կը միանան , կ'արժէ մտածել որ Հեքանու Երգերը երբեք չպիտի մնանին ժամանակի հոլովումով : Քերթողը հասարիս մէջ խորունկ տաղերուն կուտայ զարմանալի յստակութիւն մը Հիւկօի նման : Անշուշտ մնայլ ոճը գրական նկարագիր մըն է զոր տհասները միայն կը խժրժեն :

Կ'արժէ նկատի առնել նաև գլխաւոր պարագայ մը , գրական հակադրութիւնը (contrast), որուն շնորհիւ կրցած է վարուժան ըլլալ թէ՛ խորունկ և թէ՛ յստակ : Հակադրութիւնը արդէն Հիւկօի յաջողութեան մէկ դադտնիքն էր , վարուժան այդ դադտնիքը ունի Եփրեմ մեծաշուք քերթուածին մէջ .—

Կարիպալտին՝ Հռովմինն է, եւ Բոնապարդ՝ Ոճիրին. —  
 Կը պատկանիս դո՛ւն միայն ազատութեան Ոգիին:  
 Ըզբեզ խրճիթ մը ծընաւ, հայ վիշտը քեզ օրօրեց. —  
 Այդ վիշտին չափ եղար մեծ:

Մարմինդ՝ Անդունդը առաւ, սուրըդ առաւ եհովան,  
 Անունդ առաւ՝ ապագան:

Ահա կը տարուինք Հիւկօի քնարերգած Նաբուլէոնի դաւ-  
 կին, Աւստրիացիներէ դերուած. —

Արծիւն առաւ Անգլիան, եւ արծուեծագն՝ Աւստրիան:

Դրականութեան մէջ ոճի այս գաղտնիքը փրկարար դեր  
 կը կատարէ յափրացած մտքին համար որ անզգալարար ա-  
 ւելորդարանութեան կը դիմէ: Հակադրութեան գաղտնիքով  
 գրողը, մանաւանդ բանաստեղծը արթուն կը մնայ միշտ:  
 Ահա թէ ինչո՛ւ համար նոյն ուղղութիւնը փորձաքար մըն  
 տաղաչափութեան: Բացատրուած ձեւը արդէն մեծութիւն  
 կը ներշնչէ գրողին մանաւանդ այն պահուն երբ տաղանդին  
 երաշխիքը բերէ: Տաղաչափութենէն զատ կայ ուրիշ ձև մը,  
 ազատտողեան ոտանաւորը, vers libre, որուն վերջնական  
 ձեւը չէ ճշդուած գրական աշխարհին մէջ, թէպէտ վէո-  
 հառն կուտայ անոր որոշ վիճակներ: Ինչ որ ալ ըլլայ, իմա-  
 ցական քերթուածները ամէն ձեւովը կը կարդացուին ամէն  
 երկինքի տակ: Վարուժանի Ասուծոյ Լացը անոնցմէ է. —

Երբ միջոցին մէջ տեղի տրուած չէր  
 Դեռ ոչընչութիւնն այս Տիեզերքին՝  
 Եւ կարծեմ Աստուած բան մը կ'որոնէր՝  
 Որ դարման ըլլայ տաղտուկի վէրքին:

Շրջան ըրաւ Ան միջոցը մէկէն,  
 Եւ հոն իրմէ զատ բան մը չը գրտաւ,  
 Էութիւն մ' ուզեց իր էութենէն. —  
 Իր էութիւնն իր արծագանգն եղաւ:

Յետոյ դառնալով, տրխուր եւ մորմոք,

Համբր լըռութեան եւ կոյր Ոչինչին՝  
Ան իրենցմէ ինչ մ'ուզեց, եւ անոնք  
Ինքզինքնին տըւին, կամ բան չը տըւին:

Երբ Անհունն այսպէս դատարկ գրտաւ Ան,  
Իր մէջ ըզգաց խոր, դառնակըսկիծ ցաւ,  
Եւ լըռութեան վրայ ու ոչնչութեան  
Յուսահատութենէն սրրտաբուղխ լացաւ:

Վարն իր արցունքներն ուզածը տըւին՝  
Կազմելով մէյմէկ աստղեր նրկընքին.—  
Եւ Բանաստեղծին նրման Աստուած ալ  
Որպէսզի ստեղծէ՝ հարկ եղաւ նախ լալ:

(ԱՍՏՈՒԾՈՅ ԼԱՅԸ)

Գողգոթայի Ծաղիկներ գլուխին մասս կազմող իմացական  
քերթուածներէն է Աստուծոյ Լացը, կը յաջորդէ Ճանապարհ  
Խաչին լուսաւոր էջը, մեր Բանաստեղծը ինքնեկ ստղերով  
և միութեամբ ցոյց կուտայ թէ մարդը Աստուծոյ չափ կը  
տառապի.—

Ճ Ա Ն Ա Պ Ա Ր Հ Խ Ա Ջ Ի

Ո՛վ մատնուած Յիսուս,  
Դուն որ փրշապատ զըլուխ մ'ունեցար՝  
Դըթա՛ իմ զըլխուս.—  
Դերաներըդ զայն քարկոծեցին յար  
Եկեղեցիին սալաքարերով:  
Վէրքերէս բողխող ըղնղըս կերան  
Իշամեղուններն ամբարըշտութեան:  
Տե՛ս, մազերուս վրայ եղեամն է նրստեր.—  
Ես շա՛տ եմ տանջուեր:

Տառապա՛ծ Յիսուս,  
Դուն որ ունեցար արտասուող աչքեր՝  
Դըթա՛ աչքերուս.—



Անոնք աւելի արտօ՛սր են քամեր  
 Քան թէ խրմեր լոյս: Դագաղներու վրայ  
 Միշտ մահն են հրակեր մոմերու հետ շէջ:  
 Բիբերս են ինկեր վիշտի հորին մէջ:  
 Տե՛ս, կոպերուս վրայ անիւն է ցանուեր.—  
 Ես շա՛տ եմ տըքներ:

Ապտակուա՛ծ Յիսուս,  
 Դուն որ ունեցար ձեռքեր կայ ու կապ. . .  
 Գրթա՛ ձեռքերուս.—  
 Ափերս են տաղեր պայտերով հրատապ,  
 Եւ մատերներէս, ըստինքներու նման,  
 Արիւնս են կըթեր: Դաստերս ճաթած են  
 Կըրելէն երկաթ, հողը փորելէն:  
 Տե՛ս, եղունգներըս սիրտս են յօշոտեր.—  
 Ես շա՛տ եմ լացեր:

Թըքնըւա՛ծ Յիսուս,  
 Դուն որ ունեցար ձաղկըւած կողեր՝  
 Գրթա՛ կողերուս.  
 Անոնք աղբիւսի վըրայ են պառկեր՝  
 Եւ վիշտը քունէն ճանչցեր յաղթական,  
 Բուծաներ են միշտ գըրկած Մահը կոյր՝  
 Իրենց քաղցն անոր տալով կերակուր:  
 Տե՛ս, փողոցի շո՛ւն մ'է կողըս պատուեր  
 Շա՛տ եմ հալածուեր:

Մահապա՛րտ Յիսուս,  
 Դուն որ բեւեռուած ոտքեր ունեցար՝  
 Գրթա՛ ոտքերուս.  
 Արիւն սրակելով թափառեցան յար  
 Աւերակներու եղիններուն մէջ:  
 Զանոնք չը լըւաց ձեռք մը սիրական  
 Ո՛չ մէկ լականի մէջ ասպընջական

Ոտնամատերէս կ'հոսին մոխիրներ.—

Ես շա՛տ եմ քալեր:—

Ո՛վ խաչուած Յիսուս ,

Դուն որ նիզակուած սիրտ մը ունեցար՝

Գըթա՛ սրբտիս յոյզ .—

Օր մ'որ անոր մէջ բարախեց աշխարհ՝

Յոյսին տեղ այս օր ոչի՛ նչը կ'ապրի:

Սիրտըս սափոր մ'է , աճիւնս՝ անոր մէջ ,

Ձոր պիտի հովե՛րն առնեն մահէս վերջ:

Տե՛ս , տե՛ս , սըրտիս վրայ դաշոյն մ'է խրրուեր .

Ես շա՛տ եմ սիրեր:

Իմացականութեամբ օծուած է նաև իր Տրտունջքը , խորհողը վիճակակից է Եղիա Տէմիրճիպաշեանին , որուն հետ կնոջ պիտի մօտենար կարծես Պուտաային քարոզած ծաղիկովը միայն .

Բերնիս վըրայ հաճբոյրն իր ուրիշ համբոյր մ'համբուրեց .

Սիրտը սըրտիս վրայ ուրիշ սըրտի մ'համար բարախեց:

Եւ , ո՛վ Սարսափ , երբ եկաւ բազուկներուս յանձնըւիլ՝

Իր մարմինէն ես օտար անկողնի հոտը առի :

(ՏՐՏՈՒՆՁՔ)

Կը յիշեն զրասէրները թէ Եղիա հոգեւին յանձնուած էր օտարուհիի մը զոր ոգևպաշտ իմաստասէրը պահապան հրեշտակ կ'անուանէր : Վարուժան Տրտունջքով զպալարար Եղիայի դիմայեղունները կը պատկերացնէ իր անձին վրայ : Լաւ էր որ ըստ իր սովորութեան դանազան մասերու վերածեր լաւագոյն և երկար նոյն էջը , յանգերու անխուսափելիութեամբ , ինչ որ տաղանդաւորի մը համար հեշտին է : Եւ սակայն Հայ Բանաստեղծը ուղեր է անքննելի միայլ անհաւասար արժէքով : Վերջին մասերը առաջիններուն չափ չեն հետաքրքրեր ընթերցողը , բայց կը բերեն տաղանդին կնիքը :

Հերանոս Երզնը ամբողջովին իրենց անունին համապա-

տասխան նիւթեր չեն պարունակեր, առաջին մասերը հեթանոս, վերջինները ընկերային են: Ընկերային նիւթերը մեր մէջ ոչ մէկ տեղ այնքան դեղարուեստական բժախնդրութեամբ յղացուած են որքան իրմով: Մեքենաները, Իադարը, Մեռնող Բանուորը յաւերժական են: Արուեստը հող համաշխարհային է, խորքին մէջ՝ տոհմիկ: Տոհմիկ դրոշմը կը տեսնուի մէն մի էջի վրայ, նոյն իսկ Խորագին տողերու տակ:

Երբ յոյսի Ուղտն, ա՛լ խոնջ, ծալլէ ծունգերն իր  
 Սնապատին մէջ օրերուս անծաղիկ,  
 Այն ժամանակ, մտերի՛մ հոր,  
 Ամէն անոնք, որ ինձ դափնի կը քաղեն,  
 Պէտք է դառնան, թող դառնան,  
 Շուրջն եզերքիդ մեռելապսակս հիւսելու.  
 Բանզի այն օրն, անիծելով հայրական  
 Համբոյրը կոյր՝ որ եղաւ  
 Իմ սեւ սերմիս առաջնորդ:

(Լ.ՔՈՒՄ)

Գրական գործերու մէջ առհաւուրթիւնը կարեւոր պարագայ մըն է որ կը շփոթուի շատ անգամ հայրենասիրութիւն բառին հետ: Արդարեւ, երբեմնի հայրենասիրական էջերը — մէկ քանի բացառութեամբ — տժգոյն և չոր բաներ էին: Վարուժան — ինչպէս նոր դէմքերը — չըլլալով այսպէս հայրենամոլ՝ եղած է առհաւական: Առհաւուրթիւնը (atavisme) խորապէս զգացող և ժառանգականօրէն ծննդական գեղեցկութիւններուն տարուող բազմաբաղձիկ կարօտակէզներու մէջ կը ճշգուի, մերթ ողեկոչականով ձուլուած: Առհաւուրթիւնը առաջին գիծն է տոհմիկութեան, այսպէս եղած է ընդհանուր գրականութիւններու մէջ: Երբ խօսքը տոհմիկութեան շուրջ կը դառնայ՝ Վարուժան դայն կ'արտայայտէ սուղղակի զգացման շերմութեան բարերար ազդեցութեան տակ: Անտիպ ինքնատպութիւն մը կայ Մարնուս Ադօֆը տոհմիկ քերթուածին մէջ, արուեստով և իմացականութեամբ շաղախուած, այսքան պայծառ միսթիքութիւն: —

Մ Ա Մ ՈՒ Ս Ա Ղ Օ Յ Ք Ը

Լիալուսնին դէմ նրստած  
Մամս ալեւոր կ'ընէ աղօթքն իրիկուան:  
Գըլխուն վերեւ սեւ ջըղջիկներ կը դառնան.  
Կ'ապրի սըրտին մէջ Աստուած:

Շրթունքներն իր (սո՛ւրբ վարդեր  
Թողմած առջեւն Աստուածամօր խորանին)  
Կը շարժին ա'յնքան մեղմօրէն՝ որ հոգին  
Իր ըսածն ի'նք չի լըսեր:

Յո՛ւրտ շողին տակ լուսինին  
Հանդարտօրէն վար կը կախուի գլուխը ծե՛ր,  
Տըխրահա՛կ, խո՛նջ, իբրեւ նմանիլ ան ուզէր  
Մեր այս դարուն հաւատքին:—

Բայց ո՛հ, զիտեմ, դուն ծարաւ  
Ես երկինքին՝ որուն մինչ ցարդ հաւտացիր,  
Որուն համար մարմինըդ միշտ ծընրադիր  
Հոգւոյդ առջեւ ապրեցաւ:

Երկինքը քո՛ւկդ է, ո՛վ մամ,  
Քանի որ ծեր բիրերուդ մէջ դեռ անեղծ  
Մընաց անոր կապոյտն՝ ամէն բանէ զերծ.  
Քանի որ, մայր բարեխնամ,

Արիւնիդ հետ միասին  
Ծիծերրդ հինգ զաւակներու քամեցիր,  
Եղար աննենգ. եւ բարձէդ մաս չը տըւիր  
Օտարներու գըլուխին:

Եւ հիմայ որ, ո՛վ հանիս,  
Ճերմակ մազերդ լուսնին խառնած՝ մեր կրօնքին  
Փուլերուն վրայ կանգուն կ'մեռնիս ծեր եւ կին՝  
Պիտ՝ վաղը կո՛յս վերածնիս:—

Վարուժան վէպերուն պէս կը բերէ քնարի տիպարներ,

հող ազգակցական կապ մը կայ, աղօթող մամը միւսոյն տիպարն է հին սերին մէջ: Բանաստեղծին իսկական նկարագիրը այսպիսի յղացումներուն մէջ կը կայանայ, երբ մանաւանդ յղացումը սոսմիկօրէն արուեստատ և իմացական դրոշմ ունի.—սիրահար մամն ալ երբեմնի աղօթող տիպարն է, կերպով մը կարելի եղաւ գտնել Վարուժանի իսկատպութեան աղբիւրը.—

Ն Ի Ն Ս Է Ր

Մամ ու ծերուկ, երկու թարշամ հոգիներ,  
Եկան նըստիլ շուքին ներքէւ ծիրանւոյն՝  
Որուն քընքոյշ ծաղկներն էին զարդարեր  
Օր մը գըլուխը հանւոյն:

Անոնք սաստիկ կը դողդոջեն՝ իբր ըլլան  
Սիրահարներ յանկարծ իրար հանդիպած.  
Բայց քովերնին՝ ցուպն՝րն իրենց լոկ կը մնան  
Խոտին վըրայ գըրկըւած:

Չունին այլեւս հըրդեհումներն արիւնին,  
Անոնց հոգին համբոյրի երգը չունի.  
Ոչ ալ յոգնած կողերնուն մէջ կը ծաղկին  
Սերմերը՝ նման շուշանի:

Պապուն նայուածքն աչքներուն մէջ մամուն  
Կը նուաղի՝ չըթափանցած դեռ սըրտին.  
Եւ կը մըսի զաղջ ճառագայթն արեւուն  
Անոնց ծոցին մէջ ցըրտին:

Եթէ փորձե՛ն իսկ տարփանքի փորձ մ'անմեղ  
Գարնան դըրդիչ բուրումներէն սըրարբած՝  
Կը փըշրի՛ սիրուն՝ իբրեւ բաժակ մը բիւրեղ  
Յանկարծ կրակին դէմ ճաթած:

Վարդերն անցա՛ն, անցան բոցերն այտերէ,  
Սէրն անոնց կայծ մ'է մոխիրին մէջ թաղուած՝  
Չոր յիշատակն իր շունչով իսկ կը մարէ  
Վայրկեան մ'հազի՛ւ արծարծած:

Ու հիմակ այս գարնանային իրիկունն՝  
 Երբ կը բուրեն կինամոնները բըլրան՝  
 Կ'իյնայ անոնց միտքը հին սէրն յանկարծոյն՝  
 Հին աղօթքի մը նրման :

Եւ կը յիշեն, շուքին տակ նոյն ծիրանւոյն,  
 Մեռած գրգուանքն, իրենց տարփանքը հեշտին,  
 Յետոյ համբոյրն ու յետոյ ճի'չը մամուն՝  
 Եւ իրարու կը ժրպտին... :

Բանաստեղծին արժանիքը ինքնեկ տողերուն մէջ է, խօսքեր կան դոր նոր բերանէ կը լսենք, կը համարենք հում, անտիպ ինքնատարութիւն : Վարուժանի տոհմիկութիւնը որքան ալ թեթեւ նիւթերու հետ մտերմանայ՝ խորապէս տպաւորիչ է որովհետեւ միւս կողմէ առհաւական է : Հայ ինքնատիպ բանաստեղծը առհաւական տպաւորութիւններու պատճառաւ երբեմն աշուղական շարժումներ կը կատարէ արդի քնարերգութեան տուեալներով : Կը բերէ ասութիւններ և դարձուածքներ որ զեղային են, տեսակ մը arménisme, կ'եռան սիրտէ սիրտ բնական դրոշմով : Խիստ ցանցաւորէն կը հանդիպինք միայն սա տեսակ բռնաճիւղ և անյաջող նկարչութեան . —

Նըւագէ՛ կիթառդ, ո՛վ իմ Մելինա,  
 Լուսինն է ցաթեր, վէրքի պէս, լանջքիս,  
 Երգդ, իբրեւ սպունգ, կը ծրծէ ահա  
 Աստղերն ևրկընքին, արցունքներն աչքիս :

Capriceը ամէն գրիչներու մօտ ընդհանրապէս քիչ թէ շատ տեղ մը ունի : Վարուժան իր մեծաշուք էջերուն քով շատ քիչ անդամ կը կիրարկէ դայն, յետոյ իր արուեստովը փրկելով : Չափաւոր են իր դրական capriceները :

Բանաստեղծին միւս այնքան յաջող կտորներուն մէջ կայ դրական այն նկարագիրը որ սլարդապէս ծննդական է, այսինքն հոն կայ տեսակ մը հոծոյթ գիւտերու որոնց գերին

չէ, գիւտերը իրեն գերի են: Հոծոյթ խճողում չի նշանակեր,  
 ընդհակառակն քերթողը գիտէ իր հարստութեան առջեւ բա-  
 նալ զատ զատ անկիւններ: Եթէ Լերմոնտովի Դասայիֆ Չեր-  
 ֆեզը տրուած ըլլար Վարուժանի քնարով նկարագրել՝ գուցէ  
 Լերմոնտովի էջը հերձուած մը համարուեր հայ բանաստեղծին  
 մօտ: Եւ արդէն այս առատութիւնը և խստութիւնը տեսնուած  
 է արեւմտեան գրականութեան մէջ ալ գլխաւորաբար անոնց  
 քով որ յանդգնօրէն մօտեցած են արեւելեան կեանքի նը-  
 կարչական մանրակրկիտ դրուագներուն, ճաշակելու համար  
 անոնց մեղրը իրենց ամբողջ թոյներով: Հեթանոս Երզնու  
 հատորը մէկ բան միայն կը յայտնէ, — Վարուժան մտաւորա-  
 կան բանաստեղծ մըն է քան պարզախոհ զգայալար, զգայամու-  
 մը: Քնարի մասնագիտութիւն մըն է պարզապէս Մեռած Աստ-  
 ուածներուն ուղղուած քերթուածը: Նոյնքան միակը կը թուի  
 ընկերային պատառիկներ հրամցնելու մէջ: Բայց Վարուժա-  
 նի քերթողական նկարագիրը տոհմիկութեան մէջ կը կայա-  
 նայ ընդհանրապէս, որով արդէն տուած է մեզ Հովիւր, Վա-  
 հագն, Յաղթողը, Պապս և Հայրենի Լեռներ՝ այլապէս մեծաշուք  
 քերթուածները ասկէ առաջ: Հին հայկական կեանքի պաշ-  
 տումը տեսակ մը հայաստանական հելլէնականութիւն մըն  
 է, ուրկէ կուգայ մեր բանաստեղծը երբ մանաւանդ նոր  
 դասականութեամբ կը տաղաչափէ: Համազօր շունչէն շունչ  
 մը կայ իր Բանուորուհին տաք քերթուածին մէջ, Վարուժ-  
 նակիսի տաք շունչով օծուն: Առանց այս վսեմ դրոշմին՝ ըն-  
 կերային նպատակով յղացած էջերը Ռուսահայ սկսնակ բա-  
 նաստեղծներու համասեռ էջերուն պէս չոր և ցրտին աշխա-  
 տութիւններ պիտի համարուէին: Եւ տխուր վախճանին չի  
 յանգելու համար, իր հայաստանական հելլէնականութիւնը  
 գաղտագողի կը փոխադրէ յիշուած սեռերուն մէջ, — այսպէս,

ԲԱՆՈՒՈՐՈՒՅԻՆ

Պատուհանիս տակէն, ամէն առաւօտ,  
 Ուրուականի պէս կ'անցնիս,

Եւ կուսագեղ գըլուխիդ վրայ կ'արտասուէ  
Տերեւաթափ վարդենիս:

Լուռ թաղին մէջ կը լըսեմ քայլդ, ու զարթնող  
Շունն՝ որ վըրադ կը հաչէ՛.

Կամ կը լսեմ քունիս մէջէ ձայնն հազիդ՝  
Որ ծոցդ աղուոր կը տանջէ:

Եւ կը խորհիմ թէ քընատ ես եւ նօթի.

Իրանդ հովէն կը դողայ,

Եւ կը նըստի գանգուրներուդ վըրայ, քո՛յր,  
Եղեամն իբրեւ շափիւղայ:

Կամ մուճակներդ են պատըռտած. փողոցին

Ջուրն անոնց մէջ կը ճողփայ,

Կամ ետեւէդ շըւայտօրէն կը սուլէ

Սըրիկայ մը անոպայ:

Եւ կը խորհիմ թէ, տան մէջ, մայրդ է հիւանդ.

Ցամքած է ձէթն ալ ճրագին.

Ու դուն կ'երթաս գործատան մէջ աշխատիլ

Լոյսին համար ու կեանքին:

Ես կը խորհիմ — եւ խենթի պէս կը բաղձամ

Վար իջնել, քո՛յր դալկադէմ,

Քո՛վըդ իջնել, համբուրել ձեռքըդ նիհար,

Եւ հըծծել. — «Քեզ կը սիրեմ:» —

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,

Կը սիրեմ կուրծքըդ քանդուած՝

Որուն մէջ դեռ կը յամառի Սէրդ երգել

Արտոյտի պէս սըրարբած:

Կը սիրեմ քու անօթութիւնդ ու ծարաւդ,

Եւ ոսկորներդ ուժասպառ.

Ես կը սիրեմ կոյս աղիքներըդ ցամքած,

Մագերուդ սուզն՝ ուսէդ վար:



Եւ ես կ'ուզեմ ամփոփել քեզ սրբտի՛ս վրայ  
Տատրակի պէս տարագիր ,  
Տալ ուժըս քեզ, մըրցանակներըս փառքի ,  
Եւ ազգանունս անբասիր :

Կուրծքըս վահան ընել կուրծքիդ նըշաւակ ,  
Եւ քօղն ըլլալ պատիւիդ ,  
Կրանիթէ բազուկիս տակ պաշտպանել  
Սեռդդ ու գեղդ անժպիտ :

Կ'ուզեմ քեզ տալ ինչ որ պայքարն ինձ տըւաւ ,  
Ինչ որ խլեցի մարտերով ,  
Քեզ պըսակել արիւնիս գոյնն ունեցող  
Յաղթանակիս վարդերով :

Միայն թէ դուն չըլլաս տժգոյն ու քաղցած ,  
Արեւուն տակ չը հազաս ,  
Մօրդդ վերեւ չի մարի ճրագն, ու , ո՛վ քոյր ,  
Ի՞նչ գործատուն ալ չերթաս :

Ընկերային նիւթերը իրենց չորութիւնէն փրկելով վրձնի  
Քրանգներուն կը յանձնէ : Իր Մեհենաները, Դադարը էմիւ  
Վէոհառնի ընկերային վեհապանձ տաղերը կը յիշեցնեն :  
Պելճիքացի երկու անուանի գրիչներ՝ Մէթէրլինկ և Վէոհառն  
իրենց արուեստին լոյսերը կաթեցուցած են Վարուժանի  
արուեստին մէջ : Առկայծ ձրագը անոնց շունչը կը պահէ .—

Յաղթանակի գիշերն է այս տօնական.—

Հա՛րս , եղ լեցուր ճըրագին :

Պիտի դառնայ կռիւէն տըղաս յաղթական.—

Հա՛րս , քիթը ա՛ռ պատրոյգին :

Քերթուածները հեղինակին ուրիշ էջերուն հետ մտերմա-  
կան կապեր ունին : Քերթողը իրասպաշտական խուլ աղա-  
ղակները կրցած է պարտիւել միսթիք ջրդեղումներով : Կեր-  
պընկալ կեանքերէն և կրօններէն անկախ համարուած ի-  
մացումներ ,— յոյժ գեղապաշտութիւն , հեշտանք , ուժի փա-

ոարանանք , բնութենապաշտ խոկումներ , զինարբուք , հսկումներ , բնազդական նկարագրութիւններ ևն . հեթանոսութիւններ ևն որոնցմէ կ'օգտուի վարուժան , իր ողեկոչական ուղղութիւնը կը փրկէ զանոնք :

Ահա առանին կեանքերէն անկախ հեթանոսավայել պատակներ : Բացլանջ էջեր կուտայ քերթողը մեղի զոր հարկ է վերագրել որոշ կեանքի մը շրջանին : էջերուն զրական արժէքն է որ միայն փարթածութիւններ կ'ապահովէ Բնարէ վէպին : Գինարբուքի սեղաններէն նմուշներ , —

Գ Ի Ն Ա Ր Բ Ո Ւ Ք

Սըրահն է լո՛ւռ : Կոչնականներն հեռացան :

Ջահերն ոսկի դեռ կը վառին մոլեգնած ,  
Եւ կը հեղուն , սեղաններուն վրայ անձայն ,  
Արեւն իրենց երակներուն բորբոքած :

Վինը լըռեց : — Կը թափառի նըւաղուն  
Երզն իր վերջին՝ զոր հարբած սիրտը չըմպեց :  
Անոնց բերնին վըրայ եւ ցոփ աչքերուն  
Կը սըփուէ քունն իր չըղջիկի թնւը մեծ :

Սեղանին վրայ է ամէն ինչ ցիրուցան :  
Սափորին մէջ կ'երազէ մաս մը զինի :  
Նուռ մը լքուած , ախաաներու վէրքեր վրան ,  
Ջահերուն տակ , ջահերուն հետ կ'արխանի :

Եւ կը փրշրի բաժակ մ'յանկարծ , հեծելով  
Լըռութեան մէջ : Ջայն փնդրած էր նախապէս  
Կին մը արդշիւ՝ երբ կը ներկէր կըտղանքով ,  
Գինիին խորն , առամներն իր , բուստի պէս :

Մաղկամանին մէջ կը թոռմին հիրիկներ՝  
Որոնց բոյրով զուսանն եղաւ սըրարբած ,  
Աթոռին վրայ հողմահա՛ր մ'է մոտ ցըւեր՝  
Ջերդ հոլաթեւ մեծ թիթեւնիկ մը մուած :

Դուրս կը հոսին բաց մընացած դուռներէն

Գաղջ ալիքներն հալուէներուն եւ մուշկին,  
 Եւ քրքիջներն ու կրտողուցներն համօրէն  
 Հայլիներու խորութեան մէջ կը մեռնին:

Կ'աշխատին հոն միայն երկու գերիներ,  
 Մին՝ աղախին, միւսը՝ ծառայ մ'անճոռնի,  
 Որ կը խըմէ մերթ աւելցուկ զինիներն  
 Ու կ'համբուրէ ընկերուհին, գողունի:

Նուիրական դրուադներու արդիացումին մէջ Վարուժան  
 նաև առարկայական մըն է: Բնդմիջուած սողերով կը նըշ-  
 մարուի այս, բառերը ոչ աւելի են ոչ պակաս, մէկ սողն  
 իսկ կեանքի փուլ մըն է: Իրապաշտութեան մէջ իր միսթի-  
 քութիւնը թեթեւ ստուեր մ'է լոկ, որքան չէ իր առարկա-  
 յականութիւնը: Եւ Վարուժան մեր մէջ ամենէն առարկա-  
 յական բանաստեղծն է, ուղղութիւն մը որ աւելի յատուկ է  
 իրապաշտութեան: Իմաստը միայն տպաւորիչ ընելու համար  
 կը ճշդուի առարկայականութեամբ և միջին ուղղութիւն  
 մը կը ստանայ միսթիքութեամբ: Գեղարուեստին հետ  
 սերտօրէն աղերս ունեցող հին հսկայազօր կեանքերու  
 հանդէպ եթէ հասողութիւնը պակաս ընթերցողին՝ անկարելի  
 է չընդունել ու չանդոսնել կարգ մը էջեր, ինչ որ մակե-  
 րեսային վերաբերում մը պիտի ըլլար: Լաշագի քերթողա-  
 կան յանդուդն էջը ատոնցմէ է, զոր բացատրեցի Խորհողը  
 անջատ հատուածիս մէջ: Արդարև իր հաստիւն առաջին մա-  
 սերուն մէջ կայ աւելորդ երեւ Քոյրերը որ արհեստական է,  
 վհկային խորհուրդներու թափանցելու մարմաջով դրուած:  
 Քերթողը ապաղայ քննադատներու հանդէպ Մասեանն Ահա  
 էջը կը բանայ, Կը բացատրէ սիրան ու քննադատ գրիչը:  
 Հեթանոս երգերը տաղանդաւոր բանաստեղծին կարա-  
 պանուադն են պարզապէս: Նոյն քերթողագիրքը նահատակ  
 հայ ազգին սուգերուն մէջ արշալոյսներ կը բանայ: Ռ. Չար-  
 դարեանի հարադատ գրիչը հայրենիքի նուիրուած երգերուն  
 մեծութիւնը կուտայ երկու բառով. — «վա՛յ ան պիւլպիւլին  
 որ վաթման չունի, վա՛յ ան վաթմանին որ պիւլպիւլ չունի»:

Եւ Վարուժան եղաւ մեծապէս նոր խաչուած վաթմանին  
 պիւլպիւլը, բաղմաձև գեղգեղանքներով:

## ԻՐ ԶՈՐՐՈՐԴ ՔԵՐԹՈՂԱԳԻՐՔԸ



ԺԲ.

### ” Հ Ա Յ Ի Ն Ե Ր Գ Ը ”

Իր բանաստեղծութեան արուեստը կը դիւթափոխուի « գաւառին մէջ ծաղկած երիտասարդ Վիրգիլիոսը իր մշակականները կուտայ, — Հացին Երգը, — « առէք կերէք » ով նուիրագործուած : Մտադրած էր տալ նաև Գիւնիի Երգերը « արբէք ի սմանէ » ով սրբացած : Անտիպ կը մնան հացին երգերը, մէկ քանի նմուշներ հրատարակուած են հայ պարբերաթերթերու մէջ : Հոն ոճը աւելի հանդարտ, աւելի պարզ, գեղջուկներու միամտութիւնը նախնական պատկերներով կը ծաղկեցնէ : Թելադրիչ ըլլալու համար կ'որդեգրէ նոր դուստներգութեան ձևը, նոր երաժշտութիւններով : Չի հեար, չի վաղեր, հատիկ հատիկ քառեակները կը թափին արտերուն վրայ, գերդ գաւառի պարզ սաղմոսներ, քնարի անդաստաններ :

Եւ գաւառի Որփէոսը քնարը արտօրավայրերուն մէջ լարած խնդրակատար Մուսային կը դիմէ . —

### Հ Ա Յ Ի Ն Ե Ր Գ Ը

#### Մ Ո Ւ Ս Ա Յ Ի Ն

Թէ ջըլապինդ մըշակն ինչպէս կը փարի  
 Իր կոր մաճին : կը պատուէ լանջն հողերուն,  
 Եւ սահանքին տակ արփական շողերուն  
 Ի՛նչպէս կ'ըլլան լերկ ակօսները՝ բերրի :

Թէ շիկագոյն ցորեանն ի՛նչպէս կալին մէջ  
 Կը բըրգանայ, եւ աղօրիք կը մըռնչեն.  
 Ի՛նչպէս կ'յորդի քաղցած խըմօրը տաշտէն,  
 Զոր հուսկ կ'եփեն գեղջուկ փուռին մէջ անշէջ:

Թէ կը օրփուէ Հա՛ցը, Հացը սըրբազան  
 Ի՛նչ բերկանքներ, արարչական ի՛նչ կորով,  
 Սորվեցո՛ւր ինձ, ո՛վ հայրենի իմ Մուսան:

Սորվեցո՛ւր ինձ.— պսակէ քընարս հասկերով,  
 Զի կալին մէջ, զով շուքին տակ ուռիին  
 Ահա կը նստիմ, ու նըլազներս կը ծընին...

Ա Ր Տ Ե Ր Ո Ւ Ն Շ Ր Ա Ի Է Ր Ը

Գիւղակներէն հորիզոնները մինչեւ  
 Կը տարածուի մեր մայրութիւնը հողի:  
 Գարունն եկա՛ւ .— չի բաւեր ծիւնը թեթեւ  
 Ա՛յ ծածկելու մեր մերկութիւնը յողի:  
 Վերադարձէք մեր ծոցը, ո՛վ մըշակներ.  
 Առաւօտներն արդէն Ապրիլ կը բուրեն  
 Սառէն լուծուած կը կարկաջեն առուակներ.  
 Մեր տաք կողէն ծըլաւ նարգիսը արդէն:  
 Մեզի՛ եկէք.— ձեր սերմով լի բուռերուն  
 Մենք կը սպասենք կիներու լուռ ըղձանքով.  
 Ճանանչն արդէն խըրուեցաւ մեր սիրտերուն:  
 Պիտի լեցուին քրտինքներու համրանքով  
 Հասկերը շէկ, ու պիտի որքա՛ն բերկրինք  
 Երբ առջի հեղ խոփը ճըմլէ մեր ըստինք:

Սարսուռները, Տեղին Սիրտը և Հեքանոս Երգերը տալէն  
 ետք նախապէս արդէն մտադրած էր Հացին Երգը գրի առնել,  
 ժառանգական կապն էր ան իր մանկութեան հետ կապուած  
 .— «Հայրս կամաւոր որք մը ըրած է մանկութիւնս, պան-  
 դխտելով Գոլիս, իմ նորածին գիտակցութիւնս մելամաղձիկ

բողբոջում մը ունեցած է դաշտերուն և հովերուն մէջ թափառելով և լսելով դիւային հէքեաթներ ձմրան իրիկունները՝ թոնիրին շուրջը» կը գրէ բանաստեղծը, այսպէս աւելի մը տերիմ նիւթեր ևն իրեն մշակականները.—

Յ Ա Ն Ը

Սերմանողն է.— յաղթահասակ կը կանգնի  
Մայրամուտին շողերուն մէջ ոսկեթոյր:  
Ոտքին առջեւ անդաստաններն հայրենի  
Կը տարածեն մերկութիւննին անպարոյր:

Լի է ամբողջ ցորեններով աստղահատ  
Խորունկ գոգնոցն: Հերկերն հերուան՝ ծարաւի  
Կ'ըսպասեն իր լայնչի բուռին, եւ բուռն այդ  
Արտերուն վրայ զերդ արշալոյս՝ կը բացուի:

Մշա'կ, ցա'նէ.— յանուն տանըդ սեղանին  
Թեւիդ շարժումն անպարագի'ծ թող ըլլայ.  
Վաղը՝ նկատած ցորեններիդ այդ կը թափին  
Օրհնութեան պէս թողնիկներուդ գլուխին վրայ:

Մշա'կ, ցանէ' .— յանուն նօթի թշուառին  
Թող գոգնոցէդ կէս չելլէ ափըդ բրնաւ.  
Աղքատ մ'այսօր ճրագին մէջ տաճարին  
Վաղուան հունձքին համար վերջին ձէթը դրաւ:

Մշա'կ, ցանէ', — յանուն տիրոջ նըշխարին  
Թող մատերէդ յորդին սերմեր լուսեղէն.  
Վաղը ամէն մէկ հասկի մէջ կաթնային  
Պի'տ հասուննայ մաս մ'Յիսուսի մարմէնէն:

Ցանէ' ցանէ', — նոյն իսկ հեռու սահմանէն,  
Աստղերու պէս, ալիքներու պէս ցանէ':  
Ծիտերն ի'նչ փոյթ թէ հատիկներիդ կ'աւարեն  
Տեղը Աստուած պիտի մարգրիտ սերմանէ:

Լեցո'ւր ակօսն, յարդէ' հասկերը բերրի,

Հողին ծոցէն ոսկի լոյսեր թող հոսին:  
 Օրը ահա կ'իրիկնանայ.— կ'երկարի  
 Շուքը թելիդ հորիզոններն՝ աստղային:

Կարճ տաղիկներ պարզութեամբ և ոճի հանդարտութեամբ,  
 միշտ հատիկ հատիկ: Հացի Երգերու մէջ ընդհանրապէս pri-  
 mitif պատկերները կը ծաղկին, առանցքն իսկ է իր նոր  
 գրականութեան.— իր գուսաներգութիւնն ալ հարազատ է,  
 arménisme երով թաթաւուն.— ոչ մէկ կեղծ շեշտ:

Ա Ր Տ Ի Ն Մ Է Ջ

(Կրկներգ)

Հունձք կը ժողովեմ մանգաղով,  
 (Լուսնակը եարս է.)

Ակօս ակօս ման գալով:  
 (Սիրածըս հարս է:)

Գըլխերաց եմ ու բոպիկ,  
 (Անո՛ւշ են հովեր.)

Արտերուն մէջ թափառիկ:  
 (Մազե՛րն են ծովեր.)

Ցորեն, կակաչ, կարօտով,  
 (Կաքաւը կուլայ.)

Կապեցի մէկ նարօտով:  
 (Չեռքերն են հինայ:)

Հասկերուս մէջ, վերեւէն,  
 (Ասուպը անցաւ:)

Աստղեր միւռոն կը ծորեն:  
 (Դէմքը լուսացաւ:)

Քանի՛ խուրձեր՝ շաղերով՝  
 (Վարդերնին թաց է:)

Ես կապեցի խաղերով:  
 (Ծոցիկը բաց է.)

Արտըս խոզանով մընաց .

(Կ'երթայ լուսնակը) .

Դէզերով լեռ եմ շինած :

(Սիրտս է կրակը :)

Մանգաղըս քարին եկաւ

(Եարըս եա՛ր ունի ,)

Քարէն լորիկը թըռաւ :

(Հոգի՛ս կ'արիւնի :)

Մշակներու պարզ հողիին մէջ տաղիկները կը բացուին շինական վարդերու պէս , ազնուապետական ոճը կը թօթափէ գաւառիկ երկինքին տակ , — Աշուղի արուեստը կ'որդեգրէ մշակներուն սրտին մօտիկ ըլլալու համար : Անոնք իրենց զուլալ աղբիւրներուն պէս խօսքեր կ'ուզեն : Մշակին Երգը պարզին վսեմն է , ընազանցութիւնը անոր համար հերձուած մը : Աշուղ ըսի , — Բայց արդի բանաստեղծութիւնը ձեռով և խորքով եւրոպական է , օտար գրականութեան արեւը իր լոյսերուն տակ կ'առնէ շատերս , բայց բան մը կայ որ չի կորսուիր . — ինքնաստղութիւնը : Հայուն իսկական արուեստը աշուղութիւնն է , բայց ոչ այն տափակ , աղճատ , քոսոտ աշուղութիւնը , — բառին բանավարական իմաստով հարազատ բանաստեղծութիւնը : Հայնէ , Միսթրալ և Վէռլէն աշուղներ ևն դարավերջիկ դրոշմով : Բացառիկ ձեւն ու երաժշտութիւնը որ աշուղութեան մէկ տուրքն է՝ կրնայ որդեգրել , պարփակել էն յանդուզն փիլիսոփայութիւնը , դարավերջիկ մօզայիգները : Աշուղութեան ըմբռնումը այս արուեստով միայն կրնայ տոկալ արդի հոսանքներուն մէջ . — վարուժանի աշուղութիւնը գրական աշուղութիւնն է իր հացի երգերուն մէջ , arménismeի դարդեր կան ցեղային թաքուն դրոշմով . —

Մանգաղըս քարին եկաւ ,

Եարըս եա՛ր ունի ,

Քարէն լորիկը թըռաւ ,

Սիրտըս կ'արիւնի :



Գրական աշուղութիւնը իր տաղերուն մէջ պատահական-  
է միայն բայց ինքնահոս.— պատկերոտ ոճով մշակներուն  
սրտին կը մօտենայ.—

Մ Շ Ա Կ Ն Ե Ր

Մշակներն են իմ գիւղիս, դաշտի հզօր զաւակներ,  
Քրրտինքներով մարգարտեայ՝ բընութեան թագն են հիւսեր:  
Կը բարախէ սիրտն հողին իրենց բրդոտ կուրծքին տակ,  
Ու իրենց լայն երակին մէջ կը յորդի արեգակ:

Երբոր քալեն՝ մայր-երկիրն իր արգանդէն կը սարսուայ  
Բայց չի խամրիր ծիլ մը իսկ գարշապարնուն տակ հսկայ:  
Գլուխն իրենց զոր կը հակեն առջելը սուրբ խորանին,  
Պսակուած է միշտ ոսկի փոշիներովը յարդին:

Ակօսներուն մէջ անոնք խինդ կը ցանեն, եւ Աստուած  
Իրենց ճակտին ալօսէն բարութիւններ կը հընծէ:  
Աւիզներուն հոսուն երգն անոնք միայն են լսած:

Եզին շողինքն ի՞նչ փոյթ թէ անոնց ձեռքերը կ'օծէ,  
Եւ ախոռի հոտ կուգայ իրենց նաշխուն լօղիկէն,  
Նախ անոնց լա՛յն ափին մէջ կը ծլին սերմերն համօրէն:

Կենսապաշտութիւնը իր հացի երգերուն փիլիսոփայու-  
թիւնն է: Իր վերջին քերթողագրքին փշրանքները սրտէն  
կը քալին մշակներու անկեղծութեամբ, երկու անկեղծու-  
թիւն կը նայնանան:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ի Լ Ե Ր

Ջեղուն աւիշն հողերուն տակ պայթեցուց  
Սերմերն: Արտերս այս գիշեր  
Կանանչցեր են լուսընկային տակ գարնան...  
— Մայրի՛կ, ինծի ծիլ մը բեր,  
Քրրտինքիս ցօղը վերան:  
Կատաղօրէ՛ն, կատաղօրէ՛ն յորդեր են,  
Տե՛ս, ցորեններն աղածրի:

Դաշտերն հագեր են զըմբուխտէ պատմուհան . . .

— Քոյրի՛կ, ծիլ մը բեր ինձի,  
Եզիս շողիքը վըրան:

Կը զարդարէ ամայութիւնը հողին

Մատդաշ ծաղի՛կը հացի,

Կանանչին մէջ կոշտերը թուխ կը լողան:

— Հարսնո՛ւկ, ծիլ մը բեր ինձի,  
Մատնիրուդ քոյրը վըրան:

Ծիլ արտերուս մէջն է ծըլեր նըշենիս,

Հոն միս մինա՛կը ծաղկեր . . .

— Մայրի՛կ, քոյրի՛կ, հօտա՛ղ, հարսնո՛ւկ սիրական,

Բերէք անկէ ծաղիկներ,

Բերէք բոսոր ծաղիկներ,

Հընձուորին յոյսը վըրան:

Յորենարտը ծովացեր է հասկերով, պատկերները թելադ-  
րական են .

Հովե՛ր կ'անցնին.

Ու ցորեաններս շուշիկ յուշիկ կ'արթըննան.

Իրենց խորքէն կը հոսի դող մ'անասահման,

Գեղազալար կողերն ի վար բըլուրին

Մովե՛ր կ'անցնին:

Հովե՛ր կ'անցնին

Ա՛յնքան կը յորդի, կը կատողի դաշտը յուռթի՛

Որ պիտի հոն արածող ուլը խնդդի:

Գոգին մէջէն ալետատան հովիտին

Մովե՛ր կ'անցնին:

Հովե՛ր կ'անցնին,

Ու ցորեանին պատմուհանները ծրփուն

Մերթ կը պատուին, մերթ կը կարուին փողփողուն . . .

Ըստուերի մէջ, լոյսերու մէջ փըրփըրազին

Մովե՛ր կ'անցնին:

Հովեր կ'անցնին .—

Ջրմրուխտներով կը ծրփայ դաշտը անհուն:

Ծիտը կ'երգէ թառած հասկի մ'օրօրուն՝

Մինչ իր տակէն ցորեններու մոլեգին

Ծովեր կ'անցնին . . .

Հովեր կ'անցնին . . .

Բարձրները՝ անջատօրէն առնուած՝ կարելի է աւելցնել իր հացի երգերուն: Բանաստեղծը հոն ինքնատիպ է, ինչպէս Առաջին Ծիղեր և Անդաստան քերթուածներուն մէջ:—

Բ Ա Ր Տ Ի Ն Ե Ր Ը

Տանս առջևի ջրրհորին քով  
Պապս է տնկեր զոյգ մը բարտի.  
Լոյսն Աստղիկին, դողդոջելով,  
Անոնց վրայ նախ կը կաթի:

Ա՛յնքան մօտիկ են իրարու՝  
Որ նոյն սիւքով կը թըրթըռան,  
Մէկն իր երգը երբոր թողու՝  
Միւսն իր շունջով կ'աւարտէ զայն:

Մըրրիկներուն մէջ հերարծակ  
Գըրկըւած, խո՛ր, կը հեծեծեն:  
Եւ կը բրզզան լուսնակին տակ  
Փեթակներու պէս լուսնդէն:

Հարսըս ու ես, առանց կրթնած,  
Կը նըստինք, հոն, ամէն գիշեր:  
Տերուներն յար կ'երգեն յուզուած  
Ա՛յն՝ զոր կը զգանք ու չենք ըսեր:

Մազերս անոր՝ երբ մազերուս  
Խառնել կուզայ յանկարծ քամին՝  
Չոյգ բարտիները սիրասոյզ  
Աստղերուն մէջ կը համբուրուին:

Իր տաղանդը ծննդական է, գաւառի գաղպինասուն հայ ժողովուրդին ժառանգական բնատուր ինքնատպութեամբ: Ահա Անդասանը մեր կաթողիկէին մէջ երգուած սուրբ Անդաստանին հետ նոյնացած, կարճ բայց ինքնատիպ մեղեդի:—

Ա Ն Դ Ա Ս Տ Ա Ն

Արեւելեան կողմն աշխարհի  
Խաղաղութիւն թող ըլլայ...  
Ո՛չ արիւններ, քրտինք հոսին  
Հայն երակին մէջ ալօսին.  
Ու երբ հընչէ կոչնակն ամէն գիւղակի՝  
Օրհներգութիւն թող ըլլայ:

Արեւմտեան կողմ Աշխարհի  
Բերրիութիւն թող ըլլայ...  
Ամէն աստղէ ցօղ կայլակի  
Ու ամէն հասկ ծուլէ ոսկի:  
Եւ ոչխարներն երբ սարին վրայ արածին՝  
Ծիլ ու ծաղիկ թող ըլլայ:

Հիւսիսային կողմն աշխարհի  
Առատութիւն թող ըլլայ...  
Ոսկի ծովուն մէջ ցորեանին  
Յաւէտ լողայ թող գերանդին:  
Ու լայն ամբարն աղուներուն երբ բացուի՝  
Բերկըրութիւն թող ըլլայ:

Հարաւային կողմն աշխարհի  
Պրտղաբերում թող ըլլայ...  
Ծաղկի մեղրը փեթակներուն.  
Յորդի գինին բաժակներուն.  
Ու երբ թըխեն հարսերը հացը բարի՝  
Սիրերգութիւն թող ըլլայ:

Հացին Երգերուն կաղմութիւնը — պարզութիւն, միա-  
մտութիւն և անկեղծութիւն — լոյսերն են իր պայծառ

հողիին, ստեղծումի հղօր նուազներ չեն: Բանաստեղծը հայ-  
բենի զեփիւռներուն պէս կը թրթռայ արտերուն վրայ, սր-  
տին լոյսերով ու հարազատ մեռոնով կ'օծէ անոնց մաճն ու  
արօրը, կամն ու կալը, հողն ու ցորենները, — գաւառի ազ-  
գային հարստութիւնը: Կոմիտաս վարդապետ հացի երգերէն  
եօթը քերթուածներ (խորհրդաւոր եօթը) իր անժխտելի հայ  
երածչտագիտութեամբ պիտի եղանակէր, սրբացնելով զանոնք  
իրեններուն քովիկը: Բանաստեղծը մշակներուն նաչխունն  
է, անոնց համար ծնած մոգական բամբերը: Արտերը հա-  
սունցեր են, իր ճակատը հակեր է մշակներու սրտին  
վրայ, —

Հ Ա Ս Ո Ւ Ն Ա Ր Տ

Արտըս ոսկո՛ւն է...  
Նըման բոցերու  
Ցորենն է բունկեր՝  
Առանց այրելու:

Արտըս ոսկո՛ւն է...  
Երկինքն է կըրակ.  
Հողը խարխալած  
Ծրդօտներուն տակ:

Արտըս ոսկո՛ւն է...  
Քառաշար հասկեր՝  
Քառաշար սաթով  
Արեւ են հագեր:

Արտըս ոսկո՛ւն է...  
Բոռ, մեղու, պիծակ,  
Քիստերուն մէջէն  
Կ'անցնին զերդ փայլակ:

Արտըս ոսկո՛ւն է...  
Մերթ կ'ելլէ, հովէն,

Դեղձանիկ մը, թի՛ռ,  
Ոսկեծուփ ծովէն:

Օրճ՛ր, ոսկուն արտ,  
Օր տուր հասուն արտ,  
Գամ ոսկիդ հրնձեմ  
Մանգաղով արծաթ:

Հացին երգերը միամիտ մշակին կենսապաշտ կայծերն են: Արտերը՝ մտքին վառարանները՝ կը բռնկին իր թելերուն տակ: Օտար գրականութեան ազդեցութիւնը կարգ մը պարագաներու մէջ բարերար՝ բայց հացի երգերու համար թըշնամի պիտի ըլլար: Հացերգութեան խմորը ի՛րն է, իր սրտին վրայ եփուն: Պիտի գայ օր մը որ հայ բանաստեղծութիւնը երբեմնի հազներգութեան պիտի վերադառնայ: Մե՛րն է բնագաւառը, մերն են լեռները, մերն է ծովակը, մերն է ամպն ու կապոյտը: Երբեմնի արքաները վիշապաղուն, իր նոր սերունդը նոր քնարաղուն: Բանաստեղծը աղբիւրներու զուլալ երաժշտութեան վրայ պիտի լարէ իր զգացումները, պիտի ծաղկի ապադայ գաւառիկ արուեստը՝ հայ ժողովրդական դիւցաղներգութիւնը: «Արարածներ կան որ դեռ պիտի ծնին քանի Աստուած չէ մեռեր» Պարսկաստանի անուանի քերթող Մայիամին լաւատես մարդարէական շունչն է որ պիտի թաւալի նոր Արևելքին մէջ: Ամբրոտական ի՛նչ շունչ մը գաւառին կը կապէ միշտ բանաստեղծը: Գաւառներուն ոսկի երազը լոյսն ու արի՛ւնն է քերթուածին:

Գափէ շանթանի ներշնչումները մեռած են իրենց ծնելուն հետ: Կեղծ, արհեստական շունչն է ան: Մշտադալար երիտասարդ արուեստը շանհետիւր բունակայութեան շունչին տակ անգամ: Յեղին հսկայ գաւազը՝ Սորենաղին՝ անմահ պատմագրքին սրտին վրայ մանուակներ կը շարէ, Գողթանի տաղերը: Հացին երգերը ծննդական կապով կապուած են անոնց:

Երնէ՛ երան, երնէ՛ երան,  
Յարդը քեզի, ինձի ցորեան:

Ո՞ւր գտնել այս հարազատ տաղին ամբողջութիւնը որ  
կորաւ բանաստեղծին տարագրութենէն ետք :

Նահապետական միամտօրէն խաղաղ դրոշմը կուտայ պար-  
զուկ տաղիկներուն որպէս զի ընթերցողը բնագաւառ փո-  
խադրէ , ինչպէս Լաֆոնդէնի առակները որ ագարակներուն  
հոտը կը բերեն ,—

Հ Ա Ր Կ Ի Ք

Եզներս են խարտեաշ, լոյս ճակատներով,  
Ուրկէ կախած եմ նուսխաներ կապոյտ:  
Գարունի առտուան օդէն են գինով:  
Կը նային , խաղա՛ղ , դաշտերուն անքոյթ:

Ձմեռը զանոնք խարո՛վ սնուցի.—  
Մեհեանին պարարտ կուռքերն են կարծես:  
Իրենց սանտրուած պոչը թաւարծի  
Կը լիզէ կողերնին , անդուլ , օծի պէս :

Կը սիրեմ իրենց նուսը բիւրածալ  
Ռունգերնին տամուկ , բիբերնին խոշոր՝  
Ուր կայ դաշտերուն երազն անայլայլ:

Եւ ճօհքը իրենց . ե՛ւ պոչիւնն հզօր  
Հորիզոններէ՛ն-- երբ կ'երթան անվերջ  
Եղջիւրնին մխած արշալոյսին մէջ:

Ա Ն Դ Ա Պ Ա Շ Ը

— «Եհէ՛ . եհէ՛ . արտերուն մէջ մարդ մարդածայն չը մըտնէ՛ » :—  
Հովերուն հետ սարէն եկող անդապահին աղաղակն է:

Ուսընդանութ պարկը կախած եւ մասրենի ցուպ մը ձեռքին՝  
Տորեններու զմրուխտին մէջ կը թափառի ան առանձին:

Արեւներու մէջ կը լողայ ինչպէս ամրան իշամեղուն,  
Աչքերուն մէջ կը ծաւալի կանանչ երազը դաշտերուն :

Գիշերը մերթ սարին նըստած լուսինին դէմ կ'ածէ սրինգ ,  
Խրրտուիլակը ցանքին մէջէն , միակ ընկեր , կը լըսէ գինք :

Երգերուն տակ անդորրական հասկերն համայն կը ծոցուորին  
 Կը կատաղի՝ երբոր զանոնք իր թեւին տակ լկէ քամին:

Ան սարսափն է բոլոր անոնց՝ որ կ'աւրեն անդ ու անդաստան,  
 Կը խըռովեն շողքն արեւուն, կը կոխկրտեն հացը վաղուան:

Ինչ խլուրդներ է ըսպաննած, եւ պնդագլուխ ինչ գոմէշներ  
 Հարուածներէն իր ճարահատ ճահիճներն են ապաստաներ:

Ան դեռ երէկ քաղուորներու չըքնաղ երամ մ'հալածելով,  
 Հարսի մը ոտքը ջախջախեց սատկած իշու մ'յաղթ ծընօտով:

Ու սարին վըրայ միշտ հովերո՛ւն, հովերո՛ւն հետ կ'աղա-  
 դակէ. —

— «Եհէ՛, եհէ՛, արտերուն մէջ մարդ մարդածայն չը մըտնէ՛ :»

Բանաստեղծութեան աստիճանները ծանօթ են, — ըստեղ-  
 ծագործական, տպաւորական, թելադրական և ենթագիտակ-  
 ցական: Հացին երգերը վերջին դասակին կը պատկանին,  
 ինչպէս իր ծեղին Սիրսը և Հեքանոս երգերը առաջինին: Հա-  
 ցերգութիւնները լոկ մեր գիտակցութեան տակ կ'իյնան, կը  
 մտաբերենք բնագաւառը: Հեղինակին հետ ընթերցողն ալ  
 կը լուսանկարէ արտօրայնքն ու դաշտօրայքը: Հողին բոյրը  
 կը զգաս որպէս զի մտովի հոն տարուիս:

Գաւառին կոյս ներշնչուժը կը բերէ մեզի նոր իրապաշտը  
 հացին երգերով որ յետ մահու էջեր եղան յանկարծօրէն:  
 Բանաստեղծին կենդանութեան պահուն իր ձեռագիր անտիպ  
 մէկ զուտ նկարագրականը ճաշակեր եմ, — հայկական դաշ-  
 տանկարի մը փայլուն եւ իսկատիպ դրուագը:

Կը յիշեմ կարդացած ըլլալ նաև գաւառի գիշերուան  
 նուիրուած այն տաղը որ կը զատորոշուի միւսներէն: Մշակ-  
 ները կը քնանան այն խաղաղութեամբ որ գաւառի գիրհան-  
 ճար Կապոյտի՛նն է, և ուր աստղերը կը ճմլուին անծանօթ  
 ոտքի մը տակ, անհուն կարասին մէջ: Այս արբեցութեամբ  
 ահա կը քնանայ դաւառն ալ, նահապետական գիշերներու  
 վսեմ խաղաղութիւն: Հայրենի երկինքը հայրենի երկիրն է  
 փոխադրուեր, մշակներուն վաղազարթ մրափին մէջ:



## ԻՐ ԱՐՁԱԿՆԵՐԸ

ԺԳ.

Գրեթէ նուիրուած չէ արձակագրութեան, ցանցառ նմուշներ միայն իր ինքնատիպ նկարագիրը կը յատկանշեն, ոտանաւորի մէջ սահմանափակուած միտք մը չէ Վարուժան, և արդէն Բանաստեղծները տաղաչափութեամբ մենաշնորհուած այլամերժ հոգիներ չեն միայն Ամերիկեան գրականութեան արձակագիր վսեմ խորհողը էմիրսըն կրցաւ կշռել արձակին ու ոտանաւորին խորհուրդը. — «Քաղափարական ճշմարտութիւնը ոտանաւորով կրնանք արտայայտել բայց ոչ արձակով»: Եւ գաղափարապաշտ նահատակ հայ բանաստեղծին համար ասկէ աւելի խոհուն դատաստան մը ո՛ւր կարելի էր գտնել: Ծշմարիտ բանաստեղծներուն արձակն ալ արդէն կը տարբերի ուրիշներու արձակէն, անոնք որ խորհուրդը կուտան յանգաւոր՝ կը պարզեն զայն արձակով, մտերիմ ոճերու տակ: Մտերիմ ոճը — ըլլայ ոտանաւորի ըլլայ արձակի — ինքնատիպ գրիչներու յատուկ է:

Օճը Վարուժանի մտերիմ մէկ բառն է զոր կը յեղյեղէ անխտիր: Օճերու խորհրդանշանին մէջ անհունութիւնը համաստութեամբ կը ծուարէր ըստ Պրահմային: Հայ բանաստեղծը թէ՛ ոտանաւորին և թէ՛ արձակին կուտայ մտերիմ ոճեր, ինքնատուլութեամբ օժտելով իր բեղուն գրիչը:

Մտերիմ ոճերը, մանաւանդ գաղափարապաշտութիւնը Վարուժանականութիւն մը կը ստեղծեն Պայրընականութեան նման: Դիտելի է որ Վարուժան արձակին մէջ ռեանաւոր կը խորհի, կրքեմն միայն, ուր ճիղը յայտնի է: Ազգային գործիչ յորելեար Փորթուգալեանի ուղղած ռահվիրանե-

որ մէկ արձակէն այսպէս կ'ենթադրուի: Գրականութեան ապագայ արձակը արդէն դէպի ոտանաւոր չի՞ ձգտիր: Մեր կաթողիկէին սրբազան արձակներէն շատեր յանդանուշ փըշրանքներ են, անսեթևեթ և անճիգ:

Վարուժանի նամակները զինքը կը յատկանշեն, արձակը հոն աւելի կը յաջողի, կը դատէ քան կ'երգէ: Երգերու արձակը և դատողի արձակին նրանգն ու նկարագիրը կը տարբերին անշուշտ: Մէթէրլինկի թատերական ԻՆՖՆԱՅՈՒՏԸ և Ատամ Միցքիէվիչի մէկ քանի Լեհ գեղօնները իր թարգմանութեամբ ընտրողապաշտ արձակներ են, հեթանոս գրականութեան նոր շարժումին ծառայող իր «Նաւասարդ» գեղարուեստական տարեգիրքին մէջ տպուած: Ռուբէն Զարդարեանի ՄԵՂՐԱԳԵՏ բարձրագոյն ընթերցագիրքի առաջին տպագրութեան մէջ նաև Միցքիէվիչի «Ալպուխարա» ինքնատիպ գոհար մէկ էջը Վարուժանի թարգմանութեամբ, բայց անստորագիր: Ինքնագիր արձակներուն մէջ բաղդատարար յուզուուելու ընդունակութեամբ լաւագոյններէն է Վեներիկե Արհնի իր ճամբորդական գրուագը, Բզմիրի Հայ Գրականութիւն ամսագրին առաջին թիւերուն մէջ լոյս տեսած: Ռաֆֆիի մահուան տարեդարձը տօնող Լոնտոնի հայ կազմակերպութեան մասնակցած է արձակ էջով մը, կան նաև իր ցիրցան նամակները: Երիտասարդ իրապաշտը նոր ոգիով ըսկսած էր ծրագրել արձակներ, գաւառի տիպարներ, երբ հնչեցին համերոպական պատերազմին ահաւոր դողանջները:

Գ Ե Ղ Ե Ց Կ Ա Գ Է Տ Ը

ԺԴ.

Անկարելի է չբանալ նոր գլուխ մը, բնորոշելու գեղեցկագէտը և պատմականօրէն յստակատեսը, մեր բանաստեղծին ողն ու ծուծը: Գեղեցիկը ուժին և զօրութեան մէջ է: Միլօյի վէնիւսը, թեւորը կտրուած, միս մինակ կնոջական տիրող գլուխ մը, անիմանալի զօրութիւն մը, ամբողջութենէն զատուած՝ բայց կը տիրապետէ գեղեցկութեան իմաստուն հղօրութեամբ: Հին հեթանոս հայութիւնը գեղեցկութեան զօրութիւններու հետամտեցաւ, Ոսկիամայրը իրեն լծեց ամբողջ մարդկութիւն մը: Նրբութիւնն ու տխրութիւններն ալ հզօր են քանի որ գեղեցիկ են: Գեղեցկութիւն, նրբութիւն և տխրութիւն, անիմանալի երրորդութիւնը հզօրութեան: Ռաֆայէլի կտաւը ժպիտն ու տխրութիւնը գերանուրբ կ'աստուածացնէ: Հրեշտակներու սեւորակ մեծաբաց աչքերը խորունկ լոյսերէ կը ծնին, և տխրութիւնը կը յաւերժանայ Սաչելութեան վրայ: Քրիստոսեայ հանճարը՝ Յիսուս՝ հոն տխրութեան զօրութեամբ աշխարհը կը լծէ իր խաչափայտին: Գեղեցիկը հզօրագոյնս կը մոնչէ Անճելոյի արձաններով: Եւ խաչուած հայութեան թեւորուն տակ կը բարձրացնէ Վարուժան վրէժի և արդարութեան արձանը՝ Նեմեսիսը՝ գեղեցկութեան հզօր նկարագիրը աշտանակելով: Հոն է բո՛ւն գեղեցկագէտը, բայց ո՞ւր: Ոսկեղէն մուրճին տակ քերթողը ձեռքերուն մէջ կ'առնէ ապառաժը, դայն կերտելէ առաջ. —

Չանգուածը այդ ապառաժ մ'էր բարբարոս՝  
Որուն մէջ դեռ կը մընար

Կիսաւեր բոյն մը արծուի.  
 Եւ խորն իր մէկ խոռոչին  
 Օծ մ'էր ծուարած, ու կը ննջէր հանդարտիկ:

(ՆԵՄԵՍԻՍ)

Գեղեցկագիտութեան իր գաղտնիքն է այս.—արծուերո՛յնը և ապառաժին մէջ ծուարող օձը: Յղացման փշրանք մը, ամբողջ հոգին իր մարմարերգութեան: Արծուերոյնը՝ արուեստագէտին թռիչքն է և օձը գաղափարի թշնամին, բանաստեղծին գեղեցկագիտական խորքերը: Հզօրապէս գեղեցիկ է նաև քանդակագործին քունը նրբաւարտ արձանին ոտքերուն տակ որպէս զի գիւտերը հօսին, որպէս զի հարստահարուած ժողովուրդը իրեն դայ, իր քունին մէջ տեսնելով վրէժի արշալոյսներ: Խորապէս յուզիչ է Վարուժանի ըմբռնումը գեղեցիկին հանդէպ: Նախ կ'ուրուագրէ խորքը գրելէ առաջ: Ապառաժին արծուերոյնը և ծուարող օձը բանաստեղծ արձանագործին ամբողջ նեմնախար կ'արժեն: Մովանկարիչ Այվազովսքի կտաւին կուտայ խորք մը, հեռաւոր հորիզոն, անծայրութիւն որ չես գիտեր ուր կ'աւարտի: Աքսորի բերումով հանդիպեցայ քաղաքներու և գիւղաքաղաքներու որ նկարչօրէն անգոհացուցիչ թուեցան, պարզապէս անոր համար որ տեսարանը կտրուկ կ'անցնէր: Քաղաքին քղանցները չէին միանար հեռաւոր խորքերու, կը տեսնէի զայն հարթավայրի մը վրայ կամ ձորի մէջ, կտրուկ միշտ կտրուկ: Հեռաւոր հորիզոններու խտէտը կը բացակայէր միշտ:

Իանիել Վարուժան գեղեցկագիտութեան խորհրդաւոր ձայնն է, գաղափարապաշտութիւնը պատկերներով կը կապէ բարձր խտէտներուն: Երազողը տող առ տող կը ծնի նախ պատկերը յետոյ անմիջապէս խտէտը, քով քովի, միևնոյն ստեղնաշարին վրայ, իր Հայրենի Լեռները նմանօրինակ նմուշ մը կը համարեմ, գեղեցկագէտին խո՛րքն է այս:

## Յ Ս Տ Ա Կ Ա Տ Ե Ս Ը

ԺԵ.

Յստակատեսութեան (clair voyance) տիտանը կը մնայ Շէյքսպիր: Չտեսածը գրելու կարողութիւնն է, պատմական գրուագներու կենսալոյսը: Ամէն տաղանդ Հոոմ կը դիմէ, երեսունէ աւելի են անոնք որ Անտոնիոսն ու Կղէոպատրան կը նկարագրեն պատմական յստակատեսութեամբ: Շէյքսպիր միակը անոնց մէջ, չտեսածը գրելու կարող տիտանը: Ալֆրէտ տը Վինկի Մոփսեսը, և ժամանակակից Ռուս գրագէտ Լէոնիտ Անտրիէվի Կարմիր Ծիծաղը յստակատեսութիւններ են: Այս վերջինը առանց Մանչուրիական պատերազմը տեսնելու հրաշագրեր է դաշն: Սէնքիէվիչ կը գիմէ Հոոմ, Տակիտոսի ներոն պատմագիրքը ուսումնասիրելու, որպէսզի Լեհ գրականութեան մէջ յաւերժանայ Յո՞ Երբասը, յստակատեսութեան գործեր առհասարակ:

Վարուժան յստակատեսութեան դժուարին սեռը ընդգրկած՝ կը խոյանայ դարէ դար, իր յստակատեսութիւնը ուժանթիւններէն կուգայ:

Երեւակայութեամբ իրականին ձգտելու պարագան է վիպականութիւնը (ուժանթիւղմ), այդ ուժով միայն հայ բանաստեղծը կը դառնայ յստակատես: Ռոմանթիկ կ'որակեմ զինքը: Իր յստակատես երեւակայութիւնը սանձարձակ չէ, չի տարածուիր այլ կ'եռայ, կը փրփրի երկու ժայռի մէջ եռացող ջուրին պէս, ինչպէս Պայրընի երեւակայութիւնը զոր Թէն սքանչելիօրէն կը պատկերացնէ: Հայ տաղանդաւոր բանաստեղծին Եիկիտ Տօնեչ դիւցազնավէպին գրելակերպը

ծածուկ խնամութեամբ և խորհրդաւոր նկարագրով կը մտեր-  
 մանայ արդէն Պայրընի Ծովահեկնին : Առաջինը ճիւղամարտ մը ,  
 երկրորդը ծովամարտ մը կուտայ մեզի : Կայ գրականութեան  
 մէջ Վարուժան՝ Ռ. Որբերեանն է, աւելի պատկերոտ :  
 Առհաւուժեան և տխրութեան խորագրած կսկիծը հարուստ  
 պատկերներով կը գրուի , տարբերելով քնարակից եղբորմէն :  
 Յորագրած յափշտակութեամբ կը կարգամ իր Անահիտը , Հար-  
 նը , Յաղթողը և ուրիշներ , յստակատեսութեան կայծերով  
 ոգեզինուած : Իրապաշտ գեղեցկագիտութեան և ումանդիք  
 յստակատեսութեան զմայլելի խառնուրդ մըն է իր Հայրենի  
 Լեռները : Յստակատեսութիւնը հետզհետէ կը ծաւալի մեր  
 մէջ , Ծիւանեցեացու հեղինակը՝ Որբերեան՝ վերջին օրերուն  
 կուտայ նմանօրինակ նմուշ մը , զոր Ա. Զօպանեան Վինսիի  
 միսթիք յստակատեսութեան կը նմանցնէ , ինչ ինչ լեզուի  
 թուլութիւններն ալ մատնանշելով : Ընդհանրապէս Վարու-  
 ժանի գրականութեան մէջ է որ լայն տեղ կը բռնէ յստա-  
 կատեսութիւնը , ուր կը ծաղկի հեթանոս հոգին :



## ԱՏԵՆԱԲԱՆԸ

ԺԶ.

Բանաստեղծին բեղուն գրիչը ծանօթ էր, իր մէջ ատե-  
նարանը յայտնութիւն մը եղաւ: Վերջինը իր կոչումին թէ-  
պէտ անհաղորդ բայց երիտասարդ մտաւորականը յուզուելու  
մեծ ընդունակութեամբ օժտուած՝ պատահօրէն բեմախօսի  
ճախրանքով կ'օրօրէր ունկընդիրները: Սիրտը ամէն ինչ էր,  
իր աստուածը որուն կ'ապաւինէր: Պատմական յստակա-  
տեսութիւնը Վարուժանի գրականութեան վեճ քարը կը  
կազմէր արդէն, բեմախօսը նոյն կայծերով կրնար դէմ առ  
դէմ դալ օրուան մեծ ելեւէջներուն, իր տեսակէտին հաշ-  
տեցնելով զանոնք: Հայ գրերուն գիւտին փառայեղ յորե-  
լեանին առթիւ բեմախօսութեամբ սրտին խաղերը թրթռա-  
ցուց Սահակի և Մեսրոպի անմահ յիշատակին: Յիշատակելի  
կը գտնեմ նաև այն դամբանականը զոր իբրև անդնդային  
հռետորութիւն կը զեղուր համլէթեան ազազակներով, յեղա-  
փոխական գործիչ Սիմոն Զաւարեանի դազադին վրայ,  
աստուածային յուզարկաւորութեան մը իլուր: Բայց Վա-  
րուժան կը Յոգուէր աւելի Բանաստեղծ քան ընկերարան  
հռետոր, որուն փայլուն արդարացնողը ըստ իրեն կը մնար  
անմրցելին Խաժակը, մէկը խօսքի տիտաններէն, մերթ ամ-  
պագոռ մերթ յորդազեղ քնքոյշ աղբիւր, հռետորական մա-  
կընթացութեամբ և միշտ խայտարդէտ ու խայթհամեղ՝  
զերդ արեւելեան իմաստուն: Վարուժան դայն կը համարէր  
այսպէս միակ հռետորը մեր մէջ: Հայ բանաստեղծը բեմա-  
կան ժէսթերու մէջ սոփեստ մը չէր, կը խօսէր երբ սիրտը

ուղէր, որովհետեւ կը հաւատար մեծ լաւատեսութեամբ թէ այս երկրին մէջ օր մը Որմիզդ պիտի յաղթէր Ահրիմանին: Իր գրական խառնուածքը բաղդատաբար կը մօտենար էմիրսընի ստեղծած Հրաշամարդուն քան Գերման փիլիսոփային Գերմարդուն: Հրաշամարդը կը ստեղծէր մարդուն մէջ կատարեալը, մինչ միւսը մարդէն դուրս աստուած մը: Եւ Վարուժան իր գերըմբռնումը տարածեց բեմախօսութեամբ հայ կրթական ասպարէզին մէջ, գաղափարապաշտ ուսուցչի հանդամանքովը:— «Ով ճերմակ քոյրեր, վաղը պիտի ըլլաք կարմիր քոյրեր երբ դաւառ կոչուիք, յանուն հսկայ աշխատանքին:» Պոլսոյ դպրոցասիրաց վարժուհիներու սպիտակազգեստ ընթացաւարտուհիներուն ուղղուած հուսկ բանքէն կը քաղեմ իր գաղափարապաշտութիւնը, Հրաշամարդուն ջատագովականը, կատարեալը մարդուն մէջ, զոր անձնաւորեցինք արդէն:

Զգայուն ճառով մը վեր առաւ նաև Բանաստեղծ Սիամանթօի գրական կեանքին լուսաւոր գիծերը, հայ գրողներու սարքուած ասուլիսին առթիւ:

Թէրզեանական ազգային պայքարները իր օրին դիպեցան, հարկ էր ժողովուրդին տեսլաւորել վարագաթեւ գաղափարապաշտութիւնը հնաւանդ սքեմի մը խօլ հոսանքին դէմ, թէ սքեմը չէր կրնար գերակշռել ազգին ձայնը: Մատը վէրքին վրայ դրած՝ խոյադաւ և հառաչեց երիտասարդ բեմախօսը:

Իր աստեղաբանութենէն ճաշակ մը տայու համար առաւելապէս կ'ընտրեմ իր մէկ իմաստասիրականը զոր խօսած է Պարտիզակի մէջ, Եւրոպայէ դարձին:

## Հ Ն Ր Ո Ս Ը

ճառակ մը Վարուժանի ասեմարանութենէն

Շորէնհատէր երեք գերմարդեր կ'ընդունի.— Սուրբը, Հանճարը, Հերոսը: Ան լաւատեսներուն լաւատեսը կը դառնայ, երբ կ'ըսէ թէ անոնք կ'ապրին կեանքին կատարելու-



Թիւնը և գեղեցկութիւնը, և այս հանգամանքով արդէն կարելի կ'ըլլայ ըսել թէ անոնք կ'ապրին Տիեզերքը. Տիեզերքը որ ի հարկէ ընդունայն տեղը կառուցուած պիտի ըլլար եթէ ոչ ոք գտնուէր զայն վայելող զիտակցարար կամ անզիտակցութեամբ: Խօսինք միայն Հերոսին վրայ: Ան այնքան գերմարդկային յատկանիշներով կը ներկայանայ՝ որ հիները զայն աստուածներու դասին մէջ կը դնէին. հիները իրենց կրօնքը կազմեցին ի յետագունէ և այսպէսով բարձրացան մարդէն հերոսին և հերոսէն Աստուածին: Հելլէններուն դիքը մարդիկ են՝ կատարեալ իրենց մարմնով, կատարեալ իրեց հոգևով, իրենց միտքը ուժի ի՛նչ սաստկութիւն որ յղանար, բազուկնին զայն կը շարժէր: Հոգեկան և մարմնաւոր բոլոր կարողութիւններուն ներդաշնակութիւնը էակի մը մեծութեան առաջին պայմանն է:

Եւ ներդաշնակ ու մեծ էակ մը՝ կեանքին օրէնսդիրն է, ան դիքերու ազդէն է, դիւցազն է, զի անիկա կամ ըսպաննեց վիշապը որ արարչութիւնը կը թունաւորէր իր աւերներով, կամ ստեղծեց պատմութեան ոսկի շրջան մը, կրօնք մը որ ո՛չ թէ միայն կեանքը կ'արօտաւորէ այլ նաև դերեզմանն և վերեզմանին հեռաւոր դաղտնիքը: Այս առաւելութեամբ օժտուած մարդուն մէջ՝ մարդիկ տեսան աստուածի մը սաղմը, և աստուածուհիի մը վարդաբոյր համբոյրը անոր ճակատին վրայ:

Այդ բոլոր հանգամանքով որով առասպելներն ու դրոյցները մեզի հերոսները կը ներկայացնեն, անոնք մարդարէներէն աւելի բան մը ունին: Անոնք փոխանակ միայն աստուածներուն շունչը զգալու իրենց հոգիին մէջ, իրենց մարմնովը իսկ կը հպէին անմահի մը մարմնոյն. վասն զի հերոսը ըլլալու համար հարկաւոր է որ մարմինը հոգիին հաւասար աստուածացած ըլլայ: Մարդարէն ապագան կը տեսնէ. հերոսը կը պատրաստէ զայն: Մէկը օրէնսդէտն է, միւսը՝ օրէնսդիրը. առաջինը Աստուծոյ դեռ չսերմանուած խօսքը կը հնձէ, վերջինը դեռ չհնձուած խօսքը կը սերմանէ. այս վեր-

ջինը այնքան մ'օտ է երկնաբնականներուն՝ որոնց ձեռքին մէջ ստէպ կը խառնուի իր ձեռքը, անոնցմէ կ'առնէ ճօշանը, և սաղաւարտը և լախուրտը և նիզակը և սուրը և անոնց առաջնորդութեամբ կը դիմէ դէպի Յառաջդիմութեան Կոն- ակը: — Հերոսները անլուներն են, որոնց վրայ շրջան կ'առնէ յառաջդիմութիւնը: Եթէ բարեշրջումը իրաւցնէ ա- առանց գիտակից ազդակի կ'իրագործուի դարերու ընթաց- քին մէջ, բայց միշտ հերոսի մը պէտք ունի իր դատավճիռն ընդունելու համար: Տարիները մարգկային մաքին խաղաղ աշխատութեամբ կը սերմանուին, բայց դարերը հերոսի ա- րիւնով կը հասունանան: Իմաստաւէրները և ընկերաբանները կուզան շաղուել իրենց վարդապետութիւններով յառաջդի- մութեան շաղախը, լաւագոյն կենցաղի մը մտատիպարը, բայց հերոսն է, գերմարդը, որ այդ ապագայ լաւագոյն կեան- քին շէնքին հիմունքը պիտի հաստատէ, մարմար մարմարի վրայ պիտի զետեղէ, պիտի տեղաւորէ լուսակառոյց սիւնե- րը, երկաթները պիտի ձգէ որմէ որմ, մինչև որ կերտուի քաղաքակրթութեան տաճարը, սիւները շողան, և խորանը պատրաստ ըլլան ընդունիլ կարենալու համար զազափարին զոհը, և այդ զոհը ինքն է: Տաճարը կառուցանող նոյն այդ հերոսը. իր արիւնը պիտի հեղու սեղանին վրայ իբրև դրոշ- մը խոնարհին տիրապետութեան: Այս գոեհիկ աշխարհին վը- րայ ամէն գերմարդ զոհ մըն է: Եւ առանց զոհի հերոս չը- կայ:



## ՅԵՏ ՄԱՀՈՒ ԷՋԵՐ



ԺԷ.

Ամէն ազգի գրականութեան մէջ յետ մահու էջերը եւ ղերական լոյսերով կը թրթռան: Իննաստեղծը իր նահատակութենէն առաջ ամբողջացուցած էր Հացին Երզը, յետապրող էջեր որուն ինչ ինչ հատուկտորները միայն մնացեր են բռնադրաւումի մը հետեւանքով: Նոյնպէս անտիպ կը մնան գաւառի տիպարները յատկանշող մէկ քանի արձակներ: Ծրագրած էր Գինիի Երզերը «արբէք ի սմանէ» բնարանով, մանաւանդ ազգային նուիրական աւանդութիւններու Հայ Հոմերագիրքը իմ թելադրութեամբ: Ուսուցչութեան բերումով շատ համառօտակի գրած է նաև հայ գրագիտութիւն մը ուսանողներու համար: Թատերական իր մէկ գործը նաև կը մնայ ծրագրային: Դանիէլ վարուժան լայնօրէն բեղուն միտք մը՝ հետու մնաց քանքարաթաքոյցներու հրաժարիմքէն:


Ա Ս Ր Վ





442097





**Տպգր. Մ. ՍԱՆՃԱԳՅԱՆ**  
Պատր Այի ճաստի, Րեփս էփ. խան, Ն.16

**Վանառման կեդրոնատեղին է  
Սաննազնեան Տպարան  
Կը գտնուի նաեւ բոլոր գրավանառներուն իով**